

**Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե**

Ա. Հովսեփյան, Ա. Թամազյան  
Ա. Ղամբարյան, Վ. Շահնազարյան

**ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ  
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երևան - 2015

## Հեղինակներ՝

Ա. Հովսեփյան Իրավագիտության դոկտոր	գլուխ 3-րդ, § 3-րդ
Ա. Թամազյան Իրավագիտության դոկտոր	գլուխ 2-րդ (համահեղ. Ա. Ղամբարյան), գլուխ 3-րդ, § 2-րդ
Ա. Ղամբարյան Իրավագիտության դոկտոր, դոցենտ	գլուխ 1-ին, գլուխ 2-րդ (համահեղ. Ա. Թամազյան), գլուխ 3-րդ, § 5-րդ
Վ. Շահնագարյան Իրավագիտության թեկնածու	գլուխ 3-րդ, § 4-րդ

Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները: Եր.: Աստղիկ, 2015 - 140 էջ:

Սույն աշխատանքում ներկայացվում են քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունների առանձին հարցադրումներ: Հեղինակները վերլուծում են գործող քրեական դատավարության օրենսգրքի և Նախագծի դրույթները:

Աշխատանքը կարող է օգտագործվել դատախազների, քննիչների և հետաքննության մարմնի աշխատակիցների վերապատրաստման նպատակով:

Աշխատության հրապարակումն իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Աշխատությունում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները պատկանում են հեղինակային խմբին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետներին:

ISBN 978-92-9235-104-5

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 5

## Գլուխ 1

**Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունների տեսական հիմքերը (Ա. Ղամբարյան)..... 7**

1. Քրեական դատավարության պետաիշխանական լիազորություններով օժտված մասնակիցների համակարգը..... 7
2. Դատախազական և քննչական իշխանության մարմինների գործառույթները և փոխհարաբերությունները..... 13
3. Քննիչի դատավարական ինքնուրույնությունը, պոստ ֆակտոմ դատախազական հսկողություն և պրոակտիվ գերատեսչական վերահսկողություն..... 21

## Գլուխ 2

**Քրեական վարույթի հանրային մասնակիցների վիճելի փոխհարաբերություններն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (Ա. Թամազյան, Ա. Ղամբարյան)..... 35**

1. Քրեական մեղադրանքը տնօրինելու՝ դատախազության սահմանադրական գործառույթի արգելափակման իրավաչափությունը..... 35
2. Քրեական գործի վարույթը կարճելու և մեղադրյալին կալանքից ազատելու՝ քննիչի և դատախազի լիազորությունների հակադրությունը..... 39
3. Քննիչի և դատախազի լիազորությունները քննչական ենթակայությունը փոխելիս կամ գործն ըստ ենթակայության ուղարկելիս..... 44
4. Քննչական բաժնի պետին հասցեագրված՝ դատախազի ցուցումի սահմանները և իրավաչափությունը..... 49

5. Քննիչի վարույթում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնին քննչական գործողություններ կատարելու հանձնարարականի իրավաչափությունը.....	55
6. Քննչական մարմնին հասցեագրված՝ վերադաս դատախազի նորմատիվ բնույթի հանձնարարության իրավաչափությունը.....	57
7. Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելը և դրա իրավական հետևանքները.....	59

### **Գլուխ 3**

<b>Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները և լիազորություններն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (մեկնաբանություններ).....</b>	<b>63</b>
--	-----------

1. Քննիչի, դատախազի և քննչական ստորաբաժանման ղեկավարի գործառույթները (քաղվածք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի Հայեցակարգից).....	63
2. Քրեական վարույթի հանրային մասնակիցների պատասխանատվությունը և փոխհարաբերությունները (Ա. Թամազյան).....	66
3. Վերադաս դատախազի և հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում (Ա. Հովսեփյան).....	76
4. Քննչական մարմնի ղեկավարի և քննիչի լիազորությունները (Վ. Շահնազարյան).....	93
5. Հետաքննության մարմնի պետի և հետաքննիչի լիազորությունները (Ա. Ղամբարյան).....	125
Գրականություն.....	135

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը և հետաքննիչը քրեական վարույթի հանրային մասնակիցներ են, ովքեր դրական (պոզիտիվ) պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնական գործառույթները, պարտականությունները պատշաճ իրականացնելու համար: Վարույթի հանրային մասնակիցներն ի պաշտոնե պարտավոր են օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դրսևորել ակտիվություն, կատարել անհրաժեշտ գործողություններ և ընդունել որոշումներ: Օրինակ՝ հսկողություն իրականացնող դատախազը պարտավոր է միջոցներ ձեռնարկել մարդու իրավունքների ապօրինի սահմանափակումները վերացնելու ուղղությամբ, իսկ քննիչը պարտավոր է իրականացնել համակողմանիության նախաքննություն, քննչական գործողությունները կատարել օրենքով սահմանված կարգով ու ժամանակին:

Քրեական վարույթի հանրային մասնակիցներն օժտված են հարաբերական ինքնուրույնությամբ: Այսպես՝ նախաքննության և հետաքննության մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ինքնուրույնությունն իրավաչափորեն սահմանափակված է մի կողմից՝ գերատեսչական վերահսկողությամբ, մյուս կողմից՝ նրանց գործունեության օրինականության նկատմամբ իրականացվում է դատախազական հսկողություն, կիրառվում են դատական երաշխիքներ:

Գործնականում հաճախ օրենսդրական ոչ հստակ կարգավորումների պատճառով և գերատեսչական հետաքրքրությունների հաստատման նպատակով քրեական վարույթի հանրային մասնակիցների միջև ծագում է ոչ ողջամիտ և ինքնանպատակ հակադրություն, որի արդյունքում տուժում են քրեական արդարադատության ընդհանուր խնդիրները, իսկ մարդու իրավունքների պաշտպանությունը մղվում է երկրորդ պլան:

Քրեական վարույթի հանրային մասնակիցների միջև հակադրությունը կարող է նպաստել նախաքննության որակի բարձրացմանը, եթե այն տեղավորվում է դիալեկտիկայի օրենքների շրջանակներում: Բնական է, որ կոնկրետ գործով քննիչը, քննչական բաժնի պետը, հսկողություն իրականացնող դատախազը կարող են ունենալ տարբեր դիրքորոշումներ: Եթե դիրքորոշումների տարբերությունը, հակասությունը պայմանավորված են բացառապես

քրեական վարույթի արդյունավետության և օրինականության ապահովման պահանջով, ապա՝ նման հակասությունը համապատասխանում է դիալեկտիկայի հակադրությունների միասնության և պայքարի օրենքին: Այսպես՝ դիալեկտիկայի տեսանկյունից իրավաչափ է, երբ դատախազը քննիչին տալիս է ցուցումներ, իսկ քննիչը, չհամաձայնելով ցուցումին, բողոքարկում է այն, կամ դատախազը, չհամաձայնելով քննիչի որոշումներին, վերացնում է այն: Քննիչի և դատախազի միջև դիալեկտիկական նման հակադրությունը նպաստում է քրեական արդարադատության զարգացմանը, որակական հատկանիշների բարձրացմանը:

Քրեական վարույթի հանրային մասնակիցների գործունեության արդյունավետությունն անմիջապես կախված է նրանց դատավարական գործառույթների, դրանցից բխող լիազորությունների հստակ տարանջատումից: Գործնականում վարույթի հանրային մասնակիցների միջև ծագում են մի շարք վիճահարույց հարցեր, որոնք պայմանավորված են նրանց դատավարական գործառույթների ոչ հստակ տարանջատմամբ են կամ միմյանց իրավասությունների ոլորտ ներխուժմամբ:

Աշխատանքում օգտագործվել են ՀՀ ազգային ժողովի հինգերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի դրույթները:

Սույն աշխատանքում արտացոլված են հեղինակների մասնավոր կարծիքները, որոնք կարող են չհամընկնել պաշտոնական դիրքորոշմանը:

# ԳԼՈՒԽ 1

## ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՓՈՒՏՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### 1. Քրեական դատավարության պետաիշխանական լիազորություններով օժտված մասնակիցների համակարգը

Քրեական դատավարության սուբյեկտները քրեադատավարական հարաբերությունների մասնակիցներն են, ովքեր օժտված են դատավարական իրավունքներով, պարտականություններով կամ լիազորություններով և իրականացնում են քրեադատավարական գործունեություն: Դատավարագիտության մեջ օգտագործվում են «քրեական դատավարության սուբյեկտ» և «քրեական դատավարության մասնակից» հասկացությունները: Առանձին հեղինակներ այն կարծիքի են, թե քրեական դատավարության սուբյեկտ են համարվում միայն պետական մարմինները և պաշտոնատար անձինք, քանի որ նրանք են պարտավոր օրենքի ուժով իրականացնել քրեական դատավարության խնդիրները, իսկ մյուս անձինք համարվում են քրեական դատավարության մասնակիցներ<sup>1</sup>:

Գործող քրեական դատավարության օրենսգրքում «քրեական դատավարության սուբյեկտ» հասկացությունը չի օգտագործվում: ՀՀ 1998թ. քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածում առկա են «քրեական դատավարության մասնակիցներ», «քրեական դատավարությանը մասնակցող անձինք» և «քրեական վարույթ իրականացնող մարմին» հասկացությունները: ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 31-րդ կետի համաձայն՝ դատավարության մասնակիցներն են՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը, օրենսգրքի 32-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարությանը

1. Барабаш А.С. Природа российского уголовного процесса, цели уголовно-процессуальной деятельности и их установление. СПб.: Издательство Р. Асланова «Юрический центр Пресс», 2005. С.217-218.

մասնակցող անձինք են՝ դատավարության մասնակիցները, ընթերցական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, վկան, օրենսգրքի 30-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմիններն են՝ դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը:

Գրականության մեջ քրեական դատավարության սուբյեկտների համակարգում ընդգրկվում են երեք խումբ մասնակիցներ, որոնք բաժանվում են ենթախմբերի՝

1. Քրեական վարույթն իրականացնող սուբյեկտներ՝
  - արդարադատություն իրականացնող սուբյեկտներ՝ դատավոր, դատարան,
  - քննություն իրականացնող սուբյեկտներ՝ քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմնի պետ, հետաքննիչ, դատախազ.
2. Դատավարության կողմ հանդիսացող սուբյեկտներ՝
  - մեղադրանքի կողմի սուբյեկտներ՝ մեղադրող, տուժող, քաղաքացիական հայցվոր,
  - պաշտպանության կողմի սուբյեկտներ՝ կասկածյալ, մեղադրյալ, անչափահաս մեղադրյալի օրինական ներկայացուցիչ, պաշտպան, քաղաքացիական պատասխանող.
3. Քրեական դատավարությանն աջակցող մասնակիցներ՝
  - ապացույցի աղբյուր համարվող անձինք՝ վկա, փորձագետ, մասնագետ,
  - վարույթի իշխանական սուբյեկտներին տեխնիկական աջակցություն ցուցաբերող անձինք՝ թարգման, մանկավարժ, դատական նիստերի քարտուղար և այլն<sup>2</sup>:

Քրեական դատավարության սուբյեկտների նման խմբավորումը խիստ պայմանական է, քանի որ մինևույն սուբյեկտը կարող է միաժամանակ հանդիսանալ տվյալ համակարգի տարբեր խմբերի մասնակից, օրինակ՝ մեղադրյալը դատավարության կողմ է, իսկ ցուցմունք տալու դեպքում՝ դատավարությանն աջակցող մասնակից:

2. Калиновский К. Б. Уголовный процесс. [http://kalinovsky-k.narod.ru/p/lecture\\_notes/](http://kalinovsky-k.narod.ru/p/lecture_notes/) (29.12.2014).



Քրեական դատավարության սուբյեկտների դասակարգումը պայմանավորված է նաև քրեական դատավարության տիպով: Քրեական դատավարության պատմական մոդելներն են (տիպերն են)՝ մրցակցային դատավարությունը, ինկվիզիցիոն (հետախուզական) և խառը (կիսամրցակցային) տիպի դատավարությունները: Քրեական դատավարության նշված մոդելների տարանջատման հիմքում ընկած են քրեական վարույթ իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց և առերևույթ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթակա անձանց քրեադատավարական փոխհարաբերությունները: Նշված անձանց փոխհարաբերությունները կառուցված են՝ 1. ողջ դատավարության ընթացքում դատավարական հավասարության վրա, 2. ողջ դատավարության ընթացքում՝ անհավասարության վրա, 3. մինչդատական վարույթում՝ անհավասարության, իսկ դատական վարույթում՝ հավասարության վրա<sup>3</sup>:

Մրցակցային դատավարության դեպքում քրեական վարույթի հանրային մասնակիցների (քննիչը, հետաքննության մարմինը և դատախազը) և առերևույթ հանցագործության մեջ մեղադրվող անձի, նրա պաշտպանի փոխհարաբերությունները կառուցված են դատավարական իրավահավասարության սկզբունքի հիման վրա, որտեղ մասնավորապես առկա է քրեական վարույթի հանրային մասնակիցների և մեղադրյալի (պաշտպանի) միջև դատավարական գործառույթների հստակ տարանջատում, ինչը նշանակում է, որ վարույթի հանրային մասնակիցներն իրականացնում են մեղադրական գործառույթ՝ հավաքելով առավելապես մեղադրական ապացույցներ: Վարույթի հանրային մասնակիցները չեն իրականացնում մեղադրյալին և պաշտպանին հատուկ այնպիսի գործողություն, ինչպիսին պաշտպանական ապացույցներ հավաքելն է: Մյուս կողմից, պաշտպանական ապացույցներ հավաքելու գործառույթը վերապահված է մեղադրյալին և նրա պաշտպանին՝ միևնույն ժամանակ նրանց հնարավորություն տալով համապատասխան իրավական եղանակներով հավաքելու նման ապացույցներ:

Ինկվիզիցիոն դատավարության դեպքում ողջ դատավարության ընթացքում առկա է կողմերի անհավասարություն, ինչը պայ-

3. Шестакова С. Д. Генезис метода российского уголовно-процессуального права в условиях конвергенции и дивергенции в англосаксонской и континентальной правовых систем: Теоретико-правовое исследование. Автореф. дисс. ... док. юрид. наук. СПб., 2004. С. 38.

մանավորված է ոչ միայն մեղադրական և պաշտպանական ապացույցների հավաքման ոլորտում անհավասար հնարավորության հետ, այլև դատավորի կողմից մեղադրական բնույթի գործառնություններ իրականացնելով, որի արդյունքում պաշտպանության կողմը մեղադրանքի կողմի համեմատ հայտնվում է ակնհայտ անհավասար վիճակում:

Խառը տիպի դատավարության դեպքում վարույթի հանրային մասնակիցները և մեղադրյալը մինչդատական վարույթում գտնվում են դատավարական անհավասար, իսկ դատական քննության փուլում՝ հավասար վիճակում: Նման անհավասարությունը պայմանավորված է նրանով, որ ապացուցողական գործողություններ կատարելու լիարժեք սուբյեկտ է համարվում միայն վարույթի հանրային մասնակիցը, ում վրա դրված է նաև պաշտպանական ապացույցներ հավաքելու պարտականություն: Այս դեպքում խաթարվում է դատավարական գործառնությունների տարանջատման տրամաբանությունը: Վարույթի հանրային մասնակցի վրա պաշտպանական ապացույցներ հավաքելու պարտականությունը դրվում է այն պարզ պատճառով, որ խառը տիպի դատավարությունում մեղադրյալը և պաշտպանը մինչդատական վարույթում չունեն ապացույցներ հավաքելու բավարար իրավական գործիքներ: Ուստի խառը տիպի դատավարությունում ապացույցներ հավաքելու ոլորտում առկա անհավասարությունը վերացվում է դատավարական գործառնությունների տարանջատման պահանջի հաշվին՝ վարույթի հանրային մասնակիցների վրա դնելով պաշտպանական ապացույցներ հավաքելու պարտականություն:

Այսպիսով, դատախազի ու քննիչի դատավարական և ինստիտուցիոնալ հարաբերությունները կախված են քրեական արդարադատության մոդելից: Միցակցային քրեական դատավարությունում դատախազը և քննիչը կարող են հանդես գալ մեղադրանքի կողմում, քանի որ այս մոդելի դեպքում ոչ ֆորմալացված մինչդատական վարույթը կառուցված է հավասարության սկզբունքի վրա, իսկ փաստական տվյալներ հավաքելու և դրանք որպես ապացույցներ դատարան ներկայացնելու ոլորտում պաշտպանը և դատախազն ունեն գրեթե հավասար հնարավորություններ: Այս մոդելի պարագայում ոստիկանության աշխատակիցները, լինելով դատախազի դատավարական գործակալները, աջակցում են նրանց ձեռք բերել մեղադրական բնույթի փաստական տվյալներ

և որպես ապացույց՝ ներկայացնել դատարան (դատախազական հետաքննություն), իսկ պաշտպանն իր հերթին, օգտագործելով օրենքով տրված հնարավորությունները, ձեռք է բերում պաշտպանական բնույթի փաստական տվյալներ՝ դատարան ներկայացնելու համար: Այս մոդելի պարագայում քննիչը մեղադրական իշխանություն կրող է, և դատախազի հետ կարող են կազմել նույնիսկ մեկ միասնական ինստիտուցիոնալ համակարգի տարրեր<sup>4</sup>:

Այս համակարգի կողմնակիցներից Ա. Ս. Ալեքսանդրովի կարծիքով՝ ոստիկանության աշխատակիցը, քննիչը մեղադրանքի կողմ են և իրականացնում են քրեական հետապնդման գործառույթ, ինչն ընդունելի է իշխանության տարանջատման սկզբունքի վրա կառուցված իրավական պետության և մրցակցային քրեական դատավարության համար: Քննիչի մեղադրական հակվածությունը պրոֆեսիոնալիզմի և հարձակողական ռազմավարության հատկանիշ է: Սակայն հեղինակը հստակեցնում է, որ այս համակարգը կարող է գոյություն ունենալ միայն մրցակցության պայմաններում, երբ պաշտպանության կողմի ակտիվությունը կարող է հավասարակշռել մեղադրանքի կողմին<sup>5</sup>:

ՀՀ գործող մինչդատական վարույթի սուբյեկտների դասակարգման բարդությունը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության խառը բնույթով, քանի որ մինչդատական վարույթն ունի առավելապես կիսամրցակցային, իսկ դատական վարույթը՝ մրցակցային բնույթ: Ինվլիդիցիոն մինչդատական վարույթում, որտեղ բացակայում են կողմերի հավասարությունը և դատավարական գործառույթների հստակ տարանջատումը, վարույթի

4. ՀՀ-ում դատախազության և քննչական մարմինների ինստիտուցիոնալ միավորման և դատախազական հետաքննության ներդրման համար անհրաժեշտ է հիմնարար բնույթի երկու փոփոխություն: Նախ՝ վերանայել ՀՀ դատախազության գործառույթների սահմանադրաիրավական կարգավորումը և ՀՀ Սահմանադրությունից հանել դատախազության գործառույթներն ու լիազորությունները սահմանող դրույթը կամ ՀՀ Սահմանադրության մեջ ավելացնել քննության գործառույթ, երկրորդ՝ փոխել ՀՀ քրեական դատավարության մոդելը և պաշտպանության կողմին հնարավորություն տալ մեղադրանքի կողմի (դատախազ, քննիչ) հետ հնարավոր հավասար պայմաններում ձեռք բերել փաստական տվյալներ՝ որպես ապացույց դատարան ներկայացնելու համար:

5. Александров А.С. «Обвинительность» должна быть обвинительной, а «состязательность» состязательной. Уголовный процесс России. Проблемные лекции: учебное пособие (для студентов высших юридических учебных заведений). Науч. ред. В.Т.Томин, А.П.Попов и И.А.Зинченко. Пятигорск: Изд., «РИА-КМВ» 2014. С. 143-167.

մասնակիցները չեն կարող դասակարգվել ըստ կողմերի: Մինչ-դեռ, ՀՀ 1998թ. քր. դատ. օր-ում քրեական դատավարության մինչ-դատական և դատական վարույթի սուբյեկտները դասակարգվել են մեղադրանքի և պաշտպանության կողմերի: ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ կողմն այն մարմինները և անձինք են, որոնք քրեական դատավարությունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն, նույն հոդվածի 21-րդ և 22-րդ կետերի համաձայն՝ մեղադրանքի կողմ են՝ քրեական հետապնդման մարմինները՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները: Նման կարգավորման պարագայում մինչդատական վարույթում քննիչը և դատախազը դիտվում են որպես մեղադրանքի կողմի սուբյեկտներ, ինչը ՀՀ քրեական արդարադատության համար հղի է վտանգներով (այս մասին՝ ստորև):

Մինչդատական վարույթի մասնակիցներին դասակարգման՝ վերը նշված համակարգային խնդիրը լուծելու նպատակով ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի հեղինակներն իրավացիորեն հրաժարվել են մինչդատական վարույթի մասնակիցներին ըստ մեղադրանքի և պաշտպանության կողմերի դասակարգելու մոտեցումից՝ բացառությամբ մինչդատական վարույթում դատական երաշխիքների կիրառման դեպքերի:

Մինչդատական վարույթում առկա են վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներ: Վարույթի հանրային մասնակից են՝ դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը, հետաքննիչը, վարույթի մասնավոր մասնակից են՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը: Դատարանը թեև չի համարվում վարույթի հանրային մասնակից, սակայն որպես պետական մարմին՝ օժտված է դատավարական-իշխանական լիազորություններով և գործում է հանրայնության սկզբունքի հիման վրա:

## 2. **Ռատախագական և քննչական իշխանության մարմինների գործառնություններն ու փոխհարաբերությունները**

Կիսամրցակցային, իսկ առանձին դեպքերում նաև ինկվիզիցիոն մոդելով կազմակերպված մինչդատական վարույթի պարագայում մեղադրական և քննչական իշխանությունների ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ տարանջատումը ձեռք է բերում կարևոր նշանակություն: Պատճառն այն է, որ այս դեպքում պաշտպանը մինչդատական վարույթում պաշտպանական ապացույցներ հավաքելու հնարավորություն չունի, ուստի ապացույցների հավաքման ոլորտում դատախազի և պաշտպանի միջև հավասար հնարավորություններ ստեղծելու համար քննիչը պարտավոր է ձեռք բերել ինչպես մեղադրական, այնպես էլ պաշտպանական բնույթի ապացույցներ: Քննիչն ապացույցների հավաքման ոլորտում պետք է հավասարապես «սպասարկի» ինչպես պաշտպանին, այնպես էլ դատախազին: Եթե քննիչը ինստիտուցիոնալ և դատավարական առումով կախված է մեղադրական (դատախազական) իշխանությունից, ապա չի կարող անկաշկանդ և անաչառ կերպով հավաքել ինչպես մեղադրական, այնպես էլ պաշտպանական ապացույցներ:

Ճիշտ է, դատախազը մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ պետք է իրականացնի անաչառ հսկողություն, վեր հանի ցանկացած, այդ թվում՝ մեղադրյալի իրավունքների խախտման դեպքերը, սակայն դատախազի՝ քրեական հետապնդում հարուցելու և դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառնությունները չեն կարող իրենց ազդեցությունը չթողնել մինչդատական վարույթում հսկողության գործառնության բովանդակության և անաչառության վրա<sup>6</sup>: Մինչևիդեմեթերյան հեղափոխության ժամանակաշրջանի իրավաբան Ի. Շելովիտը, ուշադրություն դարձնելով դատախազի հակասական կարգավիճակի վրա, նշել է, որ դատախազը, լինելով մեղադրանքի կողմ, ում պատկանում է դատարանում պետական մեղադրանք պաշտպանելու մենաշնորհը, չի կարող զերծ մնալ իր ապագա լիազորություններից, որպեսզի նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնելիս

6. Այս մասին մանրամասն տես՝ Буглаева Е.А., Виноцкий Л.В. Участие прокурора в ходе предварительного следствия. М.: Юрлитинформ, 2013.

չընկնի գործի համար կործանարար նշանակություն ունեցող միակողմանիության մեջ, ինչն արմատապես ոչնչացնում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի հավասարության գաղափարը: Դատախազության ներկայացուցիչներն ինչքան էլ անաչառ լինեն, չեն կարող վեր կանգնել ապագա մեղադրողի կարգավիճակից, որի հետևանքով, բնական է, դատախազը հակված է լինում վեր հանել առավելապես մեղադրող և ոչ թե մեղադրյալին արդարացնող ապացույցներ<sup>7</sup>:

ՀՀ քննչական և դատախազական իշխանության փոխհարաբերությունների բնույթն ամբողջական պատկերացնելու համար պետք է համառոտ անդրադառնալ խորհրդային ժամանակաշրջանում քննիչի և դատախազի կարգավիճակի զարգացման պատմությանը: Նախ նշենք, որ Ցարական Ռուսաստանում 1862թ-ին Ալեքսանդր 2-րդի կողմից հաստատվել էր «Քրեական դատավարության հիմնական դրույթները», որով դատական քննիչի գործառույթները տարանջատված էին մեղադրական և վարչական (ոստիկանական) իշխանությունից: Նշված ակտի համաձայն՝ քննիչը ձեռք էր բերել որոշակի ինքնուրույնություն: Թեև քննիչի գործունեությունը դատախազի հսկողության ներքո է, սակայն նա դատարանում կարող էր վիճարկել դատախազի որոշ ցուցումներ<sup>8</sup>:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո քննչական և դատախազական իշխանության հարաբերությունների հարցը դարձավ ակտիվ քննարկումների առարկա: Ն. Վ. Կրիլենկոյի կարծիքով՝ դատախազը չպետք է փոխարինի քննիչին, իսկ Ա. Յա. Վիշինսկին կողմ էր նախաքննության և դատախազական հսկողության մերձեցմանը: Նշված հարցը քննարկվեց Խորհրդային արդարադատության գործիչների V-րդ համաժողովում (1924թ.), որտեղ Ա. Վիշինսկին զեկուցող էր և քրեական դատավարության հարցերով բանաձևի հեղինակ: Նրա կարծիքով դատախազը և քննիչը միևնույն անձի դրսևորումներն են, այդ իսկ պատճառով քննիչը պետք է լինի դատախազի օգնական, քանի որ քննիչը յուրահատուկ «փոքր» դատախազ է<sup>9</sup>: Ա. Վիշինսկու գաղափարները

7. Щегловитов И. Прокуратура на предварительном следствии. Юридический вестник, 1887, т. 26, С. 89-90. Մեջբերումն ըստ՝ Ижнина Л.П., Олисов Р.Ю. Процессуальная свобода следователя: история и современность. Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. Нижний Новгород: Изд-во ННГУ, 2002, Вып. 1 (5). С. 217.

8. Шейфер С. А. Досудебное производство в России: этапы развития следственной, судебной и прокурорской власти. М.: Изд. НОРМА, 2013. С. 48.

9. Մեջբերումն ըստ՝ Ижнина Л.П., Олисов Р.Ю. Процессуальная свобода

հետագայում արտացոլվեցին օրենսդրության մեջ, որով և սկիզբ դրվեց քննիչի դատավարական, կազմակերպական և ծառայողական կախվածությանը դատախազից:

Տեսության մեջ նշվում է, որ այդ ժամանակաշրջանում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դատախազը քննության նկատմամբ իրականացնում էր մանրուքային խնամակալություն, ինչը լիովին վերացրեց ստեղծագործական նախաքննություն իրականացնելու համար քննիչի անհրաժեշտ ինքնուրույնությունը և անկախությունը: Այս ամենի հետևանքով քննիչը վերածվեց դատախազի հանձնակատարի, տեխնիկական կատարողի<sup>10</sup>: Պ.Բ. Ստուչկան նշում էր, որ վերափոխումների հետևանքով նախաքննության մարմինը դարձավ դատախազությանն օժանդակ՝ մեղադրանքի մարմին<sup>11</sup>:

Ա. Վիշինսկու՝ «քննիչը փոքր դատախազ է» գաղափարը և դրա օրենսդրական արտացոլումն իր կնիքը թողեց քրեական դատավարության հետագա զարգացման վրա: Դատախազից կախված և մեղադրական ուղղվածություն ունեցող քննիչի կերպարն արմատավորվեց խորհրդային և հետխորհրդային իրավամտաժողովության մեջ: Նույնիսկ՝ անկախացած Հայաստանի Հանրապետությունում շարունակում է գերիշխել քննիչի և դատախազի միաձուլված կերպարի մասին պատկերացումը, որից ձերբազատվելը դեռ կպահանջի երկար տարիներ:

Քննիչի և դատախազի ինստիտուցիոնալ միաձուլման մասին Ա. Վիշինսկու գաղափարի վտանգավորությունը դրսևորվեց ոչ այնքան քննչական և դատախազական մարմինների ինստիտուցիոնալ և գործառնական առումով սխալ կառուցելու քաղաքականության մեջ, որքան որ այն կործանարար ազդեցություն ունեցավ մինչդատական վարույթում մեղադրյալի պաշտպանության իրավունքի համար: Մինչդատական վարույթում, ընդհանուր առմամբ,

---

следователя: история и современность. Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. Нижний Новгород: Изд-во ННГУ, 2002, Вып. 1 (5). С. 216-222.

10. Рагинский М. Тарасов-Родионов П. Предварительное следствие за 20 лет. Советское государство и право, 1955, № 4, С. 39, Олисов Р. Ю. Соотношение процессуальной самостоятельности следователя и прокурорского надзора в отечественном досудебном производстве. Автореф. дисс. ... канд. юрид.наук. Нижний Новгород, 2006. С. 15.

11. Մեջբերումս ըստ՝ Власова Н.А., Шамарова В.М. Ретроспективный анализ развития следственного аппарата в россии. Вестник екатерининского института № 1 (25) 2014. С. 38.

ապացույց հավաքելու մենաշնորհը վերապահված է քննիչին, իսկ մեղադրյալը և պաշտպանը զրկված են ինքնուրույն ապացույցներ հավաքելու իրավունքից: Ստեղծված իրավիճակում մի մեղադրյալը և պաշտպանը զրկված են ապացույց հավաքելու հնարավորությունից, իսկ քննիչը, ով պետք է ձեռք բերեր նաև պաշտպանական ապացույցներ, կրում է «քննիչը և դատախազը միևնույն անձի դրսևորումն են» վիշինսկյան գաղափարախոսությունը:

Որոշ հեղինակավոր դատավարագետներ նշում են քննիչի կողմից մեղադրական և պաշտպանության, ինչպես նաև գործի լուծման գործառույթների իրականացման մասին<sup>12</sup>: Այսպես՝ Ի. Լ. Պետրովսիինն այն կարծիքին է, որ քննիչը, ստուգելով մեղադրանքին հակադրվող վարկածները, հանդես է գալիս ի շահ պաշտպանության կողմի, այսինքն՝ մեկ անձի մեջ համատեղվում են մեղադրանքի և պաշտպանության գործառույթները<sup>13</sup>: Քննիչի միաժամանակ մեղադրական և պաշտպանական գործառույթներ իրականացնելու մասին դատողությունները հակասում են մարդու հոգեբանության տարրական պահանջներին: Վ. Նաժիմովը նշում է, որ մարդու գիտակցությունը չի հանդուրժում «երկվություն», ուստի միևնույն անձը, որպես կանոն, չի կարող միաժամանակ իրականացնել տարբեր ուղղվածության գործառույթներ<sup>14</sup>: Ս. Ա. Շեյֆերը նշում է, որ քննիչը չի կարող չզգալ ներքին երկվություն՝ իրեն ընկալելով մի կողմից՝ որպես քրեական հետապնդման սուբյեկտ, ով պարտավոր է վեր հանել մեղադրյալի մեղավորությունն ապացուցող հանգամանքներ, մյուս կողմից՝ որպես հետազոտող, ով հարկադրված է հերքել ինքն իրեն՝ ձեռք բերելով մեղադրանքի հետ անհամատեղելի հանգամանքներ<sup>15</sup>: Լ. Վ. Գոլովկոն նման իրավիճակը գնահատում է որպես ֆանտաստիկ դատավարական էկլեկ-

12. Строгович М. С. Право обвиняемого на защиту и презумпция невиновности. Под ред. Савицкий В. М. М.: Наука, 1984. С.37-38, Савицкий В.М. Государственное обвинение в суде. М.: Наука, 1971. С. 58, Химичева Г. П. Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности. М.: Экзамен, 2003. С. 59-60.

13. Петрухин И. Л. Теоретические основы реформы уголовного процесса в России. Ч. 1. М.: 2004. С. 23.

14. Нажимов В. П. Психологические основы учения об уголовно-процессуальных функциях. Правоведение. 1983. № 5. С. 52 – 58.

15. Шейфер С. А. Российский следователь - исследователь или преследователь. Российская юстиция. 2010. № 11. [http://www.juristlib.ru/book\\_9738.html](http://www.juristlib.ru/book_9738.html) (31.12.2014..)



տիկա<sup>16</sup>, որտեղ միաձուլվում են միմյանց բացառող երևույթներ և դատավարական ոճեր<sup>17</sup>: Ա.Վ. Սմիրնովն արդարացիորեն նշում է, որ քննիչը պետք է զբաղվի ոչ թե հետապնդմամբ, այլ փաստերի հետազոտմամբ, նա ոչ թե պետք է ձևակերպի պաշտոնական մեղադրանք, այլ կազմի քննության արդյունքների մասին եզրակացություն<sup>18</sup>: Այս առումով՝ ընդունելի է այն մտտեցումը՝ ըստ որի քրեական դատավարության առկա մոդելի պայմաններում քննիչը ոչ թե մեղադրանքի կողմ է, այլ անաչառ հետազոտող<sup>19</sup>:

ՀՀ քրեական արդարադատությունում շարունակում է գերիշխել դատավարության սուբյեկտների մեղադրական հակումը: Ընդ որում, էթե դատաքննության ընթացքում դատավորի մեղադրական հակումն ունի լատենտային և ոչ համակարգային բնույթ, ապա նախաքննության մեղադրական ուղղվածությունն առավել ցայտուն դրսևորվում է քննիչի աշխատանքում, ով օրենքի ուժով և բացահայտ իրեն նույնականացնում է մեղադրական գործառույթ իրականացնող սուբյեկտի հետ: Քննիչի՝ որպես մեղադրանքի կողմի օրենսդրական և հոգեբանական նույնականացումն արգելափակում է ՀՀ քր. դատ. օր-ի 17-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն պահանջի կենսագործումը՝ ըստ որի քննիչը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունն հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Գործնականում քննիչի կողմից պաշտպանական ապացույցներ ձեռք բերելու պահանջը դառնում է ոչ իրական:

16. Էկլեկտիզմ՝ տարբեր սկզբունքների, տեսակետների, հայացքների մեխանիկական՝ սկզբունքայնությունից զուրկ միացում: Տես Մախասետանց Ս. Հայերեն Բացատրական Բառարան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչություն, Երևան, 1944, էջ 47:

17. Головки Л. В. Новый УПК Российской Федерации в контексте сравнительного уголовно-процессуального права. Государство и право. 2002. № 5. С. 54.

18. Смирнов А. В. О процессуальной независимости следователя, защитника и обеспечении законных интересов личности в уголовном процессе. Предварительное следствие в условиях правовой реформы: Сб. науч. тр. Ред. В.С. Шадрин. Волгоград: ВСШ МВД СССР, 1991. С. 31-37.

19. Азаров В. А., Ревенко Н. И., Кузембаева М. М. Функция предварительного расследования в истории, теории и практике уголовного процесса России: монография. Омск: Изд-во ОмГУ, 2006. С. 23. Гуськова А. П. К вопросу о процессуальной функции следователя. Вестник Оренбургского государственного университета. № 3. 2013 С. 62.

Այսպիսով, քննիչի՝ որպես մեղադրանքի կողմի մասնակցի վտանգավորությունը դրսևորվում է նրանում, որ քննության մեղադրական ուղղվածության բացասական հետևանքները կրում են մեղադրյալը և պաշտպանը: Տեսության մեջ նշվում է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ պաշտպանը միջնորդում է անձին հարցաքննել որպես վկա, սակայն նա, հարցաքննվելով պաշտպանի բացակայությամբ, վերածվում է «առ չհինչ» վկայի, քանի որ հարցաքննության ժամանակ վկայի հայտնած տեղեկությունները պատշաճ կերպով չեն արտացոլվում հարցաքննության արձանագրության մեջ<sup>20</sup>: Ի. Միխայլովսկայան նույնպես նշում է, որ քննչական գործողությունների արձանագրությունների բովանդակության մեջ արտացոլված տեղեկատվությունը շատ դեպքերում քննիչն ընկալում է ոչ ամբողջական եւ ոչ համարժեք<sup>21</sup>: Կարծում ենք, որ նման պրակտիկայի պատճառն այն է, որ քննիչն իրավաբանորեն և հոգեբանորեն (մտածողությամբ) դեռևս շարունակում է լինել մեղադրանքի կողմ, նրա կողմից մեղադրյալին արդարացնող ապացույցներ հավաքելու պահանջը զուտ տեսական դատողություն է, որը, թեև ունի օրենսդրական ամրագրում (ՀՀ քր. դատ. օր-ի 17-րդ հոդված), սակայն, իրավական ռեպիզամի տեսանկյունից, այն չի արտացոլվում քննչական մարմինների աշխատանքում: Քննիչների հոգեբանության և իրավամտածողության մեջ ամրապնդված է այն գաղափարը, որ նրանք կոչված են ձեռք բերելու միայն դատարանում մեղադրանք պաշտպանելու համար դատախազին անհրաժեշտ ապացույցներ: Հանրության համար քննիչի գործառույթն ընկալվում և բնորոշվում է առավելապես մեղադրական ուղղվածությամբ: Բացառիկ են այն դեպքերը, երբ քննիչի համակողմանի քննության արդյունքում ձեռք են բերվում արդարացնող ապացույցներ, իսկ առանձին գործերով քրեական հետապնդումը դադարեցվում է միայն այն ժամանակ, երբ սպառվել են ամեն գնով մեղադրական ապացույցներ «ձեռք բերելու» եղանակները և լրացել են կալանքի առավելագույն ժամկետները: Նման դեպքերում քննիչը թեև նախապես գիտակցում և կանխատեսում է քրեական հետապնդումը դադարեցնելու անխուսափելիությունը, մինչև այն է՝ շարունակում են քրեական վարույթը մինչև կալանքի ժամկետի լրանալը:

20. Маджитов А. Депонирование доказательств защиты на стадии расследования. <http://skachate.ru/pravo/107376/index.html>(12.08.2014).

21. Михайловская И. Б. Настольная книга судьи по доказыванию в уголовном процессе. М.: Проспект, 2006, С. 126.

Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և անաչառ քննության գործառնությունների տարանջատման նպատակով 2006-2007թթ. «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քր. դատ. օր-ում կատարված փոփոխություններով դատախազության համակարգից հանվեցին քննչական ստորաբաժանումները և ուժը կորցրած ճանաչվեցին դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու և դրանց մասնակցելու վերաբերյալ դատավարական մի շարք նորմեր: Մինևույն ժամանակ, պետք է փաստել, որ գործող ՀՀ քր. դատ. օր-ով դատախազն ամբողջությամբ ձերբագատված չէ քննության գործառնության տարրերից: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին կարող են ձերբակալել, **հարցաքննել**, (ընդգծումը՝ հեղ), նրա նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջադրել սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով, ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով: Նշված նորմերով պահպանվել են դատախազի կողմից քննչական և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու լիազորությունները՝ հարցաքննել ձերբակալվածին, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով դիմել դատարան<sup>22</sup>:

22. Կարծում ենք մինչդատական վարույթում օրինականության ապահովման նպատակով դատախազի կողմից դատախազական գործողության կատարումն ինքնին չի հակասի ՀՀ Սահմանադրությանը, եթե դրա նպատակներ է դատավարական հարաբերություններին վերաբերող բողոքների լուծման նպատակով քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունների, որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգումը: Վերը նշված նպատակին հասնելու համար դատախազի կողմից դատախազական գործողությունների կատարումը չի կարող համարվել քննության գործառնության, քանի որ դրանց կատարմամբ ապացույց ձեռք չի բերվում:

Ավելին, ՀՀ քր. դատ. օր-ի 202-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ քննիչի վարույթում գտնվող քրեական գործով դատախազը կայացնում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, սակայն վարույթն իրականացնող քննիչը համաձայն չէ այդ որոշման իրավական կամ փաստական հանգամանքների հետ: Նշված իրավիճակի հիմնական խնդիրն այն է, որ օրենքով նախատեսված չէ դատախազի՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման դեմ քննիչի կողմից առարկություն ներկայացնելու իրավական ընթացակարգ: Ուստի, քննիչը, համաձայն չլինելով դատախազի որոշմանը, իր ներքին համոզմունքին հակառակ, պետք է այդ որոշման հիման վրա մեղադրանք առաջադրի տվյալ անձին<sup>23</sup>:

Այսպիսով, քննչական և դատախազական իշխանության մարմինների ֆունկցիոնալ տարանջատման և քննիչի աշխատանքում մեղադրական հակվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտ են հետևյալ նվազագույն քայլերը.

1. Քննիչը հանդես չի գալիս մեղադրանքի կողմում և իրականացնում է անսաչառ քննություն: Ինչպես նշվեց, ՀՀ քր. դատ. օր-ի նախագծում քննիչը դիտվում է ոչ թե մեղադրանքի կողմ, այլ վարույթի հանրային մասնակից:
2. Քննիչը նախաքննության արդյունքների վերաբերյալ պետք է կազմի եզրակացություն, որի հիման վրա դատախազն իրականացնում է մեղադրանքի տնօրինման գործառույթ՝ հարուցում է քրեական հետապնդում և անձին ներգրավում է որպես մեղադրյալ կամ մերժում է քրեական հետապնդման հարուցումը, կամ կազմում մեղադրա-

---

23. ՀՀ քր. դատ. օր-ի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրանքը պետք է առաջադրվի տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից (ընդգծումն հեղ) որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը: Նշված նորմի տառացի մեկնաբանումից բխում է, որ քննիչը մեղադրանք է առաջադրում իր կողմից որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում ընդունելու դեպքում: Օրենքով հստակ կարգավորված չէ դատախազի ընդունած՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հիման վրա քննիչի կողմից մեղադրանք առաջադրելու իրավիճակը:

կան եզրակացություն և գործն ուղարկում է դատարան<sup>24</sup>: Որոշակի մասով ՀՀ քր. դատ. օր-ի նախագծով այս հարցը նույնպես կարգավորվել է: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծով տարանջատվել են քրեական հետապնդում հարուցելու (որպես մեղադրյալ ներգրավելու), քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու ոլորտում քննիչի և հսկող դատախազի լիազորությունները: Այսպես՝ Նախագծի 191-րդ հոդվածի համաձայն՝ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատախազի որոշմամբ: Դատախազն իրավասու է անձին որպես մեղադրյալ ներգրավել ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ քննիչի միջնորդությամբ (այս մասին տե՛ս հաջորդ գլխում): Սակայն Նախագծով մեղադրական եզրակացություն կազմում է ոչ թե դատախազը, այլ քննիչը:

### **3. Քննիչի դատավարական ինքնուրույնությունը. պոստֆակտում դատախազական հսկողություն և պրոակտիվ գերատեսչական վերահսկողություն**

Քննիչի դատավարական ինքնուրույնությունը քննիչի հայեցողությամբ՝ ապացույցների ազատ գնահատման հիման վրա օրենքով նախատեսված որոշումներ ընդունելու և դատավարական գործողություններ կատարելու լիազորություններն են: Քննիչի դատավարական ինքնուրույնության տարրերն են՝ 1. քրեական դատավարության խնդիրները լուծելու ուղիների ընտրության ազա-

---

24. Գրականության մեջ մի շարք հեղինակներ նշում են, որ քննիչը չպետք է կայացնի քրեական հետապնդմանն առնչվող որոշումներ՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում, մեղադրական եզրակացություն: Անձի կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դեպքում քննիչը քրեական գործի նյութերը իր եզրակացության հետ միասին, ուղարկում է դատախազին, իսկ դատախազը որոշում է կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու և արարքին քրեա-իրավական գնահատական տալու մասին: Քննիչի աշխատանքում մեղադրական ուղղվածությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է փոխել նախաքննության ավարտման կարգը՝ սահմանելով, որ մեղադրական եզրակացություն կազմում է հսկող դատախազը, իսկ պաշտպանը պարտավոր է կազմել պաշտպանական եզրակացություն: Այս մասին տե՛ս Лавдаренко Л. И. Функция следователя в российском уголовном процессе (проблемы реализации, перспективы развития). Автореф. дисс. ... канд. юрид.наук. М.: 2001, Картохина О. А. Начало и прекращение уголовного преследования следователями органов внутренних дел. Дисс. ... канд. юрид. наук. СПб., 2003. <http://kalinovsky-k.narod.ru/b/kartoh/02.htm> (06.01.2015.).

տությունը, 2. մինչդատական վարույթի ընթացքում իր կարծիքը պնդելու քննիչի հնարավորությունը, 3. քննիչի դատավարական ակտիվությունը, 4. քննիչի ընդունած որոշումների և կատարվող գործողությունների օրինականության, հիմնավորվածության և դրանք ժամանակին կատարելու երաշխիքները, 5. քննիչի որոշումների և գործողությունների նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը, դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը, 6. քննիչի անձնական պատասխանատվությունը գործողությունները օրինական, հիմնավորված և ժամանակին կատարելու համար<sup>25</sup>:

Գրականության մեջ «քննիչի դատավարական ինքնուրույնություն» հասկացությանը զուգահեռ օգտագործվում է նաև «քննիչի անկախություն» հասկացությունը: Հեղինակների մի մասը, նկատի ունենալով քննիչի գործունեության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը և դատախազական հսկողությունը, բացառում են քննիչի անկախության գաղափարը<sup>26</sup>, հեղինակների մեկ այլ խումբ քննիչի անկախության ներքո հասկանում է հսկող և վերահսկող մարմինների որոշումները քննիչի բողոքարկման հնարավորությունը սահմանող իրավական նորմերի համակարգ<sup>27</sup>: Նկատի ունենալով, որ հսկող դատախազը և քննչական մարմնի անմիջական ղեկավարն իրավասու են քննիչին տալ ցուցումներ, ուստի քննիչը չի կարող անկախ լինել հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններից: Դատախազի և քննչական մարմնի ղեկավարի ու քննիչի հարաբերություններում կիրառելի է «դատավարական ինքնուրույնություն» հասկացությունը: Գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ քննիչի անկախությունը դրսևորվում է դատավարության այլ մասնակիցների, առանձին պաշտոնատար անձանց և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում: Այս դեպքում քննիչի անկախությունը բացարձակ է, քանի որ օրենքով արգելվում է քննիչի գոր-

25. Варганов А. Р. Проблемы процессуальной самостоятельности следователя по УПК РФ. Автореф. дисс. ... канд. юрид.наук. Краснодар, 2012. С. 8.

26. Гуляев А. П. Правовые основы управления следственным аппаратом органов внутренних дел. Организация работы следственного отдела. М.: 1977. С. 21.

27. Бабич А. В. Процессуальная самостоятельность и независимость следователя как основа его статуса в уголовном судопроизводстве. Автореф. дисс. ... канд. юрид.наук. Саратов, 2012. С. 9.

ծունեության որևէ միջամտություն<sup>28</sup>: Այսպես՝ «ՀՀ Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների իրականացմանը միջամտելն արգելվում է: Թեև նշված հոդվածում որևէ բացառություն նախատեսված չէ, սակայն քննչական կոմիտեի ծառայողի գործունեությանը միջամտելու արգելքը չի տարածվում ՀՀ քր. դատ. օր-ով նախատեսված հսկող դատախազի և քննչական մարմնի ղեկավարի լիազորությունների իրականացման կապակցությամբ քննիչի գործունեության միջամտության դեպքերի վրա:

*Քննիչի դատավարական ինքնուրույնությունը դատախազից:* Քննիչի դատավարական ինքնուրույնությունն իրավական արժեք է ձեռք բերում դատավարական այն մոդելներում, որտեղ քննչական իշխանությունն ինստիտուցիոնալ և ծառայողական առումով առանձնացված է դատախազական իշխանությունից, իսկ քննության խնդիրն է համակողմանի հետազոտման միջոցով վեր հանել ինչպես մեղադրական, այնպես էլ պաշտպանական ապացույցներ: Դատավարական ինքնուրույնությամբ օժտված քննիչը, զերծ մնալով մեղադրական հակվածությունից, իր ներքին համոզմունքի հիման վրա և օրենքով սահմանված կարգով պետք է իրականացնի անաչառ և համակողմանի քննություն:

Քննիչն ինքնուրույն է որոշում նախաքննության ժամկետների շրջանակներում քննչական գործողությունների կատարման ժամանակը և հերթականությունը, այս կամ այն փաստական տվյալը ձեռք բերելու դատավարական եղանակը: Այս առումով՝ դատախազն իրավասու չէ քննիչին հանձնարարել քննչական գործողություն կատարելու կոնկրետ ժամկետներ, քանի որ քննիչը նախաքննության ընդհանուր ժամկետների շրջանակներում ինքնուրույն է որոշում կոնկրետ քննչական գործողության կատարման ժամկետը: Ասվածն իհարկե չի նշանակում, որ քննիչն ունի բացարձակ հայեցողություն որոշելու քննչական գործողությունների կատարման ժամկետը: Նախ՝ առանձին քննչական գործողությունների կատարման ժամկետները սահմանված են օրենքով, օրինակ՝ քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք առաջադրելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24

28. Францифоров Ю. В., Ванин Д. В. Функциональное назначение деятельности следователя и его полномочия в состязательном уголовном процессе. Изд. Юрлитинформ. М.: 2013. С 169.

ժամկա ընթացքում (ՀՀ քր. դատ. օր-ի 212-րդ հոդվածի 1-ին մաս): Բացի այդ, քննիչը պետք է քննչական գործողությունները կատարի ժամանակին, ինչը նշանակում է, որ քննչական գործողության կատարումը չպետք է լինի ոչ վաղաժամ, ոչ էլ ուշացած: Քննիչն ի պաշտոնե պետք է հրատապ և առաջնահերթ կատարի բոլոր այն անհետաձգելի քննչական գործողությունները, որոնց ուշացումը կարող է հանգեցնել ապացույցների կորստի:

Քննիչի ինքնուրույնության տիրույթում է գտնվում փաստական տվյալները ձեռք բերելու դատավարական եղանակի ընտրությունը: Քննիչն իր վարույթում գտնվող քրեական գործի շրջանակներում ինքնուրույն է որոշում այս կամ այն փաստական տվյալը ձեռք բերելու համար առավել նպատակահարմար քննչական գործողության տեսակը: Այս առումով՝ դատախազը ցուցումում պետք է սահմանի, թե ինչ փաստական տվյալներն են անհրաժեշտ իր սահմանադրական գործառույթները և լիազորություններն իրականացնելու համար, իսկ այդ փաստական տվյալների ձեռքբերման եղանակը որոշում է քննիչը: Օրինակ՝ դատախազը ցուցումում չպետք է նշի, թե քննիչն այս կամ այն փաստական տվյալը պետք է ձեռք բերի խուզարկության կամ առգրավման միջոցով: Քննիչը, ելնելով կոնկրետ քրեական գործի հանգամանքներից և հաշվի առնելով տվյալ հանցագործության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները, ինքնուրույն է որոշում փաստական տվյալը ձեռք բերելու դատավարական եղանակը:

Ինչպես նշվեց, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում դատախազը ղեկավարում էր նախաքննությունը, դատախազի հետ նախապես համաձայնեցվում էր քննիչի դատավարական ինքնուրույնության տիրույթում գտնվող մի շարք հարցեր: Պետք է նշել, որ նախաքննության նկատմամբ դատախազական մանրութային «խնամակալությունն» ուներ նաև օբյեկտիվ պատճառներ: Նախ՝ ՀՀ ռստիկանության համակարգում գործող քննիչները դատախազական իշխանությունը դիտում էին որպես օպերատիվ ստորաբաժանումների՝ նախաքննության նկատմամբ կիրառվող ներգործությանը հակազդելու գործուն միջոց: Ոստիկանության համակարգում գործող քննիչները հաճախ նախընտրում էին իրենց ինքնուրույնության որոշակի մաս զիջել դատախազական մարմիններին, որով հնարավոր էր խուսափել օպերատիվ ստորաբաժանումների ոչ իրավաչափ ազդեցությունից:



Բացի այդ, քննիչների նկատմամբ դատախազության «խնամակալությունը» պայմանավորված էր նաև գերատեսչական քննչական ստորաբաժանումների և դրանց ղեկավարների մասնագիտական և կազմակերպական կարողություններով: Դատախազները, նկատի ունենալով քննիչների մասնագիտական ունակությունների որակը, ինքնուրույն գործելու ցածր կարողությունները, իսկ առանձին դեպքերում՝ նաև քննչական բաժնի պետի կազմակերպչական ունակությունների իսպառ բացակայությունը, հաճախ կատարում էին կազմակերպական բնույթի այնպիսի գործողություններ, որոնք հատուկ էին քննչական բաժնի պետին: Քննիչները, կարիք ունենալով մեթոդական և ինտելեկտուալ աջակցության, հաճախ այդպիսիք փնտրում և ստանում էին ոչ թե քննչական բաժնի պետի, այլ դատախազի աշխատասենյակում:

Արտագերատեսչական քննչական մարմնի ձևավորման պայմաններում քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունների վերանայումը բնական գործընթաց է: «ՀՀ Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սկիզբ դրվեց դատախազությունից և գերատեսչություններից նախաքննության մարմինների էմանսիպացիայի գործընթացին: Նախաքննության կազմակերպման հարցում ծանրության կշիռը դատախազությունից պետք է տեղափոխվի նախաքննության մարմնի ղեկավարի տիրույթ: Բանն այն է, որ գործնականում մեկ քրեական վարույթի շրջանակում չի կարող փաստացի առկա լինել երկու ուժեղ ղեկավար (կազմակերպիչ)՝ քննչական բաժնի պետ և հսկող դատախազ: Նման իրավիճակը, նույնիսկ դատախազի և բաժնի պետի լիազորությունների հստակ տարանջատման պարագայում, պարունակում է կոնֆլիկտոգեն իրավիճակ, որից խուսափելու տարբերակներից է քրեական դատավարություն պրոակտիվ քննչական բաժնի պետ և պոստ ֆակտում հսկողություն իրականացնող դատախազ փոխհարաբերությունների մոդելի ներդրումը: Պոստ ֆակտում դատախազական հսկողության մասին նշվում է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի 4.4-րդ կետում. «Թեև նախաքննությունը գրեթե ամբողջությամբ գտնվում է դատախազական հսկողության ներքո, և քննիչի կողմից ընդունվող որոշումները և իրականացվող գործողությունները դատախազական հսկողության պարտադիր օբյեկտ են, սակայն հաշվի առնելով բացառապես քննիչի կողմից քննության գործա-

ռույթի իրականացման հանգամանքը և ելնելով քննիչի՝ որպես նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի, օրինապահության կանխավարկածից, դատախազը կարող է ստուգել ընդունված որոշման կամ կատարված գործողության օրինականությունը, ինչպես նաև դրա արդյունքում ձեռնարկել օրինականության խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ»:

Պոստ ֆակտոմ դատախազական հսկողություն նշանակում է, որ դատախազն ստուգում է արդեն իսկ կատարված դատավարական գործողությունների և ընդունված որոշումների օրինականությունը: Դատախազական հսկողության նման ոճի պարագայում քննիչը դատախազի հետ նախապես չի համաձայնեցնում իր գործողությունները՝ բացառությամբ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերի:

Ընդ որում, պասիվ դատախազական հսկողությունը ենթադրում է նաև դատախազի կողմից քրեական գործ պահանջելու բացարձակ հայեցողական լիազորության սահմանափակում: Օրենքով պետք է սահմանվեն դատախազի պատճառաբանված որոշմամբ քրեական գործը պահանջելու հիմքերը, օրինակ՝ դատախազը կարող է քրեական գործը պահանջել, եթե առկա է քննիչի գործողությունների վերաբերյալ բողոք, բացարկի միջնորդություն, կամ օրենքով դատախազին պարտադիր հանձնման ենթակա դատավարական որոշումների օրինականությունն ստուգելիս (օրինակ՝ քրեական գործ հարուցելու, որպես մեղադրյալ ներգրավելու որոշում և այլն):

*Քննիչի դատախազական ինքնուրույնությունը քննչական բաժնի պետից:* Պոստ ֆակտոմ դատախազական հսկողության դեպքում վերանում է քննիչի նկատմամբ դատախազի մանրուքային խնամակալությունը, սակայն արդյո՞ք այն ակամայից չի վերափոխվի քննիչի նկատմամբ քննչական բաժնի պետի մանրուքային խնամակալությամբ, արդյո՞ք այն չի ունենա նույն բացասական հետևանքները: Դատավարագիտության մեջ նշվում է, որ քննիչի դատավարական ինքնուրույնությունն անհամատեղելի է ցանկացած ղեկավարման հետ, սակայն այս դեպքում քննիչի դատավարական ինքնուրույնության և քննչական բաժնի պետի իշխանական լիազորությունների միջև առկա է դիալեկտիկական հակասություն, քանի որ այն նպաստում է քննիչի ինքնուրույնության

դրակորմանը, և լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի ու արդյունավետ քննությանը<sup>29</sup>:

Կարծում ենք՝ քննչական բաժնի պետի իշխանական և վարչական լիազորություններով քննիչի դատավարական ինքնուրույնության սահմանափակումը մեղադրյալի իրավունքների պաշտպանության համար և քննիչի մեղադրական ուղղվածության ձևավորման առումով չի կարող ունենալ նույն բացասական հետևանքները, ինչ որ քննիչի կախվածությունը մեղադրական իշխանությունից: Քննչական բաժնի պետը չի իրականացնում մեղադրական գործառույթներ, նա, ի տարբերություն դատախազի, կաշկանդված չէ դատարանում մեղադրանք պաշտպանելու գործառույթով: Այս առումով՝ պատահական չէ, որ Վ.Ս. Շադրինը քննիչի ոչ բավարար դատավարական ինքնուրույնությունը դիտում է մարդկանց անօրինական կամ անհիմն քրեական պատասխանատվության ենթարկելու պատճառներից մեկը<sup>30</sup>:

Քննչական բաժնի պետը պատասխանատու է նախաքննության արդյունավետ կազմակերպման համար, ուստի քննիչի նկատմամբ քննչական բաժնի պետի ազդեցությունը չի կարող կամ չպետք է ծնի միակողմանի և մեղադրական ուղղվածությամբ նախաքննություն:

Ցանկանում ենք քննչական բաժնի պետի և քննիչի դատավարական ինքնուրույնության հարցը քննարկել իրավական ռեալիզմի տեսանկյունից: Բանն այն է, որ կարելի է տեսական-գաղափարական և նույնիսկ օրենսդրական հարթությունում խոսել քննչական բաժնի պետից քննիչի դատավարական ինքնուրույնության մասին, սակայն իրական կյանքում քննիչի լայն ինքնուրույնությունն օբյեկտիվորեն իրատեսական չէ: Քննիչը քննչական բաժնի պետի հետ գտնվում է ոչ միայն դատավարական, այլև աշխատանքային, ծառայողական և միջանձնային հարաբերությունների մեջ, որոնք չեն կարող իրենց ազդեցությունը չթողնել քննիչի դատավարական ինքնուրույնության վրա: Սա իրականություն է, որը պետք է նկատի ունենալ և փորձել հավասարակշռել քննիչի հարաբերական դատավարական ինքնուրույնությունը և գերատեսչական վերահսկողությունը:

29. Влезько Д. А. Проблемы организационных функций начальника следственного отделения (отдела) в расследовании. Автореф. дисс. ... канд. юрид.наук. Краснодар, 2002. С. 19.

30. Шадрин В. С. Обеспечение прав личности и предварительное расследование в уголовном процессе. Государство и право 1994. № 4. С 100.

Քննչական բաժնի պետը, թեև չունի քննիչի որոշումները վերացնելու լիազորություն, սակայն պրոակտիվ գերատեսչական վերահսկողության դեպքում կարող է կանխել քննիչի հնարավոր դատավարական և նյութափրավական խախտումները, քննչական սխալները, որի պարագայում նվազում են դատախազի կողմից քննիչի որոշումները վերացնելու դեպքերը:

Կրկին նշենք, որ սույն աշխատանքում բաժնի պետի պրոակտիվ վերահսկողությունը (աշխատատճը) քննարկվում է ոչ թե իրավական դոգմատիկայի, այլ իրավական ռեալիզմի հարթությունում: Պրոակտիվ վերահսկողություն (աշխատատճը) ասելով՝ նկատի ունենք բաժնի պետի՝ որպես ղեկավարի քննչական հնարավոր սխալները կանխելու հարցում նախաձեռնողականությունը և քրեական գործերի քննության որակի համար պատասխանատվության ստանձնումը: Քննչական բաժնի պետը կարող է իրականացնել պրոակտիվ գերատեսչական վերահսկողություն, եթե նա օժտված է կազմակերպական և ինտելեկտուալ բավարար ունակություններով: Քննիչի աշխատունակությունը, նրա աշխատանքի կայունությունը և արդյունավետությունը կախված է քննչական բաժնի պետի՝ որպես պրոակտիվ ղեկավարի անձնային, ինտելեկտուալ հատկանիշներից և ղեկավարման ոճից:

Քննչական բաժնի պետը, քննիչի հետ լինելով մշտական աշխատանքային և ծառայողական փոխհարաբերությունների մեջ, կարող է իրականացնել անմիջական և անընդհատ վերահսկողություն: Պրոակտիվ գործելաճ ունեցող քննչական բաժնի պետը քննիչին ցուցաբերում է մեթոդական և ինտելեկտուալ աջակցություն, նախապես ուսումնասիրում է նրա կազմած դատավարական փաստաթղթերի նախագծերը, քննիչի հետ քննարկում և հաստատում է քննության պլանը, քննչական գործողությունների կատարման տակտիկական հնարքները և այլն: Քննչական բաժնի պետի պրոակտիվ կազմակերպական և ինտելեկտուալ աջակցությունը հատկապես կարևորվում է նորանշանակ քննիչների պարագայում: Մինևսույն ժամանակ, ստրատեգիական իմաստով քննչական բաժնի պետի աջակցությունը և միջամտությունը պետք է նպատակաուղղված լինեն քննիչի նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորմանը և զարգացմանը, և ոչ թե այդ հատկանիշների ոչնչացմանը:

Թեև իրավական ռեալիզմի տեսանկյունից քննիչի դատավարական ինքնուրույնությունը քննչական բաժնի պետից խիստ հարբերական է, սակայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են քննիչի ինքնուրույնության նվազագույն երաշխիքներ.

1. *Դատավարական հարաբերություններում քննիչի անմիջական վերադասի ինստիտուտի ներդրում:* «ՀՀ Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է բազմաստիճան վերադասության հարաբերություններ: Այսպես՝ քննչական կոմիտեի նախագահը վերադաս է քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար: Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը վերադաս է իր համակարգման ներքո գտնվող քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար: Քննչական կոմիտեի ստորաբաժանման պետը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր ծառայողների համար: Ստացվում է, որ ստորաբաժանման քննիչը կարող է ունենալ երեք վերադաս՝ քննչական կոմիտեի նախագահ, նրա տեղակալ և ստորաբաժանման պետ: Սակայն քրեադատավարական հարաբերություններում առանձնացվում են քննիչի վերադասի և անմիջական վերադասի լիազորությունները: Անմիջական վերադաս հանդիսացող քննչական բաժնի պետը հետևում է իրեն անմիջականորեն ենթակա քննիչների վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելուն, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելուն, իրեն անմիջականորեն ենթակա քննիչներին ցուցումներ է տալիս իրենց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ: Ընդ որում, ՀՀ քր. դատ. օր-ի 193.1-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ քննիչը տվյալ վարույթի շրջանակներում ունի մեկ անմիջական վերադաս<sup>31</sup>: Նշված լիազորությունները միայն անմիջական վերադասին վերապահելով՝ օրենսդիրը փոր-

31. Վ. Վ. Տոմին առաջարկում է նվազագույնի հասցնել վարույթի իրականացնող մարմնի վերադասների թիվը, քանի որ այն հակասում է վարույթի իրականացնող մարմնի ինքնուրույնության սկզբունքին: Մեղադրյալի կամ անբաստանյալի ճակատագրի համար պատասխանատու է ոչ թե քննչական բաժնի պետը կամ դատարանի նախագահը, այլ քննիչը կամ դատավորը, ում վարույթում գտնվում է քրեական գործը: Томин В.Г. Насущные проблемы современной отечественной уголовной юстиции. Уголовный процесс России. Проблемные лекции: учебное пособие (для студентов высших юридических учебных заведений). Науч. ред. В.Т.Томин, А.П.Попов и И.А.Зинченко. Пятигорск: Изд., «РИА-КМВ» 2014. С. 68.

ձեղ է գերատեսչական բազմաստիճան վերադասության պայմաններում հնարավորինս ապահովել քննիչի դատավարական ինքնուրույնությունը, բացառել նույն գործի շրջանակներում տարբեր վերադասների կողմից նույն քննիչին տարաբնույթ ցուցումներ տալու իրավիճակը:

2. *Քննիչին կարգապահական պատրասխանարվության ենթարկելու ոլորտում գայումների և հակակշիռների կառուցակարգերի ներդրում:* Քննիչին կարգապահական պատրասխանարվության ենթարկելու ոլորտում քննչական մարմնի ղեկավարի ձեռքում տարաբնույթ լիազորությունների կենտրոնացումը ոչ իրավաչափ կերպով սահմանափակում է քննիչի ինքնուրույնությունը: Անթույլատրելի է կարգապահական վարույթ հարուցելու, իրավախախտման փաստն ու անձի մեղավորությունը հաստատելու և տույժի տեսակն ընտրելու ու կիրառելու լիազորությունների կենտրոնացումը մեկ անձի ձեռքում: Այդ նպատակով՝ «ՀՀ Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ոչ միայն ՀՀ քննչական կոմիտեի վիճակահանությանը ընտրված ծառայողներ, այլև Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից նշանակված երկուական ներկայացուցիչ: Կարգապահական հանձնաժողովը, ըստ էության, կիսադատական մարմին է, որը որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության հարցը, իսկ կարգապահական տույժերը քննչական կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառում է քննչական կոմիտեի նախագահը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենսդիրը սահմանափակել է նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի կողմից «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու հայեցողությունը: Կարգապահական հանձնաժողովը ՀՀ քննչական կոմիտեի նախագահի համապատասխան միջնորդության դեպքում որոշում է «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարցը:

Օրենսդիրը փորձել է կարգապահական վարույթում ՀՀ քննչական կոմիտեի նախագահի և Կարգապահական հանձնաժողովի լիազորությունների տարանջատմամբ ապահովել քննիչների ինքնուրույնությունը, սակայն ընկել է մեկ այլ ծայրահեղության մեջ: ՀՀ քննչական կոմիտեի նախագահին ներհատուկ գործադիր բնույթի որոշ լիազորություններ վերապահվելու է Կարգապահական հանձնաժողովին, որի հետևանքով խախտվել է գործառույթների տարանջատման սկզբունքը: Այսպես, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգապահական խախտման փաստի առթիվ քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ: Կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը գործադիր բնույթի լիազորություն է, որն առավելապես պետք է վերապահվեր ոչ թե Կարգապահական հանձնաժողովին, այլ ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Կարգապահական խախտման փաստի առկայության, կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության հարցի որոշումն անկախ Կարգապահական հանձնաժողովին վերապահելով՝ երաշխավորվում է քննիչի ինքնուրույնությունը ոչ միայն վերադասից, այլև դատախազից: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը կարող է դիմել հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող համապատասխան մարմնին՝ հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ: Միջնորդությունն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, ով պարտավոր է այն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, սկսել ծառայողական քննությունը:

ՀՀ ոստիկանության քննիչների նկատմամբ դատախազների միջնորդությամբ իրականացվող ծառայողական քննության պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծառայողական քննության ընթացքում ՀՀ ոստիկանության համապատաս-

խան ստորաբաժանումները, դատախազի միջնորդություններում՝ քննիչին վերագրվող խախտումներն ընդունելով որպես հաստատված ճշմարտություններ և գործի հանգամանքներն ու կարգապահական խախտման առկայությունն առանց խոր վերլուծելու, որպես կանոն, քննիչներին ենթարկում էին կարգապահական պատասխանատվության: Նման պրակտիկան հակասում էր ոչ միայն անձին իրավաբանական պատասխանատվության ենթարկելու սահմանադրական սկզբունքներին, այլև ստեղծում էր դատախազից քննիչի անուղղակի վարչական կախվածության վիճակ:

Կարգապահական հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առանձին ուսումնասիրում է քննիչներին վերագրվող յուրաքանչյուր առերևույթ խախտում և դրա կապակցությամբ կազմակերպում առանձին քվեարկություն: Կարգապահական հանձնաժողովի գործունեության կարճ ժամանակահատվածում քիչ չեն եղել այն դեպքերը, երբ Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ դատախազի միջնորդությամբ քննիչին վերագրվող առերևույթ խախտումների փաստը բացակայում է: Օրինակ՝ դատախազի 27.10.2014թ. և 06.11.2014թ. միջնորդություններում նշված են եղել քրեական գործերի նախաքննության ընթացքում քննիչի թույլ տված հետևյալ դատավարական խախտումները՝

- նախաքննության ժամկետը երկու ամսով երկարացնելուց հետո ավելի քան 50 օր որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չկատարելը,

- բջջային կապի երկու օպերատորի կողմից իր ուղարկած գրության պահանջների կատարմանը հետամուտ չլինելը,

- օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով սահմանված կարգով, ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնին 25.06.2014թ., 04.09.2014թ. և 01.10.2014թ. տրված նույնաբովանդակ հանձնարարությունների կատարմանը հետևողական չլինելը:

Քննչական և դատավարական գործողություններ չկատարելու առերևույթ խախտման կապակցությամբ քննիչը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ 50 օր քրեական գործով որևէ քննչական և դատավարական գործողություն չկատարելը պայմանավորված է եղել թափառաշրջիկ Գ. Գ.-ին չհայտնաբերելով, իսկ քրեական գործի վարույթը չի



կասեցրել, քանի որ դատախազը քանավոր հայտարարել է, որ քրեական գործը չի կարող կասեցվել, քանի դեռ թափառաշրջիկությամբ զբաղվող Գ. Գ.-ն չի հայտնաբերվել: Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշել է, որ քննիչի արարքում բացակայում է խախտման փաստը, քանի որ դատախազը չի ներկայացրել, թե քննիչի կողմից ինչ դատավարական գործողություններ պետք է կատարվեր, որոնք չեն կատարվել: Բացի այդ, քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ հնարավոր չէր պարզել, թե տվյալ փաստական հանգամանքներում ողջամտորեն ինչ քննչական գործողություն կարող էր ակնկալվել, որ քննիչը չի կատարել:

Բջջային կապի երկու օպերատորի կողմից քննիչի ուղարկած գրության պահանջների և ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնին 25.06.2014թ., 04.09.2014թ. և 01.10.2014թ. տրված նույնարժանողակ հանձնարարությունների կատարմանը հետամուտ չլինելու քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման կապակցությամբ Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ իրավական կառուցակարգ, որի գործադրմամբ հնարավոր կլիներ ապահովել, որ գերծանաբեռնվածության պայմաններում աշխատող կապի օպերատորները քննիչի հարցումներին ժամանակին պատասխանեն: Կապի օպերատորներին ուղարկվող հիշեցումներն ինքնին արդյունավետ միջոց չեն, քանի որ տվյալ գործի շրջանակներում քննիչն ուղարկել է բազմաթիվ հիշեցումներ, որոնք մնացել են անպատասխան: Օրենսդրությամբ նախատեսված չէ նաև ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից քննիչի ուղարկած հանձնարարությունների կատարումն ապահովող կառուցակարգեր, ուստի պարզ չէ, թե քննիչից ինչ գործողություն էր ակնկալվում, որի միջոցով հնարավոր կլիներ ապահովել ՀՀ ոստիկանության երեք հանձնարարության կատարումը:

*3. Քննչական կոմիտեի ծառայողի արեւարավորումը Որակավորման հանձնաժողովի կողմից:* Քննչական կոմիտեի ծառայողների ատեստացիայի արդյունքում ընդունվում են քննիչի հետագա ծառայության համար կարևոր և նույնիսկ վճռական նշանակություն ունեցող որոշումներ: Այսպես՝ «ՀՀ Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝

ատեստավորման արդյունքներով ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը. 1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին. 2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ ներառելով քննչական կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակում. 3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով. 4) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ կոչում շնորհելու մասին. 5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին. 6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին:

Ատեստավորման անաչառությունն ապահովելու նպատակով այս գործընթացի իրականացումը վերապահվել է Որակավորման հանձնաժողովին, որի կազմում ընդգրկված են ոչ միայն ՀՀ քննչական կոմիտեի ծառայողներ, այլև 4 իրավաբան - գիտնական: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված՝ Որակավորման հանձնաժողովի գործունեության կարգի համաձայն՝ ծառայողների ատեստավորումն անցկացվում է հարցատոմսերով՝ նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:

## ԳԼՈՒԽ 2

### ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԻՃԵԼԻ ՓՈՒՇՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

#### 1. Քրեական մեղադրանքը տնօրինելու՝ դատախազության սահմանադրական գործառույթի արգելափակման իրավաչափությունը

ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում<sup>32</sup>: Նշված կարգավորման պարագայում ՀՀ գլխավոր դատախազի կողմից քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելուց հետո, եթե քննիչը կարճում է քրեական գործի վարույթը կամ դադարեցնում քրեական հետապնդումը, ապա դրանով իսկ արգելափակվում է ՀՀ դատախազության քրեական հետապնդման տնօրինման գործառույթը, քանի որ նշված նորմն արգելում է երկրորդ անգամ վերացնել որոշումը:

32. ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածը տարբեր ժամանակահատվածներում ենթարկվել է փոփոխությունների, ներկայացվել է նոր խմբագրությամբ, սակայն այդ փոփոխությունների ընթացքում չեն պահպանվել քրեական դատախազության հանրային և մասնավոր շահերի զուգակցման, դատախազ – քննիչ փոխհարաբերություններում նրանց դատավարական գործառույթների հստակ տարանջատման հիմնարար մտեցումները, որի արդյունքում ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածն ինքնին պարունակում է խիստ անորոշ և հակասական կարգավորումներ: Կարծում ենք, որ գործող քր. դատ. օր-ով քրեական հետապնդման ոլորտում քննիչի և դատախազի լիազորությունները հստակ տարանջատված չեն: Տես Դամբարյան Ա., Վարդևանյան Ա. ՀՀ գլխավոր դատախազի և հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու լիազորության տարանջատման հիմնախնդիրը: «Օրինականություն», 2013, թիվ 78. էջեր 28-33:

ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունը և պրակտիկայի ձևավորումը չպետք է հանգեցնեն նախաբնության մարմնի կողմից դատախազության քրեական հետապնդումը տնօրինելու (քրեական հետապնդում հարուցել և մեղադրանք պաշտպանել) սահմանադրական գործառույթի արգելափակմանը՝ մինչև խնդրի օրենսդրական և համակարգային լուծում տալը. ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման ժամանակ առաջարկում ենք ձևավորել հետևյալ պրակտիկան: Հսկողություն իրականացնող դատախազը քրեական վարույթը կարճելու (հետապնդումը դադարեցնելու), քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու մասին որոշման հետ միաժամանակ, որպես առանձին դատավարական փաստաթուղթ, կազմում է սակ ցուցում: Քրեական վարույթը կարճելու (հետապնդումը դադարեցնելու), քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու՝ դատախազի որոշման մեջ նշվում են միայն թույլ տրված խախտումները, իսկ ցուցումում՝ կատարվելիք գործողությունները: Այս դեպքում ցուցումն ըստ բովանդակության կարող է լինել երկու տեսակի:

*Առաջին՝* եթե քրեական գործի հետագա ընթացքը որոշելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր ապացույցներ, ստուգել և գնահատել ապացույցները, ապա՝ դատախազը քննիչին հանձնարարում է հավաքել անհրաժեշտ ապացույցներ, ստուգել ու գնահատել դրանք և նյութերը ներկայացնել դատախազին: Նյութերը դատախազին ներկայացնելու դեպքում դատախազը լրացուցիչ ցուցումով հանձնարարում է կարճել քրեական գործի վարույթը կամ մեղադրական եզրակացություն կազմելով ավարտել նախաքննությունը:

*Երկրորդ՝* եթե առկա է բացառապես իրավական հարց (օրինակ՝ առկա է արարքի որակման վերաբերյալ իրավական վեճ), ապա՝ դատախազը կարող է անմիջապես ցուցում տալ **քրեական վարույթն ավարտել մեղադրական եզրակացություն կազմելով:**

Առաջարկի իրավական հիմքը կազմում են հետևյալ դրույթները: ՀՀ քր. դատ. օր-ի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույ-*

թը կարճելու մասին որոշում կազմելով: ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետի համաձայն՝ քննիչն իրավասու է որպես մեղադրյալ ներգրավելու, հանցագործությունը որակելու և մեղադրանքի ծավալի, *նախաքննությունն ավարտելու* կամ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատախազի ցուցումներին համաձայն չլինելու դեպքում դրանք առանց կատարելու բողոքարկել վերադաս դատախազին: Նշված նորմերից բխում է մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննությունն ավարտելու դատախազի ցուցումի իրավաչափությունը և քննիչի կողմից այն բողոքարկելու իրավասությունը:

Առաջարկվող պրակտիկայի ձևավորման դեպքում քննիչը կամ պետք է կատարի դատախազի ցուցումը՝ մեղադրական եզրակացություն կազմելով ավարտի վարույթը, կամ էլ առանց այն կատարելու ցուցումը բողոքարկի վերադաս դատախազին: Եթե վերադաս դատախազը նույնպես գա այն եզրահանգման, որ պետք է վարույթն ավարտել մեղադրական եզրակացություն կազմելով, ապա՝ քննիչը, չունենալով այլընտրանք, պարտավոր է կատարել մեղադրական եզրակացություն կազմելու և նախաքննությունն ավարտելու մասին դատախազի ցուցումը: Նման իրավիճակում քննիչը փաստացի գրկվում է վարույթը կրկին կարճելու, հետապնդումը դադարեցնելու, հետապնդում չիրականացնելու լիազորությունից, իսկ դատախազը հնարավորություն է ստանում իրականացնել քրեական հետապնդումը տնօրինելու սահմանադրական լիազորությունները: Այս պարագայում վերանում է ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ դատախազի կողմից քննիչի որոշումը վերացնելու իրավասահմանափակումների հրատապությունը:

Միաժամանակ, կարծում ենք, որ մինչև վերը նշված միջոցառումների իրականացումը, ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի ներկայիս կարգավորման պայմաններում հսկող դատախազն իրավասու է յոթ օրվա ընթացքում վերացնել նախ՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, որից հետո, եթե քննիչը կարճում է քրեական վարույթը (դադարեցնում է քրեական հետապնդումը), ապա՝ հսկող դատախազն իրավասու է վերացնել նաև վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումը: Բանն այն է, որ նշված դեպքերում հսկող

դատախազը գնահատական է *տալիս տարբեր դատավարական փաստաթղթերի*, մի դեպքում վերացնում է քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը՝ պատճենն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում, միաժամանակ՝ հարուցում է քրեական գործ: Եթե քննիչը վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշում է կայացնում, ապա՝ որոշման պատճենն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում հսկող դատախազը վերացնում է նաև վարույթը կարճելու (հետապնդումը դադարեցնելու) քննիչի որոշումը: Եթե հսկող դատախազի կողմից վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումը վերացնելուց հետո քննիչը կրկին կարճում է քրեական վարույթը (դադարեցնում է քրեական հետապնդումը), ապա նրա որոշումը կարող է վերացնել՝

- վերադաս դատախազը բողոքի առկայության դեպքում, ՀՀ քր. դատ. օր-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ բողոքն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում,
- ՀՀ գլխավոր դատախազը, անկախ բողոքի առկայությունից, ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով, որոշման կայացման պահից վեց ամսվա ընթացքում<sup>33</sup>:

Այսպիսով, նախաքննության մարմնի կողմից քրեական մեղադրանքը տնօրինելու դատախազության սահմանադրական գործառույթն արգելափակող իրավական կարգավորումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատախազության գործառույթների բովանդակությանը: ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածում առկա անորոշ և հակասական կարգավորումները խաթարում են քրեական արդարադատության բնականոն իրականացումը, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը՝ ստեղծելով հակասահմանադրական իրավիճակ: Նման հակասությունների վերացումը պահանջում է օրենսդրական և համակարգային լուծումներ:

33. Դավթյան Ա. Ղամբարյան Ա. Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման օրինականության ապահովման կառուցակարգերը (դատախազական և դատական քաղաքականության հիմնահարցեր): «Օրինականություն», 2010, թիվ 59, էջեր 8-14:

## **2. Քրեական գործի վարույթը կարճելու և մեղադրյալին կալանքից ազատելու՝ քննիչի և դատախազի լիազորությունների հակադրությունը**

Քրեական հետապնդման և քրեադատավարական հարկադրանքի կիրառման ոլորտում դատախազի և քննիչի լիազորությունների ոչ հստակ տարանջատման հետևանքով նույնպես ծագում են հակասական իրավիճակներ: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է ընդունել որոշում քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և այդ որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին՝ որոշման օրինականությունն ստուգելու նպատակով, իսկ 22-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է որոշում ընդունել խափանման միջոցներ ընտրելու, փոխելու, վերացնելու և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին՝ բացառությամբ կալանքի, իր որոշմամբ ազատել կալանքի տակ պահվող այն մեղադրյալին, ում կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է: Նշված նորմերից բխում է, որ քննիչն առանց դատախազի նախնական համաձայնության իրավասու է կարճել քրեական գործի վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը, ինչպես նաև փոփոխել և վերացնել դատավարական հարկադրանքի միջոցները՝ բացառությամբ կալանքի: Քննիչը կարող է կալանքի տակ գտնվող մեղադրյալին ազատ արձակել միայն այն դեպքում, երբ լրացել է կալանքի ժամկետը, մյուս դեպքերում՝ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալին կալանքից ազատելու իրավասությունը վերապահված է դատախազին:

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ քննիչը զրկվում է քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորությունն ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից: Նման իրավիճակ առաջանում է այն դեպքերում, երբ կարճման ենթակա քրեական գործով մեղադրյալը գտնվում է կալանքի տակ: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման եզրափակիչ մասում շարադրվում են քրեական գործը կարճելու հիմքերը, օրենքի նոր-

մը, որի հիման վրա կայացվում է որոշումը, **խափանման միջոցը վերացնելու (ընդգծումը՝ հեղինակների)** վերաբերյալ հարցերը: Ստացվում է մի իրավիճակ, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալի վերաբերյալ գործերով քննիչն իրավասու է ինքնուրույն կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը, միաժամանակ՝ նա այդ իրավունքից չի կարող օգտվել, քանի որ վարույթը կարճելու որոշման մեջ պետք է վերացնի խափանման միջոցը, իսկ կալանքը վերացնելու իրավասություն վերապահված է դատախազին:

Նշված իրավիճակում քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու օրենքով նախատեսված լիազորության իրականացումն ապահովելու նպատակով կարող է կիրառվել հետևյալ լուծումը: ՀՀ քր. դատ. օր-ի 151-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կալանավորման և գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը կարող է փոփոխվել և վերացվել դատարանի կողմից, իսկ քրեական գործով մինչդատական վարույթում՝ նաև դատախազի կողմից: Ինչպես նկատում ենք, նշված նորմը կարգավորում է մինչդատական և դատական վարույթում կալանքը և գրավը փոխելու իրավական ռեժիմները: Դատական վարույթում կալանքը և գրավը փոխելու և վերացնելու լիազորություն ունի միայն դատարանը, իսկ մինչ դատական վարույթում՝ նաև դատախազը: Մեկնաբանվող հոդվածում օգտագործվում է «մինչդատական վարույթում՝ նաև դատախազը» բառերը, ինչը կարող է հիմք տալ եզրակացնելու, որ բացի դատախազից, մինչդատական վարույթում կալանքը և գրավը փոխելու և վերացնելու լիազորություն ունի նաև դատարանը: Այս առումով՝ քննիչը, եթե եզրակացնում է, որ քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ հետապնդումը ենթակա է դադարեցման, ապա՝ կարող է միջնորդությամբ դիմել դատարան՝ ստանալու կալանքը վերացնելու և մեղադրյալին կալանքից ազատելու թույլտվություն: Դատարանի կողմից այն բավարարվելու դեպքում քննիչը կարող է որոշում կայացնել վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Առաջարկվող լուծման թերի կողմն այն է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 151-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված նյութական նորմի իրականացման դատավարական ձև նախատեսված չէ: ՀՀ քր. դատ. օր-ը չի կարգավորում մինչդատական վարույթի ընթացքում



դատարանի կողմից կալանքը վերացնելու վերաբերյալ քննիչի միջնորդության քննարկման դատավարական կարգ: Կարծում ենք՝ նյութական նորմի իրականացման ձևի բացակայությունն ինքնին չի կարող վարույթի սուբյեկտին զրկել օրենքով նախատեսված իր հնարավորությունից: Ուստի, մեղադրյալին կալանքից ազատելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարանը կարող է քննարկել ՀՀ քր. դատ. օր-ի 39-րդ գլխով նախատեսված վերաբերեր դատավարական նորմերի կիրառմամբ:

Ինչպես նախորդ, այնպես էլ սույն պարագրաֆում առաջադրված հարցերի լուծման եղանակը քրեական հետապնդման հարուցման ոլորտում քննիչի և դատախազի լիազորությունների հստակ տարանջատումն է: ՀՀ քր. դատ. օր-ի նախագծով տարանջատված են քրեական հետապնդում հարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու ոլորտում քննիչի և հսկող դատախազի լիազորությունները: Այսպես՝ Նախագծի 191-րդ հոդվածի համաձայն՝ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատախազի որոշմամբ: Անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցվում է նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա: Օրենքով նախատեսված փաստերի առկայության դեպքում քննիչն իրավասու է հսկող դատախազին ներկայացնել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին միջնորդություն՝ դրան կցելով վարույթի նյութերը և մատնանշելով այդ փաստերը հաստատող ապացույցները: Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձի ձերբակալված լինելու դեպքում քննիչը սույն մասով նշված միջնորդությունը և նյութերը հսկող դատախազին է ներկայացնում ոչ ուշ, քան ձերբակալման որոշումն անձին հանձնելու պահից 24 ժամվա ընթացքում:

Այսպիսով, քրեական հետապնդում հարուցելու լիազորություն ունի բացառապես հսկող դատախազը: Վերջինս անձի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ քննիչի միջնորդության հիման վրա (ՀՀ քր. դատ. օր-ի 38-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետեր): Քրեական հետապնդում հարուցելը հսկող դատախազի սահմանադրական լիազորությունն է, ուստի այն չի կարող սահմանափակվել մեկ այլ պաշտոնատար անձի կամահայտնությամբ, այդ իսկ պատճառով օրենսդրությամբ դատախազին հնարավորությ-

յուն է տրված սեփական նախաձեռնությամբ որոշել անձին որպես մեղադրյալ ներգրավելու հարցը: Հսկող դատախազը սեփական նախաձեռնությամբ քրեական հետապնդում է հարուցում, երբ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս ուսումնասիրելով վարույթի նյութերը, եզրակացնում է, որ առկա են քրեական հետապնդում հարուցելու բավարար հիմքեր:

Քրեական հետապնդման հարուցման ոլորտում քննիչի և հսկող դատախազի լիազորությունների հստակ և գործնական տարանջատումն ապահովելու նպատակով օրենսդիրն իրավական արգելքի եղանակով սահմանել է, որ դատախազն իրավունք չունի քննիչին հանձնարարել ներկայացնելու անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն, ինչպես նաև՝ կազմելու այդպիսի որոշման նախագիծ: Քննիչի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին միջնորդությունը և հսկող դատախազի որոշումը չպետք է ունենան նույն բովանդակությունը: Այսպես՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու միջնորդության մեջ քննիչը թվարկում է ապացույցները, մինչդեռ հսկող դատախազը, հիմք ընդունելով վարույթի նյութերը, որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ պետք է ներկայացնի մեղադրանքի փաստական հիմնավորումները՝ վերլուծելով համապատասխան ապացույցները: Այդ նպատակով օրենսդիրը քննիչին պարտավորեցնում է միջնորդությանը կցել նաև վարույթի նյութերը, որի կազմում ընդգրկվում են վարույթի ընթացքում հավաքված ու ստացված փաստաթղթերը և այլ նյութերը, որոնք պետք է լինեն համարակալված:

Ինչպես նշվեց, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնում է հսկող դատախազը: Վերադաս դատախազն իրավասու է հանձնարարություն տալ հսկող դատախազին՝ նրա իրավասության ներքո գտնվող ցանկացած հարցի կապակցությամբ, ուստի վերադաս դատախազը կարող է հանձնարարել հսկող դատախազին կայացնել որպես մեղադրյալ ներգրավելու որոշում: Եթե հսկող դատախազը համաձայն չէ վերադաս դատախազի՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու հանձնարարությանը, ուստի իրավասու է, առանց վերադաս դատախազի հանձնարարությունը կատարելու, առարկություն ներկայացնել հանձնարարություն տված դատախազի վերադասին:

Քննիչն իրավասու է հսկող դատախազի՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման վերաբերյալ առարկություն ներկայացնել վերադաս դատախազին: Թեև վերադաս դատախազի ձևական իրավաբանական առումով իրավասու է վերացնել հսկող դատախազի անօրինական կամ անհիմն որոշումները (ՀՀ քր. դատ. օր-ի 37-րդ հոդվածի 10 կետ), սակայն նկատի ունենալով, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ անձը ձեռք է բերում դատավարական կարգավիճակ, ուստի վերադաս դատախազը որպես մեղադրյալ ներգրավելու որոշումն անօրինական կամ անհիմն համարելու դեպքում պետք է կիրառի ոչ թե նշված որոշումը վերացնելու իրավական գործիքը, այլ հանձնարարություն տա մեղադրանքի իրավական կամ փաստական հիմնավորումները փոխելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Հակառակ մոտեցման դեպքում անձը կհայտնվի անորոշ իրավական կարգավիճակում և կզրկվի մի շարք երաշխիքներից: Այսպես՝ վերադաս դատախազի կողմից որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը վերացնելու դեպքում այլևս չպետք է կայացվի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, որի բացակայության պայմաններում անձը կզրկվի կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքից բխող այն պահանջից՝ ըստ որի քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի օրինական ուժի մեջ մտած որոշման առկայությունը բացառում է քրեական հետապնդումը նորոգելը:

Նախագծով՝ եթե քրեական հետապնդում հարուցելու և այն դադարեցնելու լիազորությունը վերապահված է հսկող դատախազին, ապա վարույթը կարճելու լիազորությունը վերապահված է քննիչին, սակայն վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատում է հսկող դատախազը:

### 3. Քննիչի և դատախազի լիազորությունները քննչական ենթակայությունը փոխելիս կամ գործն ըստ ենթակայության ուղարկելիս

Քննչական ենթակայության կանոնները նախաքննության մարմինների և դրանց ստորաբաժանումների միջև իրավասությունների տարանջատման չափանիշ են: Քննչական ենթակայության հստակ կանոնների սահմանումը կանխում է նախաքննության տարբեր մարմինների միջև իրավասության վերաբերյալ վեճերը, աշխատանքի բաժանման ոլորտում ստեղծում է որոշակիություն, քանի որ նախաքննության մարմիններին նախապես հայտնի են իրենց ենթակա գործերի շրջանակից: Քննչական ենթակայության կանոնները նպաստում են նաև նախաքննության մարմինների մասնագիտացմանը և քրեական գործերի քննության որակի բարձրացմանը, օրինակ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը ենթակ են ընտրական իրավունքի դեմ ուղղված մի շարք հանցագործություններ, ուստի ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները մասնագիտանում են իրենց ենթակա հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունների ոլորտում:

Քննչական ենթակայության դատավարական ինստիտուտի կառուցվածքում հատուկ նշանակություն ունեն քննչական ենթակայությունը որոշելու, քրեական գործերն ըստ ենթակայության ուղարկելու վերաբերյալ դատախազի, քննիչի և քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները սահմանող նորմերը: Գրականության մեջ ավանդաբար գերիշխել է այն մոտեցումը, որ հսկողություն իրականացնող դատախազը բացառիկ լիազորություն ունի որոշելու քրեական գործերի ենթակայությունը: Դատախազն իրավասու է, քննչական ենթակայության կանոններին համապատասխան, քրեական գործը վերցնել և հանձնել այլ նախաքննության մարմնի, ցանկացած քրեական գործ հանձնել դատախազության քննիչներին<sup>34</sup>: Քննչական ենթակայության հարցերի լուծմանը դատախազության մասնակցությունը դիտվում էր որպես քննչական ենթակայության օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ դատախազական հսկողության ոլորտ<sup>35</sup>:

34. Александров А., Марчук А. Подследственность уголовных дел. Электронный ресурс, 2003. [http://www.juristlib.ru/book\\_2772.htm](http://www.juristlib.ru/book_2772.htm)(26.12.2014).

35. Селютин А. В. Проблемы разграничения подследственности в уголовном процессе. Автореф. дисс. ... канд. юрид.наук. М.: 2000. С. 15.

Մինչև 2006թ-ը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները, դատախազը բացարձակ հայեցողություն ուներ ցանկացած գործ հանձնել դատախազության քննիչներին, ավելին՝ դատախազն իրավասու էր քրեական գործը ոստիկանության և այլ գերատեսչությունների մի քննիչից վերցնել և հանձնել այլ քննիչի:

Քննչական ենթակայությունը որոշելու հարցում դատախազի բացարձակ հայեցողությունը, օրինակ՝ ցանկացած քրեական գործ հանձնել դատախազության քննիչին, ինքնին հակասում էր քննչական ենթակայության կանոնների բնույթին: Օրենսդրական հետագա փոփոխություններով փորձ արվեց հստակեցնել և սահմանափակել քննչական ենթակայությունը որոշելու և փոփոխելու դատախազի հայեցողական լիազորությունները:

Ժամանակակից գրականության մեջ նույնպես քննչական ենթակայությունը որոշելու դատախազի լիազորությունները սահմանափակվում են առավելապես քննչական ենթակայության վերաբերյալ վեճերի լուծմամբ<sup>36</sup>, իսկ առանձին հեղինակներ առաջարկում են օրենսդրության մեջ հստակ սահմանել, որ դատախազը քննչական ենթակայության վերաբերյալ վեճը լուծելիս կայացնում է պատճառաբանված որոշում<sup>37</sup>:

Քննչական ենթակայության ինստիտուտի ոլորտում պետք է տարանջատել ՀՀ ազգային ժողովի, դատախազի և քննիչի իրավասությունները:

*Առաջին՝ քննչական ենթակայության կանոնները որոշելու բացառիկ իրավասությունը վերապահված է ՀՀ ազգային ժողովին: Քննչական ենթակայության կանոնների բուն նպատակն է սահմանափակել քրեական վարույթի հանրային մասնակիցների հայեցողությունը կոնկրետ դեպքերով քրեական գործերը չպատճառաբանված կամ որևէ արդարացված շահով չպայմանավորված եղանակով մի նախաքննության մարմնից հանձնել մեկ այլ նախաքննության մարմնի: Քննչական ենթակայության կանոնները որոշելու բացառիկ լիազորությունն օրենսդիր իշխանության մարմնին վերապահելը կոչված է սահմանափակելու քրեական*

36. Захаров Н. В. Теория и практика определения подследственности уголовных дел. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Самара, 2009. С 16.

37. Османова Н. В. Институт подследственности в досудебном уголовном производстве. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2013. С. 9.

վարույթի հանրային մասնակիցների քննչական ենթակայությունը որոշելու և փոփոխելու հայեցողությունը:

Եթե հետևենք այն տրամաբանությանը, որ արդար դատաքննության իրավունքի՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մի շարք երաշխիքներ տարածվում են նաև մինչդատական վարույթի վրա, ապա՝ կարելի է եզրակացնել, որ քրեական գործերի ենթակայությունը, ինչպես քրեական գործերի ընդդատությունը, արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ տարրեր են:

Գրականության մեջ նշվում է, որ քննչական ենթակայությունը և ընդդատությունը նման, իսկ որոշակի առումով՝ նաև նույնաբնույթ ինստիտուտներ են:

Ենթակայությունը և ընդդատությունն ունեն միևնույն նպատակը՝ որոշել այն իրավասու մարմիններին, որոնք օժտված են լրիվ, բազմակողմանի, օբյեկտիվ և որակյալ քննություն կատարելու համար բավարար հատկանիշներով<sup>38</sup>: Թերևս ընդդատության և ենթակայության ինստիտուտների նմանությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ առանձին պետություններում (օրինակ՝ Ֆրանսիա) քրեական գործերի առարկայական ենթակայությունը կախված է գործերի ընդդատությունից:

ՀՀ քր. դատ. օր-ի 24-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող գրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինքներ գործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը): Դատարանների ընդդատության վերը նշված արժեքային հատկանիշները կարող են լիարժեք պահպանված լինել, եթե դատաքննությանը նախորդող քննչական ենթակայությունը նույնպես որոշվի օբյեկտիվ, օրենսդրի կողմից նախապես

<sup>38</sup>. Захаров Н. В. Теория и практика определения подсудственности уголовных дел. Автореф. дисс. ... канд. юрид.наук. Самара, 2009. С 8.

սահմանված չափանիշի հիման վրա՝ բացառելով այդ գործընթացի նկատմամբ կողմերի կամ գործով շահագրգռված այլ անձանց ներգործություն ունենալու հնարավորությունը:

Ելնելով վերը նշված պահանջներից՝ ՀՀ օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածում ընդհանուր առմամբ նախապես սահմանել է այն օբյեկտիվ չափանիշները, որոնց հիման վրա պետք է որոշել, թե քրեական գործերը որ նախաքննության մարմնի կողմից են քննվելու: Այս առումով՝ ոչ դատախազը, ոչ քննիչն իրավասու չեն սահմանելու կամ փոփոխելու օրենսդրի կողմից նախապես սահմանված քննչական ենթակայության կանոնները՝ բացառությամբ օրենսդրի սահմանած հատուկ դեպքերի:

*Երկրորդ՝ դատախազն իրավասու է փոխել ենթակայությունն օրենսդրի կողմից սահմանված բացառիկ դեպքերում:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «2. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական դեկլարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ 3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով...»: Նշված նորմը կարգավորում է դատախազի լիազորությունը քրեական գործը նախաքննության մեկ մարմնից մյուսին հանձնելու վերաբերյալ՝ հղում կատարելով ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի վրա: ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի վրա հղում կատարելով՝ օրենսդիրը սահմանափակում է դատախազի՝ քննչական ենթակայությունը փոխելու հայեցողությունը: Դատախազն իրավասու է փոխել քննչական ենթակայության կանոնները բացառապես ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի իրավակարգավորումների, մասնավորապես՝ այլընտրանքային ենթակայության շրջանակներում: ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի կարգավորումից դուրս քննչական ենթակայությունը փոխելու դատախազի բացարձակ հայեցողությունն ինքնին հակասում է քննչական ենթակայության ինստիտուտի էությանը:

ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենքը դատախազին քննչական

ենթակայությունը որոշելու հայեցողություն է տալիս բացառապես հետևյալ դեպքերում՝

1. տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարություն միացնելու դեպքում,
2. այլընտրանքային ենթակայության դեպքում: Օրինակ՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները: Այս դեպքում դատախազը իրավասու է որոշել, թե որ մարմինը պետք է նախաքննություն կատարի,
3. գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և 190-րդ հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում,
4. ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը: Այս դեպքում դատախազը կարող է գործը հանձնել նախաքննության այլ մարմնի,
5. անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և Հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

Դատախազը չունի բացարձակ հայեցողություն՝ ցանկացած քրեական գործ նախաքննության մեկ մարմնից վերցնել և հանձնել մեկ այլ նախաքննության մարմնի: ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածը չի թույլատրում փոխել քննչական ենթակայությունը, եթե օրենքով սահմանված է այն մարմինը, ով իրավասու է տվյալ քրեական գործով նախաքննություն կատարել: Դատախազը բացառիկ լիազորություն ունի միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում որոշել ենթակայությունը:



*Երրորդ՝ քննիչն իրավասու է, օրենսդրի կողմից նախապես սահմանված ենթակայության կանոններին համապատասխան, գործը քննության համար ուղարկել այլ քննիչի: ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ և սույն օրենսգրքով սահմանված ենթակայության կանոններին համապատասխան՝ գործն ընդունել իր վարույթ կամ քննության համար ուղարկել այլ քննիչի: Քննիչը նշված լիազորությունից օգտվում է այն դեպքում, երբ ենթակայության կանոնների համաձայն հստակ է, որ տվյալ գործով նախաքննությունը պետք է կատարի այլ մարմին կամ միևնույն նախաքննության մարմնի այլ քննիչ: Նշված դեպքում քննիչը չի որոշում ենթակայությունը, քանի որ դա արդեն իսկ նախապես որոշված է օրենքով: Նման դեպքերում քննիչն օրենքի ուժով՝ ի պաշտոնե պարտավոր է կիրառել ենթակայության կանոնները, և կազմակերպել գործի փոխանցումը պատշաճ նախաքննության մարմնին: Այս դեպքում գործն այլ քննիչի ուղարկելով՝ քննիչն իրականացնում է ոչ թե ֆունկցիոնալ, այլ կազմակերպաիրավական լիազորություն: Այս ոլորտում դատախազը, բացի տեղեկացված լինելու իրավունքից, որևէ այլ գործառույթ չունի:*

*Քննիչն իրավասու չէ գործն ուղարկել նախաքննության այլ մարմնի, եթե տվյալ իրավիճակը վերաբերում է դատախազի կողմից ենթակայությունը որոշելու վերը նշված հինգ դեպքերին:*

#### **4. Քննչական բաժնի պետին հասցեագրված՝ դատախազի ցուցումի սահմանները և իրավաչափությունը**

Հսկող (դատավարական ղեկավարում իրականացնող) դատախազի կողմից քննչական բաժնի պետին տրված ցուցումի առարկան և իրավաչափության պայմանները պարզելու նպատակով անհրաժեշտ է համակարգային վերլուծության ենթարկել ստորև նշված հարցադրումները:

*2.1 ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի իմաստով դատախազի կողմից քննիչին և քննչական բաժնի պետին տրված ցուցումի առարկայի համեմատական վերլուծությունը:*

ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ 4) անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ցուցում տալ նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննչական բաժինների պետերին՝ այդ մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ, ... 6) հետաքննության մարմին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ:

Դատախազի կողմից քննիչին տրված ցուցումի պարագայում օրենսդիրը չի հստակեցրել այն դատավարական գործողությունների և ընդունվող որոշումների շրջանակը, որոնց վերաբերյալ դատախազը քննիչին կարող է ցուցում տալ: Նման կարգավորմամբ դատախազն ունի լայն հայեցողություն քննիչին տալու ցուցում՝ քննիչի լիազորությունների մեջ մտնող ցանկացած դատավարական գործողությունների կատարման և որոշումների ընդունման վերաբերյալ: Օրենսդիրը, ի տարբերություն քննիչին տրված ցուցումի առարկայի, հստակեցրել է քննչական բաժնի պետին հասցեագրված ցուցումի առարկան, այն է՝ 1. քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, 2. նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ:

Այսպիսով, նշված դրույթների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի իմաստով, դատախազը իրավասու է ցուցում տալ վարույթն իրականացնող քննիչի իրավասության ներքո գտնվող ցանկացած հարցի կապակցությամբ, իսկ քննչական բաժնի պետին՝ բացառապես քննչական խումբ ստեղծելու՝ վերը նշված երկու հարցադրումների վերաբերյալ:

*2.2 ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ դատախազի կողմից քննչական բաժնի պետին ցուցում տալու իրավասությունը:*

ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազի ցուցումները տրվում են գրավոր և պարտադիր են

քննչական բաժնի պետի համար, որոնք կարող են բողոքարկվել վերադաս դատախազին՝ չկասեցնելով դրանց կատարումը՝ բացառությամբ սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասի 27-րդ կետով նախատեսված դեպքերի: Արդյո՞ք նշված նորմը դատախազին իրավունք է վերապահում քննչական բաժնի պետին տալ այնպիսի ցուցումներ, որոնց առարկան կազմում են քննիչի լիազորությունների մեջ մտնող գործողությունների կատարումը և որոշումների ընդունումը: Հարցին պատասխանելու նպատակով պետք է պարզել. *սուաջին՝* նշված նորմի կարգավորման առարկան և խնդիրը, մասնավորապես՝ արդյո՞ք նշված դրույթը նյութաիրավական իմաստով իրավալիազորող նորմ է, թե՛ ոչ, *երկրորդ՝* մեկնաբանվող նորմում քննիչի լիազորությունները սահմանող ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի վրա հղման իմաստային նշանակությունը:

Առաջին՝ ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասը կարգավորում է դատախազի ցուցումների ձևը, պարտադիրությունը և բողոքարկումը, այլ կերպ ասած՝ քննարկվող նորմը սահմանում է դատախազի կողմից քննչական բաժնի պետին ցուցում տալու նյութաիրավական լիազորության իրականացման վարույթային կարգը: Թեև ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածը սպառնիչ կերպով չի սահմանում դատախազի լիազորությունները, սակայն դատախազի՝ այդ թվում քննչական բաժնի պետին ցուցում տալու լիազորությունները պետք է հստակ և ուղիղ սահմանված լինեն օրենսգրքի համապատասխան հոդվածներում: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը հստակ պահանջում է, որ պաշտոնատար անձի լիազորությունները պետք է սահմանված լինեն օրենքով: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի իրավակարգավորումը մերժում է իրավական նորմերի այնպիսի մեկնաբանությունը, որով պաշտոնատար անձին կվերապահվի լատենտային լիազորություններ: ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը չի ընդգրկում դատախազի ցուցում տալու նյութաիրավական լիազորություն, իսկ հակառակ մեկնաբանությունը կհակասի ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին:

Երկրորդ՝ մեկնաբանվող դրույթում հղում է կատարվում քննիչի լիազորությունները սահմանող 55-րդ հոդվածի վրա, որը պետք է դիտարկել ՀՀ քր. դատ օր-ի 193-րդ հոդվածի 2-րդ մասի հետ ունեցած համակարգային կապերի լույսի ներքո: ՀՀ քր. դատ օր-ի

193-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննչական բաժնի պետն իրավունք ունի անձամբ կատարել նախաքննությունը՝ օգտվելով քննիչի լիազորություններից: ՀՀ քր. դատ օր-ի 193-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համակարգային կապից բխում է, որ քննչական բաժնի պետը, հանդես գալով որպես վարույթ իրականացնող մարմին, իրավասու է առանց կատարելու բողոքարկել դատախազի ցուցումը, եթե դա վերաբերում է ՀՀ քր. դատ. օր-ի 55 –րդ հոդվածի 27-րդ կետով նախատեսված հարցերին:

Այսպիսով, ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման առարկան չի ընդգրկում դատախազի՝ քննչական բաժնի պետին ցուցում տալու նյութաիրավական լիազորություն: Հակառակ մեկնաբանության պարագայում դատախազին կվերապահվի լատենտային լիազորություն, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի կարգավորմանը:

*2.3 Քննիչի վարույթում եղած քրեական գործով քննչական բաժնի պետի կողմից դատախազական գործողություններ կատարելու վերաբերյալ դատախազի ցուցումի իրավաչափությունը:*

Անկախ դատախազի կողմից քննչական բաժնի պետին տրված ցուցումի առարկայի վերաբերյալ առկա մոտեցումներից, մի բան հստակ է. դատախազն իրավասու չէ քննչական բաժնի պետին տալ այնպիսի ցուցում, որի կատարումը դուրս է քննչական բաժնի պետի ընդհանուր լիազորությունների շրջանակից: ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննչական բաժնի պետն իրավունք ունի մասնակցելու քննիչի վարույթում գտնվող քրեական գործով նախաքննության կատարմանը, անձամբ կատարելու նախաքննությունը՝ օգտվելով քննիչի լիազորություններից: Այս նորմից բխում է, որ քննչական բաժնի պետը *քննիչի վարույթում գտնվող քրեական գործով* կարող է *մասնակցել* քննչական գործողություններին, սակայն անձամբ չի կարող *կատարել* քննչական գործողություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ քննչական բաժնի պետը քրեական գործն ընդունում է իր վարույթ և կատարում է նախաքննություն:

Այն դեպքում, երբ քննչական բաժնի պետը տվյալ քրեական գործն ընդունել է իր վարույթ և անձամբ է կատարում նախաքննություն, ապա՝ դատախազը, քննչական բաժնի պետին՝ որպես տվյալ գործով վարույթն իրականացնող քննիչի, տալիս է ՀՀ քր.

դատ. օր-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված՝ քննչական և դատավարական գործողություններ կատարելու ցուցում:

Այս առումով՝ ակնհայտ ապօրինի կհամարվի դատախազի այն ցուցումը, որով քննչական բաժնի պետին կհանձնարարվի քննիչի վարույթում եղած քրեական գործով կատարել քննչական և այլ դատավարական գործողություններ: Եթե քննչական բաժնի պետը դատախազի նման ցուցումի հիման վրա իր վարույթում չգտնվող գործով կատարի դատավարական գործողություններ, ապա դրանով կխախտի ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով՝ քննչական բաժնի պետն օրենքով լիազորված չէ քննիչի վարույթում գտնվող գործով կատարել քննչական և այլ դատավարական գործողություններ:

*2.4 Քննչական բաժնի պետի կողմից քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ դատախազի ցուցումը կատարելու բացասական հետևանքները:*

Եթե գործնականում քննչական բաժնի պետը կատարի քննիչի վարույթում գտնվող գործով քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնելու մասին դատախազի ոչ իրավաչափ ցուցումը, ապա դա կարող է առաջացնել հետևյալ բացասական հետևանքները.

*ա. Քննչական բաժնի պետի կողմից ցուցումի հիման վրա կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության վիճարկումը:* ՀՀ քր. դատ. օր-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից: Ինչպես նշվեց, քննչական բաժնի պետն առհասարակ լիազորված չէ քննիչի վարույթում եղած քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություններ կատարել, ուստի նրա՝ քննչական գործողություններ կատարելու եղանակով ձեռք բերված ապացույցները կճանաչվեն անթույլատրելի՝ համապատասխան

քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի ձեռք բերելու հիմքով:

*բ. Քննիչի դատավարական ինքնուրույնության և դատավարական գործառույթների տարանջատման խախտում:* ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ: Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար: Եթե քննչական բաժնի պետը քննիչի վարույթում եղած քրեական գործով կատարի քննչական գործողություններ, ապա դրանով կխաթարվի քննիչի ինքնուրույնության ինչպես դատավարական, այնպես էլ կրիմինալիստիկական բաղադրատարրերը: Քննիչն է որոշում քննչական գործողությունների կատարման ժամանակը, հերթականությունը, դրանց տակտիկական առանձնահատկությունները և քննիչն է պատասխանատու դրանց համար:

Քննչական բաժնի պետի կողմից քննիչի վարույթում գտնվող գործով քննչական գործողություններ կատարելու դեպքում խաթարվում են նաև քննիչի և քննչական բաժնի պետի գործառույթները: Քննիչի դատավարական գործառույթը քննության իրականացումն է, իսկ քննչական բաժնի պետը քննիչի գործողությունների կազմակերպման նկատմամբ իրականացնում է առավելապես գերատեսչական վերահսկողություն: Գերատեսչական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձը չի կարող նույն վարույթում իրականացնել նաև քննության բովանդակությունը կազմող քննչական գործողություններ: Թերևս դատավարական գործառույթների հստակ տարանջատման նպատակով ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 36-րդ և 37-րդ հոդվածներով կարգավորվում են վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը, վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները: Նախագծի համաձայն՝ քննչական մարմնի ղեկավարը պատասխանատու է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչների կողմից իրականացվող նախաքննության արդյունավետության, այդ թվում՝ դրա պատշաճ

կազմակերպման համար: Քննիչը պատասխանատու է նախաքննության համակողմանիության, դրա բնականոն ընթացքի, քննչական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամանակին կատարելու համար:

**5. Քննիչի վարույթում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնին քննչական գործողություններ կատարելու հանձնարարականի իրավաչափությունը**

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով (դիմել դատարան՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով), ստանում է անձի բնակարանում խուզարկություն կատարելու մասին որոշում և դրա կատարումն հանձնարարում է ոչ թե վարույթն իրականացնող քննիչին, այլ հետաքննության մարմնին:

ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածում նախատեսված է, որ դատախազն իրավասու է հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, հետաքննության մարմնին՝ հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները, իսկ ՀՀ քր. դատ. օր-ի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում նախատեսված է, որ հետաքննության մարմինը քննիչի վարույթում գտնվող՝ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով կատարում է քննիչի, դատախազի հանձնարարությունները, դատախազի ցուցումները: Նշված նորմերը մեկնաբանելիս պետք է տարանջատել երեք իրավիճակ: *Առաջին*՝ դատախազը հետաքննության մարմնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում կարող է նրան հանձնարարել կատարել օրենքով նախատեսված քննչական և այլ դատավարական գործողություններ: *Երկրորդ*՝ դատախազը հետաքննության մարմնի կողմից հետաքննություն (քրեական գործ հարուցելուց հետո

առավելագույնը 10 օր) իրականացնելու ընթացքում կարող է նրան հանձնարարել կատարել օրենքով նախատեսված անհետաձգելի քննչական և այլ դատավարական գործողություններ: *Երրորդ*՝ դատախազը քննիչի վարույթում գտնվող քրեական գործով կարող է հետաքննության մարմնին հանձնարարել կատարել նախաքննության բուն բովանդակությունը չկազմող դատավարական գործողություններ, օրինակ՝ քրեադատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումները: Քննչական գործողությունների կատարումը կազմում է նախաքննության բուն բովանդակությունը, իսկ նախաքննություն իրականացնում են օրենքով նախատեսված նախաքննության մարմինները:

Հետաքննության մարմնին՝ այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումներն իրականացնելու դատախազի հանձնարարության տարածական մեկնաբանման դեպքում կխաթարվի քրեական դատավարության փուլերի սահմանազատման և հանրային սուբյեկտների դատավարական գործառույթների տարանջատման պահանջները: Քննիչի վարույթում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնի քննչական գործողություն կատարելու պրակտիկայի ձևավորման դեպքում հետաքննության մարմինը կվերածվի նախաքննության մարմնի, իսկ հետաքննությունը՝ նախաքննությանը:

Օրենքով նախատեսված են բացառիկ դեպքեր, երբ քննիչն առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարում է հետաքննության մարմնին: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարել հետաքննության մարմնին: Ուստի, քննիչի վարույթում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնին առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարություն կարող է տալ քննիչը:

Քննիչի վարույթում գտնվող գործով առանց քննիչի հանձնարարության հետաքննության մարմնի կողմից կատարված քննչական գործողությունները և ձեռք բերված ապացույցները կարող են համարվել ոչ պատշաճ սուբյեկտի կողմից հավաքված ապացույցներ և ՀՀ քր. դատ. օր-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ճանաչվել անթույլատրելի ապացույց:



## 6. Քննչական մարմնին հասցեագրված՝ վերադաս դատախազի նորմատիվ բնույթի հանձնարարության իրավաչափությունը

Արդյո՞ք վերադաս դատախազն իրավասու է քննչական բաժնի պետին հասցեագրել ընդհանուր բնույթի հանձնարարական՝ որոշակի խումբ քրեական գործով տրամադրելու դատավարական փաստաթղթեր: Օրինակ՝ արդյո՞ք վերադաս դատախազը իրավասու է քննչական վարչության պետին հանձնարարել ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածով հարուցված քրեական գործերով նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելիս 24 ժամվա ընթացքում այդ որոշման պատճենին կից դատախազություն ներկայացնել նաև դեպքի վայրի զննության արձանագրության և դրան կից հավելվածների պատճենները: Սույն հարցադրման կապակցությամբ նշենք, որ վերադաս դատախազի կողմից նախաքննության մարմնին հասցեագրված ոչ անհատական բնույթի հանձնարարականներն իրավաչափ չեն ինչպես քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից:

*4.1. Վերադաս դատախազն իրավասու չէ քննչական բաժնի պետին ներկայացնել ընդհանուր բնույթի պահանջ՝ ստանձին րեասակի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով տրամադրելու դատավարական փաստաթղթերի պատճեններ կամ րեղեկարվություն: Միայն հսկողություն իրականացնող դատախազն է իրավասու կոնկրետ քրեական գործի վարույթն իրականացնող քննիչից պահանջել րվյալ վարույթի վերաբերյալ նյութեր և րեղեկարվություն:*

ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ստուգման համար *հետաքննության մարմնից, քննիչից* պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում: Նշ-

ված դրույթից բխում է, որ նյութեր պահանջելու լիազորություն ունի քրեական գործով հսկողություն իրականացնող դատախազը և ոչ թե վերադաս դատախազը: Պատահական չէ, որ օրենսդիրը սահմանել է, որ դատախազը նյութեր պահանջում է ոչ թե քննչական բաժնի պետից, այլ քննիչից կամ հետաքննության մարմնից, ով կոնկրետ գործով վարույթն իրականացնող պաշտոնատար անձն է:

*4.2. Վերադաս դատախազն իրավասու չէ ընդունել ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների նկատմամբ նորմատիվ (համընդհանուր) բնույթի դատախազական ակտեր (իրավական ակտեր):*

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտն օրենքով սահմանված դեպքերում և կարգով ... ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավական նորմը ... վարքագծի կանոնն է, որը պարտադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սպառնիչ ցանկով նախատեսում է այն սուբյեկտները, ովքեր իրավասու են ընդունելու նորմատիվ իրավական ակտեր, իսկ այդ ցանկում ՀՀ դատախազությունը նախատեսված չէ: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ Սահմանադրությամբ և սույն օրենքով չնախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն:

ՀՀ քննչական կոմիտեի ծառայողներին ոչ անհատական բնույթի հանձնարարություններ տալու լիազորությունը վերապահված է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին և նրա տեղակալներին: Այսպես՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննչական կոմիտեի նախագահը՝ իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, հանձնարարականներ): «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իմաստով ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների հասցեագրված՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի ոչ անհատական

իրավական ակտերը հանդիսանում են ներքին ակտեր, քանի որ նշված օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ներքին ակտ են այն վարքագծի կանոնները, որոնք տարածվում են միայն անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) այն անձանց վրա, ովքեր գտնվում են դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, վարչական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողները, ի թիվս այլ իրավահարաբերությունների, գտնվում են նաև վարչաիրավական հարաբերությունների մեջ, ուստի ՀՀ քննչական կոմիտեի ծառայողներին հասցեագրված ոչ անհատական բնույթի ներքին ակտեր կարող են ընդունել ՀՀ քննչական կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալը: ՀՀ դատախազության պաշտոնատար անձանց՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողներին հասցեագրված ոչ անհատական բնույթի ակտերը ներքին ակտեր չեն, քանի որ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողները և ՀՀ դատախազության պաշտոնատար անձինք գտնվում են բացառապես դատավարական հարաբերությունների մեջ:

## **7. Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելը և դրա իրավական հետևանքները**

ՀՀ քր. դատ. օր-ի 197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ նախաքննության ժամկետը կարող է երկարացնել դատախազը՝ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա: Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ: Ձևավորված պրակտիկայի համաձայն՝ քրեական վարույթ իրականացնող քննիչը հսկողություն իրականացնող դատախազին ներկայացնում է ոչ թե նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշում, այլ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության մասին որոշում, իսկ հսկողություն իրականացնող դատախազը նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշման վրա ստորագրությամբ՝ պարզապես երկարացնում կամ չի երկարացնում նախաքն-

նության ժամկետը<sup>39</sup>: Այս դեպքում դատախազը չի կայացնում նախաքննության ժամկետը երկարացնելու առանձին դատավարական ակտ, մինչդեռ նախաքննության ժամկետը երկարացնում է դատախազը, ով պետք է ներկայացնի նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ իր դիրքորոշումը: Օրենքով կարգավորված չէ, թե դատախազն ինչ դատավարական ակտով է երկարացնում նախաքննության ժամկետը, սակայն նկատի ունենալով, որ նախաքննության ժամկետը երկարացնելը դատավարական գործողություն է, ուստի դատախազը նախաքննության ժամկետը կարող է երկարացնել առանձին պատճառաբանված դատավարական որոշում կայացնելով:

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հսկողություն իրականացնող դատախազը, հիմք ընդունելով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության մասին որոշումը ներկայացնելու՝ օրենքով սահմանված եռօրյա ժամկետը խախտելու փաստը, պարզապես չի երկարացնում նախաքննության ժամկետը: Ընդհանուր կարգի համաձայն՝ ցանկացած միջնորդություն իրավասու մարմնի կողմից քննարկվելու արդյունքում կարող է

---

39. ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածում տարանջատված են «որոշում» և «միջնորդություն» հասկացությունները: Քրեադատավարական օրենսդրության համակարգային վերլուծությունից երևում է, որ քննիչի որոշումը չի կարող միաժամանակ պարունակել միջնորդություն, բացառության օրենքով նախատեսված դեպքերի, որոնք վերաբերում են առավելապես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը: Այսպես ՀՀ քր. դատ. օր-ի 282-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի պատճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար, ՀՀ քր. դատ. օր-ի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը կարող է պատճառաբանված որոշում կայացնել, որում պարունակվում է միջնորդություն դատարանին՝ նշված անձանց նամակագրությունը վերահսկելու համար, ՀՀ քր. դատ. օր-ի 241-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խոսակցությունների լսման և ձայնագրաման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է դատարանին միջնորդություն հարուցելու մասին պատճառաբանված որոշում: Նշված դեպքերում օրենսդիրը հստակ սահմանում է, որ քննիչի որոշումը պարունակում է նաև դատարանին հասցեագրված միջնորդություն, որի քննարկման արդյունքում կայացվում է համապատասխան որոշում: Նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ քրեադատավարական նորմերում նախատեսված չէ, որ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը պարունակում է միջնորդություն: Սակայն նկատի ունենալով, որ միևնույն հարցի վերաբերյալ քրեական վարույթի տարբեր սուբյեկտներ չեն կարող կայացնել պետաիշխանական բնույթի ակտ (որոշում), ուստի քննիչները գործնականում կայացնում են որոշում, որը պարունակում է նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն:

մերժել, սակայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն դատախազի կողմից նախաքննության ժամկետները երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու (նախաքննության ժամկետը չերկարացնելու) իրավական ռեժիմ, ինչպես նաև՝ այդ իրավիճակում քրեական գործի հետագա ընթացքը լուծելու ընթացակարգ: Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելու դեպքում նախաքննությունը հայտնվում է փակուղային իրավիճակում, քանի որ նախաքննության ժամկետից դուրս քննիչն իրավունք չունի կատարելու որևէ դատավարական գործողություն, այդ թվում՝ նախաքննությունն ավարտելուն ուղղված գործողություններ: Այս պարագայում քրեական գործի հետագա ընթացքը մնում է առկախված վիճակում: Ուստի համակարգային մոտեցման դեպքում հասկանալի է, որ դատախազի՝ նախաքննության ժամկետը չերկարացնելու իրավական գործիքի կիրառությունը չի տեղավորվում գործող քրեական արդարադատության տրամաբանության շրջանակներում<sup>40</sup>:

Կարծում ենք՝ դատախազը, ստանալով նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն պարունակող քննիչի պատճառաբանված որոշումը, կարող է կայացնել հետևյալ որոշումներից որևէ մեկը: Առաջին՝ դատախազը, համաձայնելով քննիչի դիրքորոշմանը, կայացնում է առանձին որոշում՝ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը բավարարելու մասին: Երկրորդ՝ դատախազը, մասնակի համաձայնելով քննիչի դիրքորոշմանը, որոշում է կայացնում նախաքննության ժամկետը մասնակի երկարացնելու կամ նախաքննության ժամկետը՝ քննիչի պատճառաբանությունից տարբերվող պատճառաբանությամբ երկարացնելու մասին: Երրորդ՝ դատախազը չի համաձայնում նախաքննության ժամկետը երկարացնելու քննիչի որոշմանը և որոշում է կայացնում քրեական գործի վարույթը կարճելու մասին կամ նախաքննության ժամկետը երկարացնում է այնքանով, որքանով անհրաժեշտ է նախաքննությունն ավարտելու և մեղադրական եզրակացություն կազմելու համար: Ի դեպ, Ոսկրահնայի քրեական դատավարության նոր օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հսկողություն իրականացնող դատախազը մերժում

40. Տեր-Գևորգյան Վ. Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելու կառուցակարգերը: <http://www.aravot.am/2014/10/29/511092/> (25.10.2014):

է երկարացնել նախաքննության ժամկետները, ապա պարտավոր է 5-օրյա ժամկետում կայացնել հետևյալ որոշումներից որևէ մեկը՝ քրեական վարույթը դադարեցնելու մասին որոշում, կամ դիմել դատարան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու միջնորդությամբ, կամ դիմել դատարան՝ մեղադրական ակտով կամ բժշկական բնույթի, կամ դատփարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ ներկայացնելու պահանջը խախտելու դեպքում արդյո՞ք դատախազը կարող է նախաքննության ժամկետները լրացած լինելու պայմաններում երկարացնել նախաքննության ժամկետը: Իրավաբանների որոշակի խումբ կարծում է, որ նախաքննության ժամկետը լրանալուց հետո դատախազն իրավասու չէ երկարացնել այն: Կարծում ենք՝ նման մոտեցումը վիճելի է: Բանն այն է, որ նախ պետք է պարզել, թե նախաքննության ժամկետը քրեական վարույթի որ սուբյեկտների համար է նախատեսում իրավասահմանափակող դրույթներ, այդ ժամկետը ում է հասցեագրված: Կարծում ենք՝ պետք է տարբերակել նախաքննության և դատախազի հսկողական վարույթի համար նախատեսված դատավարական ժամկետները: Նախաքննության ժամկետը բովանդակում է քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու ժամանակային սահմանափակում, ուստի՝ քննիչը դատավարական գործողություններ կարող է կատարել բացառապես նախաքննության ժամկետների շրջանակներում: Նախաքննության ժամկետը լրանալու պայմաններում քննիչի կատարած գործողություններն իրավաչափ չեն: Սակայն նախաքննության ժամկետները հասցեագրված չեն հսկող դատախազին, ուստի նախաքննության ժամկետի լրացած լինելն ինքնին չի խոչընդոտում դատախազին կատարելու իր իրավասության մեջ մտնող դատավարական գործողություններ (օրինակ՝ որոշում կայացնել վարույթը կարճելու մասին), այդ թվում՝ նախաքննության ժամկետը երկարացնելը:

### ԳԼՈՒԽ 3

**ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ  
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ<sup>41</sup>  
(ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

**1. Քննիչի, դատախազի և քննչական  
ստորաբաժանման ղեկավարի գործառույթները  
(քաղվածք ՀՀ քրեական դատավարության  
օրենսգրքի նախագծի Հայեցակարգից<sup>42</sup>)**

4.1. Մինչդատական վարույթում գործող այս սուբյեկտների փոխհարաբերությունների կանոնակարգման հիմքում պետք է դրվի գործառույթային տարանջատման սկզբունքը: Փոխհարաբերությունների առանցքը սուբյեկտ-գործառույթ-լիազորություն շղթան է: Մեկ սուբյեկտը չպետք է միջամտի մյուսի գործառույթի իրականացմանը կամ կրկնօրինակի այն: Միաժամանակ, նշված սուբյեկտների լիազորությունները պետք է օրգանապես բխեն նրանց գործառույթներից և սահմանվեն այն հաշվով, որ ապահովեն հակակշիռների կառուցակարգեր, այլ ոչ թե ձևավորեն ենթակայության հարաբերություններ:

4.2. Մինչդատական վարույթում քննիչի միակ գործառույթը քննության իրականացումն է, նախաքննություն կատարելը: Այս գործառույթի իրականացման շրջանակներում քրեական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար քննիչը լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ և իրականացնել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ: Քննիչը պատասխանատու է նախաքննության ընթացքի, իր ընդունած որոշումների և իրականացրած գործողությունների համար: Քննիչի դատավարական ինքնուրույնությունը նշանակում է նաև, որ իրա-

41. ՀՀ ազգային ժողովի հինգերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ:

42. ՀՀ կառավարությունը 2011թ.-ի ապրիլի 10-ի թիվ 9 արձանագրային որոշում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին»:

վունք ունի դատախազի հանձնարարությունները և որոշումները բողոքարկել վերադաս դատախազին, ինչպես նաև հսկող դատախազին բողոքարկել քննչական ստարաբաժանման ղեկավարի հանձնարարություններն ու որոշումները:

4.3. Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով դատախազն օժտված է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու բացառիկ գործառույթով: Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ենթադրում է դատախազի կողմից օրենքի խախտումների բացահայտմանը, վերացմանը և նախազգուշացմանն ուղղված իր հսկողական լիազորությունների իրացում:

4.4. Թեև նախաքննությունը գրեթե ամբողջությամբ գտնվում է դատախազական հսկողության ներքո, և քննիչի կողմից ընդունվող որոշումները և իրականացվող գործողությունները դատախազական հսկողության պարտադիր օբյեկտ են, սակայն հաշվի առնելով բացառապես քննիչի քննության գործառույթի իրականացման հանգամանքը և ելնելով քննիչի՝ որպես նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի օրինապահության կանխավարկածից՝ դատախազը կարող է ստուգել միայն արդեն ընդունված որոշման կամ կատարված գործողության օրինականությունը, ինչպես նաև դրա արդյունքում ձեռնարկել օրինականության խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ:

4.5. Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ներառում է այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են քննիչին օրինականության խախտումների վերացմանն ուղղված հանձնարարություններ տալը, քննչական գործողությունների կատարմանը մասնակցելը, քննիչի գործողությունների դեմ բերված բողոքները քննելը, քննիչի ընդունած որոշումները վերացնելը, քննիչին վարույթից հեռացնելը, մեղադրական եզրակացությունը կամ մեղադրական ակտը հաստատելը և այլն:

4.6. Դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի իրացումը չի նշանակում դատախազի քննության ընթացքի կանխորոշում կամ ուղղորդում, քննիչի փոխարեն որոշումների ընդունում կամ գործողությունների կատարում: Նման



մտեցման պայմաններում անհարկի չի սահմանափակվի նաև քննիչի դատավարական ինքնուրույնությունը:

4.7. ՀՀ-ում մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գոյություն ունեցող համակարգի պայմաններում քննչական ստորաբաժանման ղեկավարը պետք է օժտված լինի քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու, այսինքն՝ գերատեսչական վերահսկողություն իրականացնելու գործառնություն, ինչը ենթադրում է իր ենթակայությամբ գործող քննիչների նկատմամբ մեթոդական, կազմակերպական և աշխատանքների արդյունավետ իրականացման համար վերահսկողական լիազորությունների իրականացում: Դրանք պետք է ուղղված լինեն քննիչի գործունեությանը օժանդակելուն:

4.8. Միաժամանակ, պետք է ելնել այն հիմնարար գաղափարից, որ քննչական ստորաբաժանման ղեկավարին որոշակի լիազորությունների վերապահումը չպետք է խախտի քրեական դատավարության սուբյեկտների գործառնությունների ներդաշնակ հարաբերակցությունը և չպետք է հանգեցնի դատախազի փոխարինմանը քննչական ստորաբաժանման ղեկավարով: Պետք է բացառվեն նրանց միջև մրցակցությունն ու լիազորությունների կրկնությունը: Ընդ որում, քննչական ստորաբաժանման ղեկավարին ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքով վերապահվելիք լիազորությունները պետք է ունենան խիստ որոշակի շրջանակ:

4.9. Մասնավորապես, քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու նպատակով քննչական ստորաբաժանման ղեկավարը պետք է իրավունք ունենա ա) քննիչին հանձնարարել նախաքննության կատարումը բ) միևնույն ստորաբաժանման շրջանակներում վարույթը մի քննիչից հանձնել մյուսին. գ) վարույթից հեռացված քննիչին փոխարինել այլ քննիչով. դ) ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ դատախազի հանձնարարությամբ ձևավորել քննչական խումբ. ե) հետևել քննիչի կողմից դատախազի և քննչական մարմնի հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանքի տակ պահելու ժամկետների պահպանմանը. զ) գործն ընդունել իր վարույթ և անձամբ կատարել նախաքննություն. է) քննիչին տալ իր գործառնություններ:

4.10. Դրա հետ մեկտեղ, քննչական ստորաբաժանման ղեկավարը չպետք է քննիչին հանձնարարված վարույթի շրջանակներում ընդունի որոշումներ կամ կատարի քննչական կամ այլ դատավարական գործողություններ, վերացնի քննիչի որոշումները կամ նրան տա քննության ընթացքը կանխորոշող հանձնարարություններ:

## **2. Քրեական վարույթի հանրային մասնակիցների պատասխանատվությունը և փոխհարաբերությունները**

### **Հոդված 35. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պարասխանապրությունը**

1. Քրեական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս վարույթի հանրային մասնակիցը գործում է ինքնուրույն՝ հիմնվելով օրենքի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու անձի հանձնարարությունների վրա: Վարույթի հանրային մասնակիցը պարասխանապրու է ներքին համոզմունքի վրա հիմնված իր վարութային ակտերի համար:

2. Դատախազը պարասխանապրու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, հետաքննության և նախաքննության օրինականության, հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, ինչպես նաև դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պերական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման համար:

3. Քննչական մարմնի ղեկավարը պարասխանապրու է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչների կողմից իրականացվող նախաքննության արդյունավետության, այդ թվում՝ դրա պարշաճ կազմակերպման համար:

4. Քննիչը պարասխանապրու է նախաքննության համակողմանիության, դրա բնականոն ընթացքի, քննչական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամանակին կատարելու համար:

5. Հետաքննության մարմինը պարասխանապրու է գաղտնիքի քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական մի-

*ընդառուններն օրենքով սահմանված կարգով, ժամանակին և արդյունավետ կարարելու համար:*

1. Վարույթի հանրային մասնակիցներն են՝ դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը, հետաքննիչը (ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 12-րդ կետ): Դատարանը թեև հանրային իշխանության պետական մարմին է, սակայն քրեադատավարական իմաստով վարույթի հանրային մասնակից չէ, ուստի մեկնաբանվող հոդվածը չի կարգավորում դատական իշխանության մարմինների հետ առնչվող հարաբերությունները:

2. Վարույթի հանրային մասնակիցներն իրենց գործունեությունն իրականացնում են ինքնուրույն, դատավարական գործողությունները և որոշումները կայացնում են ներքին համոզմունքի հիման վրա: Մասնավորապես քննիչը, դատախազը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ՝ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 105-րդ հոդվածի 2-րդ մաս): Հանրային մեղադրողն առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանում է ապացույցների վրա հիմնված իր ներքին համոզմամբ (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 284-րդ հոդվածի 1-ին մաս): Վարույթի հանրային մասնակիցների գործունեության հիմքում ընկած է քրեական դատավարությունը կարգավորող օրենսդրությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, ՀՀ քր. դատ. օրենսգիրքը, ինչպես նաև դրանց համապատասխան ընդունված այլ օրենսգրքերը և օրենքները:

3. Քրեական վարույթի հանրային մասնակիցներն օժտված են հարաբերական ինքնուրույնությամբ: Այսպես՝ նախաքննության և հետաքննության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ինքնուրույնությունն իրավաչափորեն սահմանափակված է մի կողմից՝ գերատեսչական վերահսկողությամբ (գործադիր իշխանության մարմիններ են, ուստի նրանց վրա տարածվում է գործադիր իշխանությանը հատուկ ենթակայության սկզբունքները), մյուս կողմից՝ նրանց գործունեության օրինականության նկատմամբ

իրականացվում է դատախազական հսկողություն, կիրառվում են դատական երաշխիքներ: ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որտեղ նույնպես գործում են ենթակայության փոխհարաբերություններ: Ուստի վարույթի հանրային մասնակիցների գործունեությունը հիմնված է նաև օրենքի շրջանակներում տրված հանձնարարությունների վրա:

4. «Վարույթի հանրային մասնակիցների պատասխանատվությունը» հասկացությունը նշանակում է, որ դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը և հետաքննիչը դրական (պոզիտիվ) պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնական գործառույթները, պարտականությունները պատշաճ իրականացնելու համար: Վարույթի հանրային մասնակիցներն ի պաշտոնե պարտավոր են օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դրսևորել ակտիվություն, կատարել անհրաժեշտ գործողություններ և ընդունել որոշումներ: Օրինակ՝ հսկողություն իրականացնող դատախազը պարտավոր է միջոցներ ձեռնարկել մարդու իրավունքների ապօրինի սահմանափակումները վերացնելու ուղղությամբ:

5. Վարույթի հանրային մասնակցի դրական պատասխանատվության բովանդակությունը կախված է նրա դատավարական գործառույթներից և լիազորություններից: Վարույթի հանրային մասնակիցը չի կարող պատասխանատվություն կրել որևէ գործողության կամ անգործության համար, եթե այդ ակտերը չեն բխում տվյալ մարմնի կամ պաշտոնատար անձի գործառույթներից և լիազորություններից:

6. Դատախազի պատասխանատվության ծավալը բխում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում թվարկված ՀՀ դատախազության գործառույթներից և դատավարական լիազորություններից, մասնավորապես՝ դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, հետաքննության և նախաքննության օրինականության, հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, ինչպես նաև դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման համար: Մեկնաբանվող հոդվածում օգտագործվում է «դատախազ» եզ-

րույթը, ուստի նշված ոլորտների համար պատասխանատու է ոչ միայն հսկող դատախազը, այլ նաև վերադաս դատախազը՝ իր լիազորությունների շրջանակում: Օրինակ՝ վերադաս դատախազը պատասխանատու է քննչական մարմնի ղեկավարի, քննիչի կամ հետաքննության մարմնի պետի անօրինական որոշումը վերացնելու և դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ հսկող դատախազին միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ հանձնարարություններ չտալու համար :

7. Քննչական մարմնի ղեկավարի պատասխանատվության ծավալը բխում է ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 40-րդ հոդվածով սահմանված լիազորություններից, որտեղ տարբերակված են վերադաս և անմիջական վերադաս հանդիսացող քննչական մարմնի ղեկավարների լիազորությունները: Քննչական մարմնի ղեկավարը պատասխանատու է նախաքննության արդյունավետության, այդ թվում՝ դրա պատշաճ կազմակերպման համար, մասնավորապես՝ քննիչների միջև աշխատանքային ծանրաբեռնվածության համաչափության պահպանման, նախաքննության կատարումը մասնագիտացման սկզբունքով հանձնարարելու, քրեական վարույթի օպերատիվությունը և ողջամիտ ժամկետները պահպանելու նպատակով քննչական խումբ ստեղծելու, կոնկրետ քննիչի կողմից իրականացվող վարույթով միևնույն ստորաբաժանման քննիչներին առանձին ապացուցողական կամ այլ վարույթային գործողությունների կատարումը հանձնարարելու, քննիչի կողմից քրեական հետապնդման և կալանավորման ժամկետները պահպանելու, դատախազի հանձնարարությունները կատարելու համար:

8. Քննիչը պետական պաշտոնատար անձ է, ով իր իրավատության սահմաններում քրեական վարույթի ընթացքում իրականացնում է նախաքննություն, ուստի պատասխանատու է նախաքննության համակողմանիության, դրա բնականոն ընթացքի, քննչական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամանակին կատարելու համար: Հետաքննության մարմինը նախաքննության շրջանակներում իրավասու է կատարել գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ուստի պատասխանատու է գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառում-

ներն օրենքով սահմանված կարգով, ժամանակին և արդյունավետ կատարելու համար:

**Հոդված 36. Վարույթի հանրային մասնակիցների փոխարարությունները**

1. Վերադաս դատախազն իրավասու է հանձնարարություն փայ հսկող դատախազին՝ նրա իրավասության ներքո գրնվող ցանկացած հարցի կապակցությամբ:

2. Իր իրավասության սահմաններում վերադաս դատախազի փված հանձնարարությունը պարտադիր է հսկող դատախազի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հսկող դատախազի կարծիքով նման հանձնարարությունն անօրինական է կամ անհիմն: Այդ դեպքում հսկող դատախազը, առանց վերադաս դատախազի հանձնարարությունը կատարելու, առարկություն է ներկայացնում հանձնարարություն փված դատախազի վերադասին:

3. Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն փայ՝

1) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պերին՝ նրանց կատարած անօրինական գործողությունը դադարեցնելու և (կամ) դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ.

2) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պերին՝ նրանց անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ.

3) քննիչին քրեական հետապնդման հարուցման կամ դադարեցման հարցը լուծելու, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պերական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ:

4. Իր իրավասության սահմաններում հսկող դատախազի փված հանձնարարությունը պարտադիր է քննչական մարմնի ղեկավարի, քննիչի և հետաքննության մարմնի պերի համար, սակայն վերջիններս իրավասու են իրենց հասցեագրված հանձնարարության վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին: Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է վերադաս դատախազին գրավոր առարկություն ներկայացնել նաև իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին հասցեագրված հանձնարարության կապակցությամբ:

5. Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է հանձնարարություն տալ իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին՝ նախաքննության արդյունավետությանը վերաբերող ցանկացած հարցի, այդ թվում՝ կոնկրետ ապացուցողական գործողություն կատարելու կապակցությամբ:

6. Իր իրավասության սահմաններում քննչական մարմնի ղեկավարի տված հանձնարարությունը պարտադիր է քննիչի համար, սակայն վերջինս իրավասու է դրա վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կատարումը:

7. Քննիչն իրավասու է հանձնարարություն տալ հետաքննության մարմնին՝ նախաքննության համակողմանիությունը և քննականոն ընթացքն ապահովելու կապակցությամբ:

8. Իր իրավասության սահմաններում քննիչի տված հանձնարարությունը պարտադիր է հետաքննության մարմնի համար, սակայն հետաքննության մարմնի պետն իրավասու է դրա վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազին՝ կամ քննչական մարմնի ղեկավարին՝ չկասեցնելով հանձնարարության կատարումը:

1. Վարույթի հանրային մասնակիցները դատավարական տարաբնույթ փոխհարաբերությունների մեջ են, օրինակ՝ քրեական հետապնդման հարուցման, մեղադրական եզրակացության հաստատման ոլորտում դատախազի և քննիչի փոխհարաբերությունները: Սակայն մեկնաբանվող հոդվածը կարգավորում է միայն վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները հանձնարարություններ տալու ոլորտում, մասնավորապես՝ հանձնարարության առարկան, սուբյեկտների շրջանակը, կասեցման հնարավորությունը և բողոքարկման կարգը: Հանձնարարությունը՝ դատախազի կողմից քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին կամ քննիչի կողմից հետաքննության մարմնին՝ իրենց իրավասության սահմաններում տրվող գրավոր հրահանգ է պարզելու որոշակի հանգամանքներ, կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 6-րդ հոդվածի 49-րդ կետ): Հանձնարարությունը պարտադիր է հանձնարարություն ստացած պաշտոնատար անձի համար:

2. Վերադաս դատախազն իր իրավասության սահմաններում կարող է հանձնարարություն տալ հսկող դատախազին և քննչական մարմնի ղեկավարին: Վերադաս դատախազն իրավասու չէ հանձնարարություն տալ քրեական վարույթն իրականացնող քննիչին:

2.1 Վերադաս դատախազը կարող է հանձնարարություն տալ հսկող դատախազին՝ նրա իրավասության ներքո գտնվող ցանկացած հարցի կապակցությամբ: Եթե հսկող դատախազն այն համոզմանն է, որ վերադաս դատախազի հանձնարարությունն անօրինական է կամ անհիմն, ապա առանց այն կատարելու առարկություն է ներկայացնում հանձնարարություն տված դատախազի վերադասին:

2.2 Օրենքը սպառիչ սահմանում է քննչական մարմնի ղեկավարի իրավասության մեջ մտնող այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ վերադաս դատախազը կարող է հանձնարարություն տալ քննչական մարմնի ղեկավարին. դրանք են՝ նախաքննություն սկսելու, համատեղ քննչական խմբի կողմից վարույթն իրականացնելու, քննչական ենթակայության կանոններին համապատասխան՝ վարույթը նախաքննության մեկ այլ մարմնին հանձնելու վերաբերյալ:

3. Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալ քննչական մարմնի ղեկավարին, քննիչին և հետաքննության մարմնի պետին: Օրենքը սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ հսկող դատախազը կարող է հանձնարարություն տալ:

3.1 Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալ քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց կատարած անօրինական գործողությունը դադարեցնելու և (կամ) դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ: Օրինակ՝ հսկող դատախազը քննիչին հանձնարարում է դադարեցնել մեղադրյալի հարցաքննությունը, եթե լրացել է հարցաքննության՝ օրենքով նախատեսված ժամանակը: Նկատի ունենալով, որ քննչական մարմնի ղեկավարը քրեական վարույթի շրջանակներում ապացուցողական գործողություններ կատարելու իրավասություն չունի, ուստի բացակայում է քննչական մարմնի ղեկավարի ապօրինի գործողությունները դադարեցնելու վերաբերյալ դատախազի հանձնարարության առարկան: Քննչական



մարմնի ղեկավարի գործողությունները դրսևորվում են առավելապես քննիչին հանձնարարություններ տալու և որոշումներ կայացնելու ձևով, ուստի եթե քննչական մարմնի ղեկավարը քննիչին տվել է ապօրինի հանձնարարություն, ապա հսկող դատախազը վերացնում է հանձնարարությունը և քննչական մարմնի ղեկավարին հանձնարարում է չեզոքացնել դրա հետևանքները: Օրինակ՝ քննչական մարմնի ղեկավարը նախաքննության կատարումը հանձնարարում է արձակուրդում գտնվող քննիչին: Հսկող դատախազը վերացնում է ապօրինի հանձնարարությունը, այնուհետև քննչական մարմնի ղեկավարին հանձնարարություն է տալիս նախաքննության կատարումը հանձնարարել մեկ այլ քննիչի՝ առանց նշելու քննիչի անձը: Հսկող դատախազը հետաքննության մարմնի պետին կարող է հանձնարարել դադարեցնել անօրինական կարգով իրականացվող գաղտնի քննչական գործողությունները:

3.2 Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալ քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ: Օրինակ՝ հսկող դատախազը վերացնում է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց՝ բացակայելու արգելք կիրառելու մասին քննիչի ապօրինի որոշումը և հանձնարարում է քննիչին անհապաղ վերադարձնել մեղադրյալի անձնագիրը: Մեկ այլ օրինակ՝ քննչական մարմնի ղեկավարը, առանց վերադաս դատախազի գրավոր համաձայնության, որոշում է կայացրել վարույթը մի քննիչից հանձնել մեկ այլ քննիչի, որի արդյունքում փոխվել է նախաքննության կատարման վայրը: Այս դեպքում հսկող դատախազը վերացնում է քննչական մարմնի ղեկավարի անօրինական որոշումները և նրան հանձնարարություն է տալիս քրեական վարույթը վերադարձնել նախաքննության կատարման՝ օրենքով նախատեսված վայրի քննչական ստորաբաժանում: Հսկող դատախազը իրավասու է վերացնել հետաքննության մարմնի պետի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին որոշումը և նրան հանձնարարություն տալ չեզոքացնելու օրենքի խախտման հետևանքները:

Հսկող դատախազի հանձնարարությունն արտացոլվում է ոչ թե անօրինական որոշումը վերացնելու մասին դատախազի որոշման մեջ, այլ առանձին դատավարական փաստաթղթում:

3.3 Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալ քննիչին՝ քրեական հետապնդման հարուցման կամ դադարեցման հարցը լուծելու, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ: Հսկող դատախազն այս կետով քննիչին հանձնարարություն է տալիս ապացուցողական և այլ վարության գործողություններ կատարելու եղանակով պարզել դատախազի սահմանադրական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ փաստական հանգամանքներ: Հսկող դատախազը հանձնարարության մեջ նշում է միայն իրեն անհրաժեշտ փաստական հանգամանքների շրջանակը: Հսկող դատախազը իրավասու չէ ուղղորդել քննիչին և հանձնարարության մեջ նշել, թե ինչ ապացուցողական կամ վարության գործողություններ կատարելու եղանակով է անհրաժեշտ պարզել փաստական հանգամանքները: Քննիչը՝ որպես նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձ, ինքնուրույն կամ քննչական մարմնի ղեկավարի հետ համատեղ է որոշում այն ապացուցողական գործողությունները, որոնց միջոցով պետք է պարզել հսկող դատախազին անհրաժեշտ փաստական հանգամանքները:

3.4 Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալ քննիչին՝ վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, հարկադրանքի միջոց կիրառելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 41-րդ հոդվածի 23-րդ կետ): Դատախազը նման հանձնարարություն է տալիս այն դեպքում, երբ ակնհայտորեն առակ են նախաքննությունն ավարտելու կամ հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմքեր, սակայն քննիչը դրսևորում է անգործություն: Այսպես՝ մեղադրյալը պարբերաբար սպառնում է տուժողի կյանքին և առողջությանը, ինչն ակնհայտորեն խափանման միջոց կիրառելու հիմք է, սակայն քննիչը չի կատարում խափանման միջոց կիրառելու իր պոզիտիվ պարտականությունը: Հսկող դատախազը, պատասխանատու լինելով նախաքննության օրինականության համար, ի պաշտոնե պարտավոր է միջոցներ ձեռնարկել վերացնելու նախաքննությունն ավարտելու կամ հարկադրանքի միջոցներ կիրառելու ոլորտում քննիչի անգործությամբ դրսևորված խախտումները:

3.5 Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալ քննիչին՝ ազատ արձակելու կալանավորված անձին (ՀՀ քր. դատ. օր-ի 41-րդ հոդվածի 6-րդ կետ):

4. Քննչական մարմնի ղեկավարն իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին իրավասու է հանձնարարություն տալ նախաքննության կատարման վերաբերյալ, միննույն ստորաբաժանման քննիչներին այլ քննիչի կողմից իրականացվող վարույթով առանձին ապացուցողական կամ այլ վարույթային գործողությունների կատարման վերաբերյալ (առանց քննչական խումբ ստեղծելու), դատախազի հանձնարարությամբ վերադարձված քրեական գործով վարույթը շարունակելու վերաբերյալ, նախաքննության արդյունավետությանը վերաբերող ցանկացած հարցի, այդ թվում՝ կոնկրետ ապացուցողական գործողություն կատարելու վերաբերյալ: Քննիչը հետաքննության մարմնի հանձնարարում է կատարել գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ձերբակալման, կալանավորման վերաբերյալ որոշումները:

5. Վերադաս դատախազի հանձնարարության վերաբերյալ հսկող դատախազը գրավոր առարկություն է ներկայացնում հանձնարարություն տված դատախազի վերադասին: Հսկող դատախազի հանձնարարության վերաբերյալ քննչական մարմնի ղեկավարը, քննիչը և հետաքննության մարմնի պետը գրավոր առարկություն են ներկայացնում վերադաս դատախազին: Քննչական մարմնի ղեկավարի հանձնարարության վերաբերյալ քննիչը գրավոր առարկություն է ներկայացնում հսկող դատախազին: Քննիչի հանձնարարության վերաբերյալ հետաքննության մարմնի պետը գրավոր առարկություն է ներկայացնում հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին:

5.1 Թեև մեկնաբանվող հոդվածում սահմանված է, որ քննիչի հանձնարարության վերաբերյալ հետաքննության մարմնի պետն առարկություն կարող է ներկայացնել նաև քննչական մարմնի ղեկավարին, սակայն քննիչի հանձնարարությունը վերացնելու լիազորություն ունի միայն հսկող դատախազը, ուստի քննիչի հանձնարարության օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ հարցը կարող է լուծել միայն հսկող դատախազը:

6. Օրենսդիրն առանձնացրել է հանձնարարության վերաբերյալ առարկություն ներկայացնելիս՝ հանձնարարության կատարելու (կամ չկատարելու) երկու իրավիճակ. առարկություն ներկայացնել՝ հանձնարարության կատարումը կասեցնելով (առանց կատարելու) և առարկություն ներկայացնել՝ առանց հանձնարարության կատարումը կասեցնելու (այն կատարելով): Առաջին իրավիճակը վերաբերում է, երբ հսկող դատախազն առարկություն է ներկայացնում հանձնարարություն տված դատախազի վերադասին՝ կասեցնելով դրա կատարումը (առանց կատարելու), կամ քննիչը առարկություն է ներկայացնում վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, հարկադրանքի միջոց կիրառելու մասին հսկող դատախազի հանձնարարության վերաբերյալ՝ առանց այն կատարելու: Առարկություն ներկայացնել՝ առանց հանձնարարության կատարումը կասեցնելու դեպքերն են՝ քննիչը առարկություն է ներկայացնում հսկող դատախազի հանձնարարությունների վերաբերյալ վերադաս դատախազին՝ բացառությամբ վերը նշված դեպքերի (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 41-րդ հոդվածի 22-րդ կետ), քննիչը առարկություն է ներկայացնում քննչական մարմնի ղեկավարի հանձնարարության վերաբերյալ հսկող դատախազին, հետաքննության մարմնի պետը առարկություն է ներկայացնում քննիչի հանձնարարության վերաբերյալ հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին:

### **3. Վերադաս դատախազի և հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում**

#### *Հոդված 37. Վերադաս դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում*

*Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝*

*1) առերևույթ հանցագործության հարկանիշների առկայության դեպքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն և սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան՝ քննչական մարմնի ղեկավարին անհապաղ հանձնարարություն է տրախի նախաքննություն սկսելու մասին.*

2) հեղափոխության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը հանձնարարում է ստորադաս դատախազին կամ այն իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդատարական վարույթում հսկող դատախազի լիազորություններից.

3) անհրաժեշտության դեպքում հեղափոխության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը հանձնարարում է մի քանի դատախազների և նրանց միջև կատարում աշխատանքի բաժանում.

4) իր որոշմամբ հսկող դատախազին հեռացնում է վարույթից և նախաքննության ու հեղափոխության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը հանձնարարում այլ դատախազի կամ այն իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդատարական վարույթում հսկող դատախազի լիազորություններից.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր որոշմամբ փոխում է հսկող դատախազին.

6) որոշում է կայացնում հսկող դատախազին հայրնված բացարկի, ինչպես նաև նրա ինքնաբացարկի կապակցությամբ.

7) մի քանի քննչական մարմինների ղեկավարներին հանձնարարում է վարույթն իրականացնել համատեղ քննչական խմբի կողմից.

8) իր որոշմամբ, քննչական ենթակայության կանոններին համապատասխան, վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մեկ այլ մարմնի՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով.

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններին քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու միջնորդություններով.

10) վերացնում է հսկող դատախազի անօրինական կամ անհիմն որոշումները և հանձնարարությունները.

11) որոշում է կայացնում հսկող դատախազի հանձնարարությունների կամ վարույթային ակտերի վերաբերյալ հեղափոխության

մարմնի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի առարկությունների կապակցությամբ, ինչպես նաև վերադաս դատախազի հանձնարարությունների կամ վարությանին ակտերի վերաբերյալ հսկող դատախազի առարկությունների կապակցությամբ.

12) որոշում է կայացնում հսկող դատախազի վարությանին ակտերի դեմ բերված վարույթի մասնավոր մասնակիցների կամ այլ անձանց բողոքների կապակցությամբ.

13) մինչդատական վարույթի ընթացքում իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

1. Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը: Դատախազությունում ծառայողական ենթակայության հարաբերությունները կարգավորվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ որի համաձայն ՀՀ գլխավոր դատախազը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ: Գլխավոր դատախազի տեղակալը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ՝ իր համակարգման ոլորտում: Մարզի դատախազը վերադաս է մարզի դատախազության բոլոր դատախազների նկատմամբ: Երևան քաղաքի դատախազը վերադաս է Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների կազմում գործող դատախազների նկատմամբ: Զինվորական դատախազը վերադաս է կայազորների զինվորական դատախազների, զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների կազմում գործող դատախազների նկատմամբ:

Մեկնաբանվող հոդվածը կարգավորում է վերադաս դատախազի լիազորությունները միայն մինչդատական վարույթում, իսկ վերադաս դատախազ և հանրային մեղադրող հարաբերությունների կարգավորումը դուրս է սույն հոդվածի շրջանակներից:

2. Քրեական վարույթ նախաձեռնելու ոլորտում վերադաս դատախազն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

նախ՝ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով նախատեսված աղբյուրից առերևույթ հանցագործության մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչ-

յոր դեպքում դատախազն անհապաղ կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն: Թեև հողվածում նշվում է դատախազի վարույթ նախաձեռնելու մասին, սակայն այս դրույթը համադրելով մեկնաբանվող հողվածի հետ, պարզ է դառնում, որ նշված լիազորությունն իրականացնում է վերադաս դատախազը: Քրեական վարույթ նախաձեռնելու լիազորությունը վերադաս դատախազին վերապահելու հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ այս փուլում դեռ որոշված չէ հսկողություն իրականացնող դատախազը:

*Երկրորդ՝* իր հանձնարարությամբ որոշում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին կամ այն իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդատական վարույթում հսկող դատախազի լիազորություններից:

*Երրորդ՝* օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան՝ քննչական մարմնի ղեկավարին անհապաղ հանձնարարություն է տալիս նախաքննություն սկսելու մասին:

Վերադաս դատախազը քննչական մարմնի ղեկավարին պետք է տեղեկացնի այն դատախազի անունը, ազգանունը և աշխատանքային հասցեն, ում հանձնարարվել է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ իրականացնել հսկողություն: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 149-րդ հողվածի 5-րդ մասի համաձայն՝ քննիչը վարույթի մասնավոր մասնակիցներին և վարույթին օժանդակող անձանց պարտավոր է հայտնել տվյալ վարույթով հսկող դատախազի անունը, ազգանունը և աշխատանքային հասցեն: Քննիչն այս պարտականությունը կարող է կատարել, եթե նախաքննություն կատարելու մասին քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությանը զուգահեռ տեղեկանում է նաև հսկողություն իրականացնող դատախազի տվյալներին: Վերադաս դատախազը նախաքննություն սկսելու և հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու մասին հանձնարարությունը տալիս է պարզ մակագրության եղանակով:

3. Վերադաս դատախազն անհրաժեշտության դեպքում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը հանձնարարում է մի քանի դատախազների և

նրանց միջև կատարում աշխատանքի բաժանում: Այս նորմով սահմանվում է վերադաս դատախազի կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով դատախազների խումբ ձևավորելու լիազորությունը: Օրենքով նախատեսված չէ, թե ինչ հիմքերի առկայության դեպքում վերադաս դատախազը կարող է հսկողությունը հանձնարարել մի քանի դատախազների, սակայն գործնականում դրա անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել վարույթի բարդությամբ կամ դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության ծավալով, մասնավորապես՝ մեղադրյալների և նրանց պաշտպանների քանակով և այլ հանգամանքներով: Օրենքով սահմանված է, որ վերադաս դատախազը դատախազների խմբի անդամների միջև կատարում է աշխատանքի բաժանում: Վերադաս դատախազը հանձնարարականում պետք է հստակ սահմանի, թե որ դատախազն է իրավասու կայացնել քրեական հետապնդման տնօրինման հետ կապված կենտրոնական որոշումները, մասնավորապես՝ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, հաստատելու մեղադրական եզրակացությունը:

4. Վերադաս դատախազն իրավասու է իր որոշմամբ հսկող դատախազին հեռացնել վարույթից: ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 148-րդ հոդվածով որպես դատավարական սանկցիա նախատեսված է վարույթից հեռացնելը, սակայն նշված հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ մինչդատական վարույթի ընթացքում նշված սանկցիան կիրառվում է բացառապես փաստաբանի և օրինական ներկայացուցչի նկատմամբ, իսկ դատարանում նաև՝ հանրային մեղադրողի նկատմամբ, ուստի ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 148-րդ հոդվածի իմաստով հսկողություն իրականացնող դատախազին վարույթից հեռացնելը չի դիտվում որպես դատավարական սանկցիա, սակայն իր էությամբ այն դատավարական պատասխանատվության միջոց է: ՀՀ քր. դատ. օր-ի նախագիծը չի նախատեսում վերադաս դատախազի կողմից հսկողություն իրականացնող դատախազին վարույթից հեռացնելու հիմքերը, սակայն այն կարող է կիրառվել բացասական հիմքերով: Այսպես՝ վերադաս դատախազը հսկողություն իրականացնող դատախազին պատճառաբանված որոշմամբ հեռացնում է վարույթից նրա կողմից օրենքի և իրավական այլ ակտերի պահանջների էական



խախտումներ թույլ տալու, կամ իր պարտականությունները պատշաճ չկատարելու, կամ տվյալ գործով իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին իրազեկված լինելու պայմաններում ինքնաբացարկի միջնորդություն չներկայացնելու դեպքում:

5. Վերադաս դատախազն իրավասու է իր որոշմամբ փոխել հսկողություն իրականացնող դատախազին: Հսկողություն իրականացնող դատախազին փոխելը, ի տարբերություն հսկողություն իրականացնող դատախազի վարույթից հեռացնելու ինստիտուտի, պատասխանատվության միջոց չէ և կիրառվում է դրական հիմքերով: Այսպես՝ վերադաս դատախազը պատճառաբանված որոշմամբ փոխում է հսկողություն իրականացնող դատախազին ստորադաս դատախազի նկատմամբ հայտնված բացարկը կամ ինքնաբացարկը բավարարելու, կամ հսկողություն իրականացնող դատախազի արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու, կամ հսկողություն իրականացնող դատախազի լիազորությունները դադարեցնելու կամ կասեցնելու կամ այլ դեպքերում, որոնք անհնարին են դարձնում հսկողություն իրականացնող դատախազի կողմից իր լիազորությունների իրականացումը: Հսկողություն իրականացնող դատախազին փոխելու և հսկողությունն այլ դատախազի հանձնարարելու դեպքում վերադաս դատախազն այդ մասին տեղեկացնում է քննչական մարմնի ղեկավարին, իսկ վերջինս էլ տեղեկացնում է քննիչին, ով պարտավոր է վարույթի մասնավոր մասնակիցներին և վարույթին օժանդակող անձանց հայտնել տվյալ վարույթով նոր դատախազի անունը, ազգանունը և աշխատանքային հասցեն:

6. Վերադաս դատախազը վերահսկողություն է իրականացնում հսկողություն իրականացնող դատախազի որոշումների և հանձնարարությունների օրինականության և հիմնավորվածության նկատմամբ: Այս ոլորտում վերադաս դատախազը որոշում է կայացնում հսկող դատախազի հանձնարարությունների կամ վարույթային ակտերի վերաբերյալ հետաքննության մարմնի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի առարկությունների և վարույթի մասնավոր մասնակիցների կամ այլ անձանց բողոքների կապակցությամբ, ինչպես նաև վերադաս դատախազի հանձնարարությունների կամ վարույթային ակտերի վերաբերյալ հսկող դատախազի առարկությունների կապակցությամբ, վերացնում

է հսկող դատախազի անօրինական կամ անհիմն որոշումները և հանձնարարությունները:

7. Վերադաս դատախազը հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու միջնորդություններով: Ընթացիկ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու միջնորդություններ կարող է ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազը: Այսպես՝ ՀՀ դատական օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցով Արդարադատության խորհուրդ է դիմում ՀՀ գլխավոր դատախազը: ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգի օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատգամավորին ձերբակալելու, որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու համար համաձայնություն տալու մասին միջնորդագիրը ՀՀ գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Այսպիսով, հսկողություն իրականացնող դատախազն իր անունից առաջարկություն է ներկայացնում ՀՀ գլխավոր դատախազին՝ իրավասու մարմիններին միջնորդություն ներկայացնել դատավորի կամ ՀՀ ազգային ժողովի պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

8. Վերադաս դատախազը քննչական մարմնի ղեկավարին իրավասու է հանձնարարություն տալ բացառապես հետևյալ դեպքերում՝ 1. նախաքննություն սկսելու վերաբերյալ, 2. վարույթն իրականացնել համատեղ քննչական խմբի կողմից, 3. համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով վարույթը, քննչական ենթակայության կանոններին համապատասխան, հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին: Վերադաս դատա-

խազն իրավասու չէ հանձնարարություն տալ քրեական վարույթն իրականացնող քննիչին:

9. ՀՀ քր. դատ. օր-ի նախագիծը հատուկ նախատեսում է նաև ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների լիազորությունները:

9.1 ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 183-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն իրավասու է նախաքննության այլ մարմինների քննիչներից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչներին հանձնել քրեական վարույթներ, որոնք առնչվում են սույն հոդվածի 6-րդ մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած ենթադրյալ հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչվել են որպես տուժող:

9.2 ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 184-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախաքննության ընթացքում տարածքային ենթակայությանն առնչվող վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը:

9.3 ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 200-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին հսկող դատախազի որոշումը և այն հաստատելու մասին վերադաս դատախազի որոշումը կարող է վերացվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից այն կայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում, եթե այդ որոշումը դատական ստուգման չի ենթարկվել: Նշված ժամկետներն անցնելուց հետո քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին հսկող դատախազի որոշումը կամ այն հաստատելու մասին վերադաս դատախազի որոշումը կարող է վերացվել բացառապես Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից և միայն նոր հանգամանքի հիմքով, եթե այդ որոշումները դատական ստուգման չեն ենթարկվել:

9.4 ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 359-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ դատարան վերանայման բողոք բերելու իրավունք ունեն նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները, իսկ 408-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ վերանայման բողոք բերելու իրավունք ունեն՝ Հայաստանի Հան-

րապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները: ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 412-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը, գործի վերանայման հիմքերն առկա համարելով, նոր հանգամանքներով բողոք է ներկայացնում իրավասու դատարան՝ դրան կցելով եզրակացությունը և այլ անհրաժեշտ նյութեր:

### **Հոդված 38. Հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում**

1. Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝
  - 1) ստուգում է ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման և արձանագրման մասին օրենքի պահանջների կատարումը.
  - 2) ստուգման համար հետաքննության մարմնից գրավոր պահանջում է քրեական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը կամ այդպիսիք ստուգում է դրանց գտնվելու վայրում.
  - 3) ստուգման համար քննիչից գրավոր պահանջում է նախաքննության ընթացքի մասին տեղեկություններ, քրեական վարույթի նյութերը կամ այդպիսիք ստուգում է դրանց գտնվելու վայրում.
  - 4) անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին քննիչի միջնորդության հիման վրա կայացնում է համապատասխան որոշում.
  - 5) վարույթի նյութերի հիման վրա իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին.
  - 6) որոշում է կայացնում հետաքննիչին, հետաքննության մարմնի պետին, քննիչին, քննչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի կապակցությամբ.
  - 7) իրավասու է սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ մասնակցել մեղադրյալի հարցաքննությանը.

8) որոշում է կայացնում քննիչի հանձնարարությունների վերաբերյալ հետաքննության մարմնի պետի առարկությունների կապակցությամբ.

9) որոշում է կայացնում քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությունների վերաբերյալ քննիչի առարկությունների կապակցությամբ.

10) վերացնում է հետաքննության մարմնի պետի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի անօրինական կամ անհիմն որոշումները, ինչպես նաև քննչական մարմնի ղեկավարի կամ քննիչի անօրինական կամ անհիմն հանձնարարությունները.

11) որոշում է կայացնում հետաքննության մարմնի պետի, հետաքննիչի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի վարության յին ակտերի դեմ վարույթի մասնավոր մասնակիցների կամ այլ անձանց բերած բողոքների կապակցությամբ.

12) քրեական վարույթի ընթացքում օրենքի կոպիտ խախտում թույլ տալու դեպքում հետաքննության մարմնի պետին, հետաքննիչին կամ քննիչին հեռացնում է տվյալ վարույթին մասնակցելուց, սակայն չի կարող որոշում կայացնել նրա փոխարեն այլ անձ նշանակելու մասին.

13) իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու միջնորդություններով.

14) հաստատում է մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը կամ եզրափակիչ ակտը և քրեական գործը հանձնում է դատարանին՝ դատաքննություն կատարելու համար, հաստատում է քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը.

15) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր որոշմամբ չի հաստատում մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը, եզրափակիչ ակտը կամ քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը և քրեական գործը վերադարձնում է քննչական մարմնի ղեկավարին՝ վարույթը շարունակելու հանձնարարությամբ.

16) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում իրավասու է հետ վերցնել քննիչի՝ դատարան ներկայացրած միջնորդությունը կամ մասնակցել դատական երաշխիքների վարույթին.

17) ստորագրում է մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր.

18) իր որոշմամբ անհապաղ վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ցանկացած ոչ իրավաչափ սահմանափակում, այդ թվում՝ ազատում է ոչ իրավաչափ պահվող անձանց.

19) սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով որոշում է կայացնում պարզեցված նախաքննությամբ քննվող վարույթը ընդհանուր կարգով իրականացնելու վերաբերյալ.

20) վերադաս դատախազի վարությանին ակտի վերաբերյալ առարկություն է ներկայացնում նրա վերադաս դատախազին.

21) մինչդատական վարույթի ընթացքում իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի իմաստով՝ քրեական վարույթի ընթացքում թույլ տված օրենքի կոպիտ խախտումներն են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքի կամ ազատության խախտումը.

2) նախաքննության բնականոն ընթացքը խաթարող խախտումը.

3) հսկող դատախազի հանձնարարությունները պարբերաբար չկատարելը:

1. Դատախազ՝ պետական պաշտոնատար անձ, ով քրեական վարույթի ընթացքում պետության անունից իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները: ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ 1) հարուցում է քրեական հետապնդում. 2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ. 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը. 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան. 5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները. 6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Մեկնաբանվող հոդվածի վերտառությունն է «հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում», սակայն այն կարգավորում է մինչդատական վարույթում դատախազի հսկողության և քրեական հետապնդման հարուցման գործառույթները: Հսկող դատախազը հանդես է գալիս որպես քրեական վարույթն իրականացնող մարմին՝ հետևյալ ժամանակահատվածում. մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը կամ մեղադրական ակտը դատարանին հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ քրեական գործը նախաքննության մարմնին վերադարձնելը: Այս ընթացքում հսկող դատախազը կարող է կատարել օրենքով թույլատրվող վարութային գործողություններ: Այսպես՝ հսկող դատախազը մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին քննիչից ստանալու պահից մինչև այն դատարան հանձնելը կարող է կիրառել հետևյալ խափանման միջոցները՝ գրավ, պաշտոնավարության կասեցում, բացակայելու արգելք, երաշխավորություն, դաստիարակչական հսկողություն, զինվորական հսկողություն (ՀՀ քր. դատ. օր-ի 122-րդ հոդվածի 3-րդ մասի):

3. Մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները կարելի է պայմանականորեն խմբավորել ըստ ոլորտների:

3.1 Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտում դատախազի լիազորությունները.

- ստուգում է ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման և արձանագրման մասին օրենքի պահանջների կատարումը.
- ստուգման համար հետաքննության մարմնից գրավոր պահանջում է քրեական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը կամ այդպիսիք ստուգում է դրանց գտնվելու վայրում.

- ստուգման համար քննիչից գրավոր պահանջում է նախաքննության ընթացքի մասին տեղեկություններ, քրեական վարույթի նյութերը կամ այդպիսիք ստուգում է դրանց գտնվելու վայրում.
- որոշում է կայացնում հետաքննիչին, հետաքննության մարմնի պետին, քննիչին, քննչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի կապակցությամբ.
- մասնակցում է մեղադրյալի հարցաքննությանը.
- որոշում է կայացնում քննիչի հանձնարարությունների վերաբերյալ հետաքննության մարմնի պետի առարկությունների կապակցությամբ.
- որոշում է կայացնում քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությունների վերաբերյալ քննիչի առարկությունների կապակցությամբ.
- վերացնում է հետաքննության մարմնի պետի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի անօրինական կամ անհիմն որոշումները, ինչպես նաև քննչական մարմնի ղեկավարի կամ քննիչի անօրինական կամ անհիմն հանձնարարությունները.
- որոշում է կայացնում հետաքննության մարմնի պետի, հետաքննիչի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի վարութային ակտերի դեմ վարույթի մասնավոր մասնակիցների կամ այլ անձանց բերած բողոքների կապակցությամբ.
- քրեական վարույթի ընթացքում օրենքի կոպիտ խախտում թույլ տալու դեպքում հետաքննության մարմնի պետին, հետաքննիչին կամ քննիչին հետացնում է տվյալ վարույթին մասնակցելուց, սակայն չի կարող որոշում կայացնել նրա փոխարեն այլ անձ նշանակելու մասին.
- հաստատում է մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը կամ եզրափակիչ ակտը և քրեական գործը հանձնում է դատարանին՝ դատաքննություն կատարելու համար, հաստատում է քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը.



- որոշմամբ չի հաստատում մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը, եզրափակիչ ակտը կամ քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը և քրեական գործը վերադարձնում է քննչական մարմնի ղեկավարին՝ վարույթը շարունակելու հանձնարարությամբ:
- որոշում է կայացնում պարզեցված նախաքննությամբ քննվող վարույթն ընդհանուր կարգով իրականացնելու վերաբերյալ:

*3.2 Քրեական հետապնդման տնօրինման և հարկադրանքի միջոցների կիրառման ոլորտում դատախազի լիազորություններն են.*

- վարույթի նյութերի հիման վրա իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին:
- անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին քննիչի միջնորդության հիման վրա կայացնում է համապատասխան որոշում:
- իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու միջնորդություններով:
- իր որոշմամբ անհապաղ վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ցանկացած ոչ իրավաչափ սահմանափակում, այդ թվում՝ ազատում է ոչ իրավաչափ պահվող անձանց:
- հետ է վերցնում քննիչի՝ դատարան ներկայացրած միջնորդությունը կամ մասնակցում է դատական երաշխիքների վարույթին:

4. Մեկնաբանվող հոդվածում հսկողություն իրականացնող դատախազի լիազորությունները սպառիչ չեն: Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազն իրականացնում է ՀՀ

քր. դատ. օր-ով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ, մասնավորապես.

- վարույթի նյութերի կամ քրեական գործի կորստի դեպքում որոշում է կայացնում դրանք վերականգնելու մասին և միջոցներ է ձեռնարկում վարույթի պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի հոդված 8),
- լուծում է քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, հետաքննիչին կամ հետաքննության մարմնի պետին հայտնված բացարկը (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 65 հոդվածի 6-րդ մաս),
- համաձայնություն է տալիս գրավը և պաշտոնավարության կասեցումը քննիչի կողմից կիրառելու վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 122-րդ հոդվածի 5-րդ մաս),
- որոշում է կայացնում գրավը պետության եկամուտ դարձնելու մասին, եթե մեղադրյալը թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ վայր, պարբերաբար չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամ էապես խոչընդոտել է վարույթին (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 125-րդ հոդվածի 5-րդ մասի),
- հաստատում է մինչդատական վարույթում փաստաբանին կամ օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու մասին քննիչի որոշումը (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 148-րդ հոդվածի 2-րդ մաս),
- միջոցներ է ձեռնարկում պարզելու համար հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում նախաքննության ավարտին համապատասխան իրավաբանական անձի ղեկավարին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագիր (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 187-րդ հոդվածի 2-րդ մաս),
- թույլատրում է առգրավել պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերը (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 216-րդ հոդվածի 3-րդ մաս),

- վերադաս դատախազի վարությանին ակտի վերաբերյալ առարկություն է ներկայացնում նրա վերադաս դատախազին.
- ստորագրում է մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր և այլն:

6. Մի շարք օրենքներով քրեական հետապնդման հարուցման և հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման գործառույթները վերապահված են բացառապես ՀՀ գլխավոր դատախազին: Այսպես՝ ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից տվյալ գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը: Նոտարիատի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն ՀՀ գլխավոր դատախազը: Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն գլխավոր դատախազը: Հատուկ քննչական ծառայության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են ՀՀ գլխավոր դատախազը և նրա լիազորված դատախազները:

7. Դատախազը պարտավոր է որոշմամբ անհապաղ վերացնել անձի իրավունքների կամ ազատությունների ցանկացած ոչ իրավաչափ սահմանափակում, այդ թվում՝ ազատել ոչ իրավաչափ պահվող անձանց: Դատախազը մարդու իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

- *արդյոք նման սահմանափակումը նախատեսված է եղել ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, քրեա-*

կան դատավարությունում ենթաօրենսդրական ակտերի հիման վրա մարդու իրավունքների սահմանափակումն համարվում է ոչ իրավաչափ: Օրինակ՝ գերատեսչական ակտերի հիման վրա մարդու իրավունքների սահմանափակումը համարվում է ոչ իրավաչափ:

- *Արդյո՞ք մարդու իրավունքների սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ:* Այլ կերպ ասած՝ քրեական դատավարությունում մարդու իրավունքները սահմանափակելով ինչ իրավական արժեք է պաշտպանվում: Մարդու իրավունքների սահմանափակման սահմանադրական նպատակները նախատեսված են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով, որի համաձայն մարդու իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Օրինակ՝ իրավաչափ չէ մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառել՝ զուտ նպատակ ունենալով հարկադրել նրան համագործակցել իրավապահ մարմինների հետ:
- *Արդյո՞ք մարդու իրավունքները սահմանափակող իրավական գործիքները համարժեք են հետապնդվող իրավաչափ նպատակներին:* Մարդու իրավունքների սահմանափակման նշված չափանիշը խիստ գնահատողական է և կախված է կոնկրետ քրեական վարույթի առանձնահատկությունից: Օրինակ՝ նկատի ունենալով, որ գաղտնի քննչական գործողությունները էապես սահմանափակում են մարդու իրավունքները՝ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 249-րդ հոդվածում սահմանվել է, որ գաղտնի քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է: Այլ կերպ ասած՝ եթե քրեական դատավարությունում հետապնդվող իրավաչափ նպատակին կարելի է հասնել մարդու իրավունքները նվազագույնս սահ-

մանափակող իրավական գործիքների կիրառմամբ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է կիրառի տվյալ իրավական գործիքը: Օրինակ իրավաչափ չէ մեղադրյալի փախուստը կանխելու համար նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը, եթե նրա փախուստը կարելի է կանխել ավելի մեղմ խափանման միջոց կիրառելով:

- 7.1 *Դատախազի կողմից* անձի իրավունքների կամ ազատությունների ցանկացած ոչ իրավաչափ սահմանափակում վերացնելու դատավարական ձևը կախված է մարդու իրավունքների սահմանափակման ձևից և բնույթից: Այսպես՝ եթե վարույթն իրականացնող մարմինն ապօրինի եղանակով անձի մասնավոր կյանքի վերաբերյալ ձեռք է բերել փաստական տվյալներ և այն ճանաչել որպես ապացույց, ապա հսկողություն իրականացնող դատախազը մարդու մասնավոր կյանքի ոչ իրավաչափ սահմանափակումը վերացնում է տվյալ ապացույցն անթույլատրելի ճանաչելու եղանակով: Եթե վարույթի հանրային մասնակցի կողմից մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումը գտնվում է ընթացքի մեջ, ապա դատախազը հանձնարարում է դադարեցնել նշված գործողությունները: Օրինակ՝ դատախազը հանձնարարում է դադարեցնել մարդու հեռախոսային խոսակցությունը վերահսկելու գործողությունը, եթե վերացել է այդ գործողությունը շարունակելու իրավաչափ նպատակը կամ այն կատարելու օրենքով սահմանված ժամկետները:

#### **4. Քննչական մարմնի ղեկավարի և քննիչի լիազորությունները**

*Հոդված 40. Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները*

1. *Նախաքննության արդյունավետությունն ապահովելու նպատակով քննչական մարմնի ղեկավարը՝*

1) *նախաքննության կատարումը հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին.*

2) վարույթն իր ենթակայության ներքո գործող մի քննիչից որոշմամբ հանձնում է մյուսին: Եթե դա կարող է հանգեցնել նախաքննության կատարման վայրի փոփոխության, ապա վարույթը մի քննիչից մյուսին հանձնելը կարող է տեղի ունենալ միայն համապատասխան վերադաս դատախազի գրավոր համաձայնությամբ.

3) ծանոթանում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթի նյութերին.

4) վարույթից հեռացված քննիչին որոշմամբ փոխարինում է իր անմիջական ենթակայության ներքո գործող այլ քննիչով.

5) որոշում է կայացնում վարույթն իր ենթակայության ներքո գործող քննիչներից կազմված քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ, իսկ վերադաս դատախազի հանձնարարությամբ՝ քննչական այլ մարմինների ղեկավարների հետ միասին կայացնում է վարույթը համատեղ քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ համատեղ որոշում.

6) իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով իր ենթակայության ներքո գործող քննիչներին հանձնարարում է առանձին ապացուցողական կամ այլ վարութային գործողությունների կատարումը, եթե բացակայում է վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու անհրաժեշտությունը.

7) իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի միջնորդությամբ իր իրավասության սահմաններում ներկայացնում է քննչական փոխօգնության խնդրանք, իսկ նման խնդրանք ստանալու դեպքում իր իրավասության սահմաններում ապահովում է դրա կատարումը.

8) որոշում է կայացնում նախաքննությունն անձամբ կատարելու մասին՝ օգտվելով քննիչի համար սույն օրենսգրքով սահմանված բոլոր լիազորություններից.

9) հեղևում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից ապացուցողական և այլ վարութային գործողությունների, դատախազի որոշումների, դատախազի և իր հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանավորման ժամկետների պահպանմանը.

10) ապահովում է վերադարձված քրեական գործով վարույթը շարունակելու մասին դատախազի հանձնարարության կատարումը.

11) իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով հսկող դատախազի վարութային ակտի, այդ թվում՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման վերաբերյալ առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին.

12) իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումների ու հանձնարարությունների պարճենները քննչական մարմնի ղեկավարն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին:

1. Նախագծի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն քննչական մարմնի ղեկավար է համարվում՝ քննչական կոմիտեի, ծառայության, գլխավոր վարչության, վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետը կամ նրա տեղակալը, ով իր իրավասության սահմաններում կազմակերպում է նախաքննությունը և ապահովում է դրա արդյունավետությունը: Քննչական մարմնի ղեկավարը քրեական դատավարությունում իրականացնում է հանրային բնույթի գործառույթներ և հանդիսանում է վարույթի հանրային մասնակից: Քննչական մարմնի ղեկավարի դատավարական լիազորությունները թվարկված են նախագծի 40-րդ, ինչպես նաև օրենսգրքի այլ հոդվածներով: Օրինակ՝ նախագծի 36-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քննչական մարմնի ղեկավարն իրավասու է հանձնարարություն տալ իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին՝ նախաքննության արդյունավետությանը վերաբերող ցանկացած հարցի, այդ թվում՝ կոնկրետ ապացուցողական գործողություն կատարելու կապակցությամբ: Քննչական մարմնի ղեկավարի վարչաիրավական բնույթի լիազորությունները սահմանված են այլ օրենքներով: Օրինակ՝ «Հատուկ քննչական ծառայության» մասին օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ քննչական ծառայության պետը՝ ղեկավարում և վերահսկողություն է իրականացնում հատուկ քննչական ծառայության ծառայողների գործունեության նկատմամբ, ընդունում է հատուկ քննչական

ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված որոշումներ և այլն:

1.1 Մեկնաբանվող հոդվածում որոշակիորեն տարբերակված են անմիջական վերադաս հանդիսացող քննչական մարմնի ղեկավարի և վերադաս քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները: Բոլոր այն դեպքերում, որտեղ նշվում է «իր անմիջական ենթակայության ներքո» եզրույթը, ապա նշված լիազորությունները վերաբերելի են միայն անմիջական վերադասին, իսկ վերադասին վերապահված լիազորությունները վերաբերելի են նաև անմիջական վերադասին:

2. Քրեական դատավարությունում քննչական մարմնի ղեկավարը կոչված է ապահովելու նախաքննության արդյունավետությունը: Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունների միասնական նպատակը նախաքննության արդյունավետությունն ապահովելն է: Նախաքննության արդյունավետությունը գնահատողական հասկացություն է և այն կապված է մասնավորապես նախաքննության ճիշտ կազմակերպելու, քննչական գործողությունները ժամանակին կատարելու հետ: Նախաքննության արդյունավետությունն ապահովելու խնդիրը պատշաճ լուծելու համար քննչական մարմնի ղեկավարը նախագծի 40-րդ հոդվածով օժտված է հետևյալ լիազորություններով.

2.1 *Նախաքննության կատարումը հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին:* Քննիչին նախաքննության կատարումը հանձնարարելը պետք է լինի գրավոր ձևով՝ քննիչին մակագրելու եղանակով: Քննչական մարմնի ղեկավարի մակագրության ձևով տրված հանձնարարությունը բավարար հիմք է քննիչի կողմից քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննություն իրականացնելու համար: Քննչական մարմնի ղեկավարը լայն հայեցողություն ունի որոշելու, թե իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչներից որ քննիչը տվյալ դեպքով պետք է իրականացնի նախաքննություն: Նշված հայեցողական լիազորությունն իրականացնելիս քննչական մարմնի ղեկավարը հաշվի է առնում տվյալ պահին քննիչի աշխատանքային ծանրաբեռնվածությունը, կոնկրետ վարույթի բարդությունը, քննիչի փորձառությունը, մասնագիտացումը և հմտությունները, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ, որոնք կարող են նշա-



նակություն ունենալ տվյալ գործով վարույթի առավել արդյունավետ իրականացման համար:

2.2 *Վարույթն իր ենթակայության ներքո գործող մի քննիչից որոշմամբ հանձնում է մյուսին: Եթե դա կարող է հանգեցնել նախաքննության կատարման վայրի փոփոխության, ապա վարույթը մի քննիչից մյուսին հանձնելը կարող է տեղի ունենալ միայն համապատասխան վերադաս դասակարգի գրավոր համաձայնությամբ:* Քննչական մարմնի ղեկավարի այս լիազորության կամայական իրականացման դեպքերը կանխելու և քննիչի դատավարական ինքնուրույնությունն ապահովելու նպատակով օրենքը սահմանում է, որ վարույթը մի քննիչից մյուսին հանձնվում է ոչ թե մակագրությամբ, այլ բացառապես դատավարական որոշմամբ: Բանն այն է, որ դատավարական ցանկացած որոշում, այդ թվում վարույթը մի քննիչից մյուսին հանձնելու որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչն էլ էապես սահմանափակում է քննչական մարմնի ղեկավարի հայեցողությունը: Օրենսդրությամբ թեև սպառնիչ չեն թվարկվում այն հանգամանքները, որոնք թույլ կտան վարույթն մի քննիչից որոշմամբ հանձնելու մյուսին, սակայն վարույթը մի քննիչից մյուսին հանձնելու որոշմամբ պետք է նշվեն վարույթը այլ քննիչին հանձնելու իրավաչափ անհրաժեշտությունը: Վարույթը մի քննիչից մյուսին հանձնելու անհրաժեշտությունը կարող է կապված լինել տվյալ վարույթի իրականացման ընթացքում քննիչի հմտությունների, ինչպես նաև իրականացված նախաքննության ընթացքում թույլ տրված բացթողումների, քննիչին արձակուրդ տրամադրելու կամ նրա առողջական խնդիրների հետ:

2.2.2 Միևնույն ստորաբաժանման շրջանակներում վարույթը մի քննիչից մեկ այլ քննիչին հանձնելը, որպես կանոն, չի հանգեցնում նախաքննության կատարման վայրի փոփոխության: Այսպես, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի կողմից վարույթը մի քննիչից մյուսին հանձնելը չի հանգեցնում նախաքննության կատարման վայրի փոփոխության: Սակայն, ինչպես նշվեց, քննչական մարմնի ղեկավար է համարվում նաև օրինակ՝ վարչության պետը կամ նրա տեղակալը, ում ենթակայության ներքո են գտնվում տարբեր քննչական բաժնի քննիչներ: Եթե վարչության պետը վարույթը մի

քննչական բաժնի քննիչից հանձնում է մեկ այլ վարչատարածքային միավորման (մարզ, իսկ Երևանում՝ վարչական շրջան) քննչական բաժնի քննիչի, ապա այս դեպքում փոխվում է նախաքննության կատարման վայրը: Քննչական մարմնի ղեկավարի նշված լիազորության իրականացումը հնարավոր է բացառապես վերադաս դատախազի համաձայնության դեպքում: Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ենթակայության ներքո մեկ վարչական շրջանի քննչական ստորաբաժանումից մեկ այլ վարչական շրջանի քննիչին վարույթը հանձնելու դեպքում փոխվում է նախաքննության կատարման վայրը, ուստի այս դեպքում պետք է ստանալ ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կամ Երևան քաղաքի դատախազի համաձայնությունը<sup>43</sup>: Բանն այն է, որ նախաքննության կատարման վայրի փոփոխությունը հանգեցնում է նաև դատախազական հսկողության վայրի փոփոխության, ուստի նշված որոշման կայացման համար օրենսդրորեն պահանջվում է համապատասխան վերադաս դատախազի գրավոր համաձայնությունը: Վերադաս դատախազի գրավոր համաձայնությունը կարող է արտացոլվել վարույթը մի քննիչից մեկ այլ քննիչի հանձնելու մասին որոշման մեջ:

2.3. *Ծանոթանում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթի նյութերին*: Քննչական մարմնի ղեկավարի՝ վարույթի նյութերին ծանոթանալու լիազորությունը կոչված է ապահովելու նրա առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացումը: Քննչական մարմնի ղեկավարը նյութերին ծանոթանալու եղանակով կարող է վերահսկել քննիչի կողմից քրեական հետապնդման և կալանավորման ժամկետների պահպանմանը և տալ համապատասխան հանձնարարություններ: Քննչական մարմնի ղեկավարը կարող է վարույթի նյութերին ծանոթանալ նախաքննության ցանկացած պահին: Նյութերին ծանոթանալու լիազորությունը կարող է իրականացվել պարբերաբար: Քննչական մարմնի ղեկավարը վարույթի նյութերին ծանոթանալու համար կարող է ներկայացնել բանավոր պահանջ՝ առանց քրեական վարույթը գրասենյակ հանձնելու: Նման կարգը թույլ կտա առավել արագ կազմակերպել աշխատանքը և

43. Նախագծով նշված լիազորությունն անմիջական վերադասին վերապահելու պարագայում, չի կարող առկա լինել մի իրավիճակ, որ քննիչին փոխելը կարող է հանգեցնել նախաքննության կատարման վայրի փոփոխության:

ողջամիտ ժամկետներում ծանոթանալ վարույթի նյութերին: Մյուս կողմից գերատեսչական համապատասխան փաստաթղթերում պետք է արտացոլվեն քննչական մարմնի ղեկավարի կողմից վարույթի նյութերը պահանջելու փաստը, այն ուսումնասիրելու և քննիչի վերադարձնելու ժամանակահատվածը: Նման պրակտիկայի ձևավորման դեպքում հնարավոր կլինի հստակ գնահատել քննչական մարմնի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարումը:

2.3.1 Քննչական մարմնի ղեկավարի և հսկողություն իրականացնող դատախազի՝ վարույթի նյութերին ծանոթանալու լիազորությունների՝ ժամանակահատվածի առումով համընկնելու դեպքում նախապատվությունը պետք է տալ հսկողություն իրականացնող դատախազի լիազորությանը: Քննչական մարմնի ղեկավարի լիազորության իրականացումը չպետք է խոչընդոտի տվյալ վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ նյութերին ծանոթանալու լիազորության և սահմանադրական գործառույթների պատշաճ իրականացմանը: Օրինակ՝ եթե վարույթի նյութերին ծանոթանալու նպատակով վարույթը գտնվում է քննչական մարմնի ղեկավարի մոտ, սակայն դատախազը այդ ժամանակահատվածում ցանկանում է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու նպատակով ծանոթանալ վարույթի նյութերին, ապա վարույթն անհապաղ պետք է փոխանցել հսկողություն իրականացնող դատախազին:

2.4. *Վարույթից հեռացված քննիչին որոշմամբ փոխարինում է իր անմիջական ենթակայության ներքո գործող այլ քննիչով:* Քննիչին վարույթից հեռացնելը հսկող դատախազի բացառիկ լիազորությունն է: Վարույթից հեռացնելը թույլատրվում է օրենքի կոպիտ կամ պարբերական խախտում թույլ տալու դեպքում: Պետք է նշել, որ հսկող դատախազը չի կարող որոշում կայացնել վարույթից հեռացված քննիչի փոխարեն այլ քննիչի նշանակելու մասին: Այդ լիազորությունը տրված է միայն քննչական մարմնի ղեկավարին: Հսկող դատախազի կողմից քննիչին վարույթից հեռացնելու դեպքում քննչական մարմնի ղեկավարը պարտավոր է որոշմամբ վարույթից հեռացված քննիչին փոխարինի իր անմիջական ենթակայության ներքո գործող մեկ այլ քննիչով: Քննչական

մարմնի ղեկավարի նշված լիազորության առանձնահատկությունն այն է, որ այս լիազորության իրականացման նախապայման է հսկող դատախազի կողմից քննիչին վարույթից հեռացնելը:

2.5 Որոշում է կայացնում վարույթն իր ենթակայության ներքո գործող քննիչներից կազմված քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ, իսկ վերադաս դատախազի հանձնարարությամբ՝ քննչական այլ մարմինների ղեկավարների հետ կայացնում է վարույթը համարել քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ համարել որոշում: Քրեական դատավարությունում միայն քննչական մարմնի ղեկավարին է իրավունք վերապահված որոշում կայացնելու վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ: Վերադաս դատախազը քննչական մարմնի ղեկավարին նման հանձնարարություն կարող է տալ միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կազմել տարբեր քննչական մարմինների քննիչներից բաղկացած քննչական խումբ: Այս դեպքում նշված բոլոր քննչական մարմինների ղեկավարներն իրենց ստորագրությամբ կայացնում են համատեղ որոշում: Այսինքն՝ վարույթը համատեղ քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ որոշումը կայացվում է մի քանի քննչական մարմինների ղեկավարների կողմից: Քննչական խմբի կողմից նախաքննության կատարման կարգը սահմանվում է նախագծի 185-րդ հոդվածով: Մասնավորապես նախաքննության կատարումը կարող է առանձին որոշմամբ հանձնարարվել մի քանի քննիչի՝ վարույթի բարդության կամ դրա ծավալի մեծության դեպքում: Որոշման մեջ նշվում են խմբի ղեկավար քննիչը և մյուս բոլոր քննիչները, որոնց հանձնարարվում է նախաքննության կատարումը: Քննչական խումբ կարող է ստեղծվել միայն ընդհանուր կարգով նախաքննության կատարման համար: Քննչական մարմնի ղեկավարի քննչական խումբ ստեղծելու մասին որոշման կայացումը պետք է պայմանավորված լինի վարույթի բարդությամբ կամ դրա ծավալի մեծությամբ: Վարույթի բարդությունը կարող է պայմանավորված լինել կատարված հանցագործության բազմադրվագ, շարունակվող լինելու հանգամանքով և այլ էական հանգամանքներով: Վարույթի ծավալի մեծությունը կապված է դատավարության մասնակիցների թվի հետ, տվյալ վարույթի ընթացքում անհրաժեշտ վարութային գործողությունների ծավալով, որոնք մեկ քննիչի կողմից չեն կարող ողջամիտ ժամկետում իրականացվել:

2.6. Իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով իր ենթակայության ներքո գործող քննիչներին հանձնարարում է առանձին ապացուցողական կամ այլ վարության ղեկավարությունների կատարումը, եթե բացակայում է վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու անհրաժեշտությունը: Գործականում հնարավոր են մի շարք իրավիճակներ, երբ բացակայում է քննչական խումբ կազմելու անհրաժեշտությունը, սակայն վարույթն իրականացնող քննիչը չի կարող միաժամանակ հրատապ կատարել առանձին ապացուցողական կամ այլ վարության ղեկավարություններ: Այդպիսի իրավիճակներ կարող են լինել, օրինակ՝ նախաքննության սկզբնական փուլում զուգահեռ տարբեր անձանց միաժամանակ հարցաքննելու, առերեսման, ճանաչման ներկայացնելու կամ տաքեր վայրերում միաժամանակյա խուզարկություններ կատարելու անհրաժեշտությունը, անձի մերկացման հետ զուգորդված քննչական գործողություններ կատարելը նույն սեռի քննիչի կողմից և այլն:

2.6.1 Նախագծով չի նշվում թե ինչ ապացուցողական կամ վարության ղեկավարություններ կարող են հանձնարարվել այլ քննիչներին, ուստի այդպիսիք սահմանափակված չեն: Այլ քննիչների չեն կարող հանձնարարվել միայն այնպիսի գործողությունների կատարումը, որոնք քննչական խմբի պարագայում վերապահված են միայն քննչական խմբի ղեկավարին, այն է՝ վարույթները միացնելու, անջատելու, վարույթը կարճելու և փոխակերպելու մասին որոշումների կայացումը, անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, կասեցնելու և վերսկսելու, խափանման միջոց ընտրելու և դրա ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններ հարուցելը, մեղադրական եզրակացություն կամ եզրափակիչ ակտ կազմելը (նախագծի 186-րդ հոդված): Ամփոփելով՝ կարելի է նշել, որ միևնույն ստորաբաժանման քննիչներին կարող է հանձնարարվել այնպիսի վարության ղեկավարությունների կատարումը, որոնք քննչական խմբի պարագայում կարող են իրականացվել խմբի անդամ քննիչների կողմից: Այլ քննիչի կողմից առանձին վարության ղեկավարություններ կատարելու հանձնարարության դեպքում, եթե առկա են ինքնաբացարկի հիմքեր, ապա հանձնարարություն ստացած քննիչը մինչև վարության ղեկավարություն կատարելը պետք է հայտնի ինքնաբացարկ:

2.7. Իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի միջնորդությամբ իր իրավասության սահմաններում ներկայացնում է քննչական փոխօգնության խնդրանք, իսկ նման խնդրանք սրանսալու դեպքում իր իրավասության սահմաններում ապահովում է դրա կատարումը: Նախագծի 184-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այլ վայրում առանձին ապացուցողական կամ այլ վարությային գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավասու է այդ գործողությունները կատարել անձամբ կամ միջնորդել իր անմիջական վերադաս հանդիսացող քննչական մարմնի ղեկավարին՝ իր իրավասության սահմաններում ապահովելու դրանց կատարումը՝ հանձնարարություն տալու կամ քննչական փոխօգնության խնդրանք ներկայացնելու եղանակով: Քննչական փոխօգնության խնդրանք ներկայացվում է այն դեպքում, երբ վարությի շրջանակներում այլ վայրում առանձին ապացուցողական կամ այլ վարությային գործողություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանում այն քննիչների կողմից, ովքեր տվյալ քննչական մարմնի կամ ստորաբաժանման կազմում չեն գործում: Այս պարագայում քննչական մարմնի ղեկավարն իր ենթակայության ներքո գործող քննիչի միջնորդության հիման վրա դիմում է մեկ այլ քննչական մարմնի ղեկավարին (այլ տարածքում գործող), որպեսզի վերջինս իր իրավասության սահմաններում ապահովի դրա կատարումը: Քննարկվող հոդվածով սահմանվում է «խնդրանք ներկայացնել» եզրույթը, սակայն դա չի նշանակում, որ օրինական կարգով ներկայացված քննչական փոխօգնության խնդրանքը ենթակա է հայեցողական կատարման: Այլ կերպ ասած, նման խնդրանքն ունի իմպերատիվ բնույթ և ենթակա է կատարման: Փոխօգնության խնդրանք ստանալու դեպքում այն կատարվում է քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին մակագրելու եղանակով, որով հանձնարարություն է տրվում իր անմիջական ենթակայության ներքո քննիչին՝ կատարելու քննչական փոխօգնության խնդրանքի պահանջները: Քննչական մարմնի ղեկավարին լիազորություն է տրված նախաքննությունն անձամբ կատարելու՝ օգտվելով քննիչի համար քր.դատ. օրենսգրքով սահմանված բոլոր լիազորություններից: Սակայն քննչական փոխօգնության խնդրանքի կատարումն առանձին վերցրած չի կարող համարվել նախաքննության իրականացում, ուստի նման դեպքում քննչական մարմնի ղեկավարն իրավասու

չէ անձամբ իրականացնելու այլ վայրից ստացված քննչական փոխօգնության խնդրանքը, այլ միայն ապահովում է դրա կատարումը՝ վերը նշված եղանակով:

*2.8. Որոշում է կայացնում նախաքննությունն անձամբ կատարելու մասին՝ օգտվելով քննիչի համար սույն օրենսգրքով սահմանված բոլոր լիազորություններից:* Նախաքննությունն անձամբ կատարելու դեպքում քննչական մարմնի ղեկավարը գործում է որպես քննիչ և օգտվում է քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված քննիչի լիազորություններից: Քննչական մարմնի ղեկավարն այս լիազորությունից կարող է օգտվել սեփական նախաձեռնությամբ: Դատախազը իրավասու չէ քննչական մարմնի ղեկավարին հանձնարարել անձամբ կատարել նախաքննություն: Նախագծի 180-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնների համապատասխան, քննչական մարմնի ղեկավարին տալիս է նախաքննություն կատարելու հանձնարարություն, սակայն այս դեպքում խոսքը ոչ թե նախաքննությունն անձամբ կատարելու, այլ այն կազմակերպելու մասին է: Նախաքննության կատարումը քննիչին հանձնարարելով քննչական մարմնի ղեկավարը կատարում է դատախազի նշված հանձնարարությունը: Քննչական մարմնի ղեկավարը իրավասու է իր վարույթի նախաքննության կատարման հետագա ընթացքը հանձնարարել քննիչին: Այս դեպքում կայացվում է համապատասխան որոշում, քանի որ կատարվում է վարույթն իրականացնող անձի փոփոխություն: Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է նաև պատճառաբանված որոշմամբ քննիչից վարույթը վերցնել և անձամբ իրականացնել նախաքննություն: Օրենքով նախատեսված չէ քննչական մարմնի ղեկավարի՝ վարույթային գործողություններին մասնակցելու լիազորություն:

*2.9. Հերևում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից ապացուցողական և այլ վարույթային գործողությունների, դատախազի որոշումների, դատախազի և իր հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանավորման ժամկետների պահպանմանը:* Այս լիազորությամբ քննչական մարմնի ղեկավարը հետևում է իրեն անմիջական ենթակա քննիչների կողմից իրականացվող բոլոր ապացուցողա-

կան և այլ վարության գործողությունների կատարմանը: Բացի այդ, քննչական մարմնի ղեկավարը հետևում է վարույթի ընթացքում դատախազի կողմից կայացված որոշումների, օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարությունների, ինչպես նաև իր հանձնարարությունների պատշաճ կատարմանը: Քրեական հետապնդման և կալանավորման ժամկետները սահմանվում են նախագծի 119-րդ, 194-րդ և 211-րդ հոդվածներով: Քրեական հետապնդման ժամկետներին հետևելը կարևոր է, քանի որ ժամկետները խախտելը քրեական վարույթը դադարեցնելու հիմք է:

2.10. *Ապահովում է վերադարձված քրեական գործով վարույթը շարունակելու մասին դատախազի հանձնարարության կատարումը:* Քրեական գործը վերադարձվում է վարույթը շարունակելու համար, երբ դատախազն իր որոշմամբ չի հաստատում մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը, եզրափակիչ ակտը կամ քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը: Այդ դեպքերում քրեական գործը վերադարձվում է քննչական մարմնի ղեկավարին՝ վարույթը շարունակելու հանձնարարությամբ: Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է վարույթի հետագա ընթացքը մակագրելու եղանակով հանձնարարել ինչպես նախկինում տվյալ վարույթն իրականացրած քննիչին, այնպես էլ այլ քննիչի:

2.11. *Իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով հսկող դատախազի վարությանն ակտի, այդ թվում՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման վերաբերյալ առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին:* Նշված լիազորությամբ քննչական մարմնի ղեկավարը իրավասու է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի վարույթով հսկող դատախազի ցանկացած վարությանն ակտի վերաբերյալ առարկություն ներկայացնելու վերադաս դատախազին: Վերադաս դատախազը որոշում է կայացնում ներկայացված առարկության կապակցությամբ: Քննչական մարմնի ղեկավարը նշված լիազորությունից կարող է օգտվել՝ անկախ նրանից՝ քննիչը համաձայն է հսկող դատախազի հետ, թե՛ ոչ: Նախագծի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քննչական մարմնի ղեկավարն իրավասու է վերադաս դատախազին գրավոր առարկություն ներկայացնել նաև տվյալ մարմնի քննիչին հասցեագրված հանձնարարության կապակցությամբ:



2.12. *Իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:* Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները չեն սահմանափակվում միայն նախագծի 40-րդ հոդվածով, և նրան, որպես վարույթի հանրային մասնակցի, վերապահված են օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված լիազորություններ: Սակայն դա չի նշանակում, որ քննչական մարմնի ղեկավարն իրավասու է իրականացնելու քննիչի լիազորություններից բխող գործառույթներ: Օրինակ՝ պրակտիկայում լայն տարածում ունի հետաքննության մարմնին հանձնարարությունները քննչական մարմնի ղեկավարի ստորագրությամբ ուղարկելը: Հետաքննության մարմնին հանձնարարություններ կարող են տրվել բացառապես քննիչի կողմից, քանի որ այն օրենքով սահմանված է որպես քննիչի լիազորություն: Քննչական մարմնի ղեկավարը նշված հանձնարարությունը ուղեկցական գրությամբ ուղարկում է կատարման:

3. Նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասով քննչական մարմնի ղեկավարը կայացնում է հետևյալ չորս որոշումները՝ 1. վարույթը մի քննիչից մյուսին հանձնելու մասին, 2. վարույթից հեռացված քննիչին այլ քննիչով փոխարինելու վերաբերյալ, 3. վարույթը քննչական խմբի կողմից կամ համատեղ քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ, 4. նախաքննությունն անձամբ կատարելու մասին:

3.1 Քննչական մարմնի ղեկավարը տալիս է հետևյալ հանձնարարությունները՝ 1. նախաքննության կատարման վերաբերյալ, 2. միևնույն ստորաբաժանման քննիչներին այլ քննիչի կողմից իրականացվող վարույթով առանձին ապացուցողական կամ այլ վարույթային գործողությունների կատարման վերաբերյալ (առանց քննչական խումբ ստեղծելու), 3. դատախազի հանձնարարությամբ վերադարձված քրեական գործով վարույթը շարունակելու վերաբերյալ, 4. նախաքննության արդյունավետությանը վերաբերող ցանկացած հարցի, այդ թվում՝ կոնկրետ ապացուցողական գործողություն կատարելու վերաբերյալ:

3.2 Հսկող դատախազին պետք է ուղարկել վերը թվարկված որոշումների և հանձնարարությունների պատճենները: Անհապաղ ուղարկել՝ նշանակում է անմիջապես, այսինքն՝ առանց հապաղելու: Եթե այդպիսի որոշումները կայացվում են կամ հանձ-

նարարությունները տրվում են ոչ աշխատանքային ժամերին կամ օրերին, ապա դրանց պատճենները պետք է ուղարկել հաջորդող աշխատանքային օրը կամ ժամին: Իրավաբանական առումով՝ նշված փաստաթղթերի պատճենները դատախազին ուղարկելու պարտականությունը կատարվում է ոչ թե դրանք առձեռն դատախազին հանձնելու, այլ սահմանված կարգով՝ գրասենյակային կամ փոստային եղանակով պաշտոնապես ուղարկելու եղանակով: Նշված փաստաթղթերի պատճենները դատախազին կարող են ուղարկվել նաև Էլեկտրոնային եղանակով, եթե առկա է պաշտոնական Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության սահմանված համակարգ:

## **Հոդված 41 Քննչի լիազորությունները**

### **Քննչը՝**

1) առերևույթ հանցագործության հարկանիշների առկայության դեպքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն և անհապաղ ձեռնամուխ լինում նախաքննության իրականացմանը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով իրավասու դատախազին:

2) ինքնուրույն ուղղություն է փայխ նախաքննությանը, ընդունում անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքին համապատասխան՝ կատարում է քննչական և այլ վարութային գործողություններ:

3) նախաքննության ընթացքում ենթադրյալ այլ հանցագործության հարկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին:

4) որոշում է կայացնում անձին ձերբակալելու կամ ձերբակալված անձին ազատ արձակելու մասին:

5) դիմում է դատարան սույն օրենսգրքով սահմանված հարկադրանքի միջոցներ կիրառելու, կալանքի ժամկետը երկարացնելու, քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելու միջնորդություններով՝ միջնորդության պարճենն անհապաղ ուղարկելով հսկող դատախազին:

6) հսկող դատարանի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ ազատ է արձակում կալանավորված մեղադրյալին.

7) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ոչ իրավաստի սահմանափակումները.

8) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոց կիրառելու, փոխելու, վերացնելու մասին.

9) միջոցներ է ձեռնարկում ենթադրյալ հանցագործությամբ պարճառված փաստի հարուցումը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերի հարուցումն ապահովելու համար.

10) հետաքննության մարմնին փալիս է գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ.

11) հետաքննության մարմնից պահանջում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները.

12) հետաքննության մարմնին հանձնարարում է կատարել ձեռքակալման, կալանավորման վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից աջակցություն է ստանում ապացուցողական և այլ վարտության գործողություններ կատարելիս.

13) անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու միջնորդություն է ներկայացնում հսկող դատարանին.

14) որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատարանի որոշման հիման վրա մեղադրանք է ներկայացնում.

15) որոշում է կայացնում րուժող, օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին.

16) ապահովում է վարույթին փաստաբանի մասնակցությունը որպես պաշտպան կամ լիազոր ներկայացուցիչ.

17) վարույթ է ներգրավում վկա, փորձագետ, թարգմանիչ, ընթերակա.

18) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում վարույթի մասնավոր մասնակիցների միջնորդությունների կապակցությամբ.

19) վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած առարկաները կամ փաստաթղթերը որպես ապացույց կցում է վարույթի նյութերին, իսկ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով որոշում է կայացնում այդ առարկաների կամ փաստաթղթերի անթույլատրելիության կամ ոչ վերաբերելիության մասին.

20) որոշում է կայացնում ընթերակային, թարգմանչին, փորձագետին հայտնած բացարկի կապակցությամբ.

21) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով պաշտպանին, լիազոր ներկայացուցչին, օրինական ներկայացուցչին կամ վկայի փաստաբանին ազատում է վարույթին մասնակցելուց կամ հսկող դատախազի հաստատմամբ հեռացնում է վարույթից.

22) հսկող դատախազի հանձնարարության կամ վարության ձևերի վերաբերյալ առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

23) վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, հարկադրանքի միջոց կիրառելու մասին հսկող դատախազի հանձնարարության, ինչպես նաև ձերբակալման ներքո չգտնվող անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատախազի որոշմամբ համաձայն չլինելու դեպքում առանց այն կատարելու դրա վերաբերյալ առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին.

24) քննչական մարմնի ղեկավարի վարության ձևերի վերաբերյալ առարկություն է ներկայացնում հսկող դատախազին՝ չկասեցնելով որոշման կատարումը.

25) որոշում է կայացնում քրեական վարույթը կարճելու մասին՝ այն ներկայացնելով հսկող դատախազի հաստատմամբ.

26) կազմում է մեղադրական եզրակացություն, մեղադրական ակտ կամ եզրափակիչ ակտ՝ այն ներկայացնելով հսկող դատախազի հաստատմամբ.

27) քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ շարունակում է վարույթը դատախազի կողմից վերադարձված քրեական գործով:

28) իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

1. Նախագծի 6-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ քննիչ է համարվում պետական պաշտոնատար անձը, ով իր իրավասության սահմաններում քրեական վարույթի ընթացքում իրականացնում է նախաքննություն: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նախաքննություն է համարվում քննիչի կողմից իր իրավասության սահմաններում ենթադրյալ հանցանքի փաստի կապակցությամբ իրականացվող գործունեությունը: Քննիչը քրեական դատավարությունում իրականացնում է հանրային բնույթի գործառույթներ և հանդիսանում է վարույթի հանրային մասնակից է: Քննիչի լիազորությունները թվարկված են նախագծի 41-րդ հոդվածով, ինչպես նաև նախագծի այլ հոդվածներով: Օրինակ՝ առանձին վարույթային գործողությունների իրականացման կարգերը սահմանված են այլ հոդվածներով, իսկ վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները սահմանված են նախագծի 36-րդ հոդվածով:

2. Քրեական դատավարությունում քննիչը կոչված է իրականացնելու նախաքննություն: Նախաքննությունը քրեական դատավարության առանցքային փուլերից է, քանի որ այդ ընթացքում է ձեռք բերվում ապացույցների մեծ մասը: Նախաքննության պատշաճ իրականացման համար քննիչն օժտված է հետևյալ լիազորություններով:

2.1 *Առերևույթ հանցագործության հարկանիշների առկայության դեպքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն և անհապաղ ձեռնամուխ լինում նախաքննության իրականացմանը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով իրավասու դատախազին:*

Քրեական վարույթ նախաձեռնելու կարգը սահմանված է նախագծի 24-րդ գլխով: Քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրությունը դատավարական փաստաթուղթ է, որի կազմման պահից սկսվում է նախաքննության իրականացու-

մը: Իրավասու դատախազին քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննություն սկսելու վերաբերյալ գրավոր տեղեկացնելու ժամկետներ չեն սահմանվում, սակայն դա պետք է կատարվի անհապաղ: Գրավոր տեղեկացումը և նախաքննությունն սկսելը միաժամանակյա գործողություններ են, քանի որ, օրինակ՝ դեպքի վայրի զննության հրատապ գործողությունն իրականացնելու համար քննիչը չի կարող սպասել մինչև այն պահը, որ դատախազը տեղեկացված լինի, բայց քննիչը պարտավոր է մինչ զննությունն սկսելը գրավոր իրազեկումն ուղարկել: Գրավոր տեղեկացումը կարող է իրականացվել գրասենյակային կամ փոստային եղանակով պաշտոնապես ուղարկելու միջոցով, ինչպես նաև՝ էլեկտրոնային եղանակով, եթե առկա է պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության սահմանված համակարգ: Անհրաժեշտության դեպքում գրավոր տեղեկացումը կարող է տրվել առձեռն: Իրավասու դատախազ է համարվում այն վերադաս դատախազը, ում ենթակայության ներքո գործող դատախազներից պետք է նշանակվի տվյալ վարույթով հսկող դատախազը:

*2.2 Ինքնուրույն ուղղություն է տրայիս նախաքննությանը, ընդունում անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքին համապատասխան կատարում է քննչական և այլ վարութային գործողություններ:*

Նախաքննությանն ինքնուրույն ուղղություն տալու, անհրաժեշտ որոշումներ ընդունելու և օրենսգրքին համապատասխան քննչական և այլ վարութային գործողություններ կատարելու լիազորությամբ է պայմանավորված քննիչի ինքնուրույնությունը: Քննիչի ինքնուրույնությունը նախաքննության կատարման արդյունավետության դատավարական երաշխիքներից է: Քննիչը նշված լիազորությունից օգտվում է իր նախաձեռնությամբ: Նախաքննությանն ինքնուրույն ուղղություն տալ նշանակում է, որ քննիչն ինքն է պլանավորում վարութային գործողությունների հերթականությունը, հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ մշակում վարկածներ և կայացնում անհրաժեշտ դատավարական որոշումներ: Հսկող դատախազի կամ քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին տրված հանձնարարությունները չեն խախտում քննիչի ինքնուրույնությունը, եթե դրանք բխում են նրանց դատավարական գործառույթներից և պատասխանատվության սահմաններից: Օրինակ՝ հսկող դատախազի հանձնարարություն-

ները պետք է ուղղված լինեն նախաքննության օրինականության ապահովմանը, քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությունները՝ նախաքննության արդյունավետության ապահովմանը: Այդ նպատակով օրենսդիրը սահմանել է այն ոլորտները կամ հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ հսկող դատախազը կամ քննչական մարմնի ղեկավարը կարող է քննիչին տալ հանձնարարություններ: Օրինակ՝ հսկող դատախազը իրավասու չէ քննիչին տրված հանձնարարության մեջ թվարկել այն ապացուցողական գործողությունները կամ դրանց հաջորդականությունը, որոնք պետք է իրականացվեն քննիչի կողմից: Բացի այդ, օրենսդրորեն սահմանված չեն հանձնարարության կամ դրա առանձին կետերի կատարման ժամկետներ սահմանելու լիազորություն, ուստի հսկող դատախազը չի կարող սահմանել այդպիսի ժամկետներ: Բանն այն է, որ ժամկետները սահմանվում են օրենքով, և քննիչը օրենքով սահմանված ժամկետներում էլ իրավասու է կատարելու տրված հանձնարարության պահանջները: Հսկող դատախազը քննիչին հանձնարարում է ձեռք բերել փաստական տվյալներ, իսկ դրանց ձեռքբերման եղանակի հարցը քննիչի դատավարական ինքնուրույնության տիրույթում է:

*2.3 Նախաքննության ընթացքում ենթադրյալ այլ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին:*

Քննիչը նախաքննություն իրականացնելիս կարող է հայտնաբերել ենթադրյալ այլ հանցագործության հատկանիշներ: Ենթադրյալ այլ հանցագործությունը կարող է կատարված լինել ինչպես տվյալ մեղադրյալի, այնպես էլ դատավարության այլ մասնակիցների կամ տվյալ վարույթի հետ չկապված այլ անձանց կողմից: Բոլոր դեպքերում նախաքննություն իրականացնելիս նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում քննիչն այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին: Անհապաղ գրավոր տեղեկացնել՝ նշանակում է անմիջապես, այսինքն՝ առանց հապաղելու: Եթե այլ հանցագործության դեպքը հայտնաբերվում է ոչ աշխատանքային ժամերին կամ օրերին, ապա գրավոր տեղեկացումը պետք է իրականացվի հաջորդող աշխատանքային օրը կամ ժամին: Բանն այն է, որ ոչ աշխատանքային օրերին չեն գործում փոստային բաժանմունքները և պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության

համակարգը, կամ հսկող դատախազն առհասարակ նշված ոչ աշխատանքային օրը կամ ժամին չի գտնվում աշխատանքի վայրում: Ոչ պաշտոնական իրազեկումները /օրինակ՝ քննիչի անձնական էլեկտրոնային փոստից հսկող դատախազի անձնական էլեկտրոնային փոստին ուղղված նամակը/ չեն կարող համարվել պաշտոնական իրազեկում: Եթե քննիչը նախաքննության ընթացքում հայտնաբերել է մեկ այլ անձի կողմից այլ առերևույթ հանցանք կատարելու հատկանիշներ, ապա պարտավոր է ոչ միայն տեղեկացնել հսկող դատախազին, այլև քննչական մարմնի ղեկավարին ՀՀ քր. դատ. օր-ի 178-րդ հոդվածի կարգով հաղորդում ներկայացնել իր լիազորությունների իրականացման ընթացքում նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու մասին, որի հիման վրա նախաձեռնվում է նոր քրեական վարույթ:

*2.4 Որոշում է կայացնում անձին ձերբակալելու կամ ձերբակալված անձին ազատ արձակելու մասին:*

Նախաքննություն իրականացնելու ընթացքում քննիչը լիազորված է համապատասխան հիմքերի առկայության պայմաններում անձին ձերբակալելու, ինչպես նաև ձերբակալված անձին ազատ արձակելու: Ձերբակալումը կամ ձերբակալումից ազատելը պարտադիր իրականացվում է համապատասխան որոշում կայացնելով: Ձերբակալումը հարկադրանքի միջոց է, որի կարգն ու պայմանները սահմանված են նախագծի 13-րդ գլխով: Նախագծի 114-րդ հոդվածով սահմանված են նաև ձերբակալվածին ազատ արձակելու հիմքերը: Քննիչը ձերբակալում իրականացնելիս կամ ձերբակալվածին ազատ արձակելիս ղեկավարվում է նշված գլխում նախատեսված նորմերով: Քննիչն իրավասու է համապատասխան հիմքերի առկայության պարագայում իրականացնել ձերբակալման բոլոր չորս տեսակները:

*2.5 Դիմում է դատարան սույն օրենսգրքով սահմանված հարկադրանքի միջոցներ կիրառելու, կալանքի ժամկետը երկարացնելու, քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելու միջնորդություններով միջնորդության պարձենն անհապաղ ուղարկելով հսկող դատախազին:*

Քննիչը միջնորդությամբ դիմում է դատարան քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում, երբ կոնկրետ հարկադրանքի միջոց կիրառելու կամ քննչական և գաղտնի



քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է դատարանի որոշումը: Այդպիսի հարկադրանքի միջոցներ են՝ կալանքը՝ որպես խափանման միջոց (նախագծի 118-րդ հոդվածներ), տնային կալանքը (նախագծի 123-րդ հոդված) և վարչական հսկողությունը (նախագծի 124-րդ հոդված): Դատարանի որոշմամբ իրականացվող քննչական գործողություններն են՝ բնակարանում խուզարկությունը (նախագծի 241-րդ հոդվածի 2-րդ մաս), բնակարանում գտնվող օբյեկտների, նոտարական, բանկային և հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ առարկաների առգրավումը (նախագծի 246-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչպես նաև նախագծով սահմանված բոլոր գաղտնի քննչական գործողությունները՝ ներքին դիտում, արտաքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում (նախագծի 31-րդ գլուխ):

Քննիչը դատարան ներկայացվող նշված միջնորդությունների պատճեններն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին, որի միջոցով ապահովում է հսկող դատախազի՝ դատարան ներկայացրած միջնորդությունը հետ վերցնելու լիազորության իրականացումը:

*2.6 Հսկող դատախազի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ ազատ է արձակում կալանավորված մեղադրյալին:*

Մեղադրյալը քննիչի որոշման հիման վրա կալանքից ազատ է արձակվում օրենքով նախատեսված հիմքերի առկայության պարագայում: Կալանքից ազատ արձակելու հիմքերը նախատեսված են նախագծի 120-րդ հոդվածով: Երբ կալանքից ազատ արձակելու նախաձեռնություն ցուցաբերում է քննիչը, ապա այդ դեպքում նա պետք է ստանա հսկող դատախազի համաձայնությունը, իսկ եթե կալանքից ազատ արձակելու նախաձեռնությունը ցուցաբերում է հսկող դատախազը, ապա այդ դեպքում բավարար է միայն դատախազի հանձնարարությունը: Քննիչի համապատասխան որոշումը վերջնական իրավական ուժ է ստանում միայն հսկող դատախազի համաձայնությամբ: Ընդ որում, հսկող դատախազի համաձայնությունն արտահայտվում է վերջինիս կողմից կայացված առանձին որոշմամբ, այլ ոչ թե քննիչի համապատասխան որոշման վրա մակագրությամբ:

2.7 Սույն օրենսգրքով սահմանված ղեկավարում վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումները:

Քրեական դատավարության ընթացքում իրականացվող վարույթային գործողությունների մեծ մասը ենթադրում է անձի իրավունքների կամ ազատությունների որոշակի սահմանափակումներ: Դրանք կարող են կապված լինել հարկադրանքի միջոցների կիրառման, ապացուցողական գործողությունների իրականացման հետ: Քրեական դատավարությամբ նախատեսված բոլոր հարկադրանքի միջոցների կիրառման, ապացուցողական գործողությունների իրականացման կարգն ու պայմանները մանրամասն սահմանված են օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Նշված գործողություններն իրականացնելիս օրենքի պահանջները չպահպանելն անխուսափելիորեն հանգեցնում է անձանց իրավունքների կամ ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումների: Նման իրավիճակում վարույթն իրականացնող քննիչը պարտավոր է իր լիազորությունների շրջանակներում վերացնել ոչ իրավաչափ սահմանափակումները, օրինակ՝ անհիմն ձերբակալված անձին անհապաղ ազատ արձակելը: Իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս քննիչը հաշվի է առնում, թե արդյո՞ք նման սահմանափակումը նախատեսված է եղել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, արդյո՞ք մարդու իրավունքների սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, արդյո՞ք մարդու իրավունքները սահմանափակող իրավական գործիքները համարժեք են հետապնդվող իրավաչափ նպատակներին (տե՛ս ՀՀ քր. դատ. օր-ի 38-րդ հոդվածի մեկնաբանությունը):

2.7.1 Քրեական վարույթի ընթացքում անձի իրավունքների կամ ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումներ կարող է թույլ տալ ինչպես հետաքննության մարմինը, այնպես էլ քննիչը: Այսպես՝ քննիչը վերացնում է օպերատիվ-հետախուզական և գաղտնի քննչական գործողություններ կատարելու ընթացքում մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումները: Քննիչի թույլ տված ոչ իրավաչափ սահմանափակումների և դրանց վերացնելու իրավիճակներն են՝ քննիչը վերացնում է քննչական խմբի մեկ այլ քննիչի թույլ տված իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումը, կամ եթե քննչական մարմնի ղե-

կավարն առանձին քննչական գործողության կատարումը հանձնարարել է այլ քննիչի, ապա վարույթն իրականացնող քննիչը կարող է վերացնել վերջինիս կողմից թույլ տված իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումները: Վարույթն իրականացնող քննիչը կարող է վերացնել իր իսկ կողմից թույլ տված իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումը, երբ հսկող դատախազը ՀՀ քր. դատ. օր-ի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով քննիչին հանձնարարում է դադարեցնել ապօրինի գործողությունը և չեզոքացնել դրա հետևանքները:

*2.8 Իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոց կիրառելու, փոխելու, վերացնելու մասին:*

Խափանման միջոցների տեսակները, դրանք կիրառելու, փոխելու և վերացնելու կարգը սահմանված է նախագծի 14-րդ գլխով: Օրենսդրությամբ սահմանված են այն խափանման միջոցները, որոնք կիրառվում են դատարանի կամ քննիչի կողմից և ինչ կարգով են դրանք փոխվում կամ վերացվում:

*2.9 Միջոցներ է ձեռնարկում ենթադրյալ հանցագործությամբ պարճառված վնասի հատուցումը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերի հատուցումն ապահովելու ուղղությամբ:*

Քննիչը նախաքննության ընթացքում պարտավոր է միջոցներ ձեռնարկել ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական համապատասխան ծախսերի հատուցումն ապահովելու ուղղությամբ: Հանցագործությամբ պատճառված նյութական վնասն առկա է հատկապես սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների կատարման պարագայում: Վնաս կարող է պատճառվել նաև բռնությամբ զուգորդված մի շարք հանցագործությունների, ինչպես նաև այլ հանցագործությունների կատարման հետևանքով: Գույքի բռնագրավումը հնարավոր է, երբ կատարված հանցագործության համար քրեական օրենսգրքի համապատասխան նորմի սանկցիայով նախատեսված է գույքի բռնագրավում պատժատեսակը: Քրեական դատավարությունում գույքային հայցի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են նախագծի 20-րդ գլխով, իսկ վարձատրությունը, ծախսերը և հատուցումը՝ 21-րդ գլխով:

Այս դեպքում քննիչը պետք է միջոցներ ձեռնարկի համապատասխան գույքը հայտնաբերելու և այն համապատասխան չափով կամ ամբողջությամբ արգելադրի: Այստեղ պահանջվում է նաև որոշակի հրատապություն, քանի որ հնարավոր է մինչև գույքի արգելադրումը քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու արդյունքում գույքն օտարվի: Գույքի արգելադրումը նախատեսված է նախագծի 15-րդ գլխով:

*2.10 Հետաքննության մարմնին տալիս է գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ:*

Գաղտնի քննչական գործողությունները կատարվում են քննիչի հանձնարարությամբ՝ դատարանի որոշման հիման վրա: Գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ քննիչի հանձնարարություն տալու կարգը սահմանված է նախագծի 251-րդ հոդվածով: Բացի գաղտնի քննչական գործողություններից, քննիչն իրավասու է նաև նախաքննության ընթացքում հետաքննության մարմնին հանձնարարել իրականացնել անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Հետաքննության մարմինը օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Քննիչը հետաքննության մարմնին հանձնարարությունը տալիս է գրավոր:

*2.11 Հետաքննության մարմնից պահանջում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները:*

Քննիչի հանձնարարության հիման վրա հետաքննության մարմնի կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները պետք է տրամադրվեն քննիչին՝ նյութերին կցելու համար: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքներն ամրագրվում են համապատասխան արձանագրություններում: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների կատարման իրավաչափությունը և թույլատրելիությունն ստուգելու նպատակով քննիչը կարող է հետաքննության մարմնից պահանջել նաև այդպիսի միջոցառումների և գործողությունների

հիմքերը, օրինակ՝ քննիչի համապատասխան հանձնարարությունը կամ հետաքննության մարմնի համապատասխան որոշումները, հանձնարարականները՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս:

*2.12 Հետաքննության մարմնին հանձնարարում է կատարել ձերբակալման, կալանավորման վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից աջակցություն է սրանում ապացուցողական և այլ վարութային գործողություններ կատարելիս:*

Նախագծի 36-րդ հոդվածի (վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները) 7-րդ մասի համաձայն՝ քննիչն իրավասու է հանձնարարություն տալ հետաքննության մարմնին՝ նախաքննության համակողմանիությունը և բնականոն ընթացքն ապահովելու կապակցությամբ: Ձերբակալման և կալանավորման որոշումները կատարելու համար քննիչն իր հանձնարարության հետ տրամադրում է նաև համապատասխան որոշումները: Օրենսդրությամբ սահմանված չեն կոնկրետ ապացուցողական և այլ վարութային գործողություններ, որոնք կատարելիս քննիչը կարող է աջակցություն ստանալ հետաքննության մարմնից, ուստի քննիչը կարող է հետաքննության մարմնից աջակցություն ստանալ ցանկացած ապացուցողական (քննչական) և այլ վարութային գործողություններ կատարելիս:

*2.13 Անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու միջնորդություն է ներկայացնում հսկող դատախազին:*

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումները կայացվում են հսկող դատախազի կողմից՝ քննիչի միջնորդության հիման վրա: Քննիչը նման միջնորդություններ ներկայացնում է իր հայեցողությամբ՝ ելնելով վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների գնահատումից:

Հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու հիմքերը և կարգը սահմանված են համապատասխանաբար նախագծի 196-րդ և 197-րդ հոդվածներով: Քրեական հետապնդման

կասեցված ժամկետը վերսկսելը նախատեսված է նախագծի 198-րդ հոդվածով: Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կարգը սահմանված է նախագծի 199-րդ հոդվածով:

*2.14 Որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ հսկող դատախազի որոշման հիման վրա մեղադրանք է ներկայացնում:*

Դատախազն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի միջնորդության հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ կայացնում է համապատասխան որոշում: Քննիչը հսկող դատախազի կայացրած որոշման հիման վրա մեղադրանք է ներկայացնում: Անձը մեղադրյալի կարգավիճակ է ստանում հսկող դատախազի կողմից որոշում կայացնելու պահից: Մեղադրանք ներկայացնելու կարգը սահմանված է նախագծի 192-րդ հոդվածով: Այն դեպքերում, երբ դատախազը սեփական նախաձեռնությամբ է անձին՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնում, այդ որոշումը պետք է անհապաղ տրամադրվի քննիչին, քանի որ նախագծի 192-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշումն ստանալուց հետո 18 ժամ ժամանակ է նախատեսված մեղադրանք առաջադրելու համար:

*2.15 Որոշում է կայացնում Կրուժոյ, օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին:*

Քննիչն օրենքով նախատեսված հիմքերով որոշում է կայացնում անձին տուժող կամ օրինական ներկայացուցիչ ճանաչելու վերաբերյալ, որից հետո տվյալ անձինք ստանում են դատավարական կարգավիճակ, ձեռք են բերում իրավունքներ և պարտականություններ:

*2.16 Ապահովում է վարույթին փաստաբանի մասնակցությունը որպես պաշտպան կամ լիազոր ներկայացուցիչ:*

Փաստաբանը քրեական դատավարությանը կարող է մասնակցել որպես մեղադրյալի պաշտպան, տուժողի լիազոր ներկայացուցիչ, ինչպես նաև իրավական օգնություն ցուցաբերել վկային: Քննիչը նախաքննություն իրականացնելիս, որպես վարույթն իրականացնող մարմին, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ապահովում է վարույթին փաստաբանի մասնակցությունը՝ որպես պաշտպան կամ լիազոր ներկայացու-

ցիչ: Փաստաբանի մասնակցությունն ապահովել՝ նշանակում է վարույթի ընթացքում ստեղծել այնպիսի պայմաններ, որ փաստաբանը որպես պաշտպան կամ լիազոր ներկայացուցիչ կարողանա լիարժեք օգտվել իր իրավունքներից՝ ցուցաբերելով անհրաժեշտ իրավական օգնություն:

*2.17 Վարույթ է ներգրավում վկա, փորձագետ, թարգմանիչ, ընթերակա:*

Քննիչն անձին որպես վկա ներգրավում է վարույթին ցուցմունք տալու նպատակով, եթե տվյալ անձին կարող է հայտնի լինել վարույթով պարզաբանման ենթակա որևէ հանգամանք (նախագծի 57-րդ հոդված): Փորձագետը վարույթ է ներգրավվում, երբ վարույթի առարկայով շահագրգռված չէ և վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի մասնավոր մասնակցի կողմից ներգրավվելով, հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ՝ օժանդակում է վարույթին (նախագծի 59-րդ հոդված): Թարգմանիչը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, ում վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն կատարելու համար: Թարգմանիչ է նաև համրի նշանները հասկացող և խոսիլ հետ նշաններով բացատրվելու ունակ անձը (նախագծի 61-րդ հոդված): Ընթերական վարույթի առարկայով չշահագրգռված՝ Հայաստանի Հանրապետության չափահաս գործունակ քաղաքացին է, ով վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամավոր մասնակցում է ապացուցողական գործողության կատարմանը՝ դրա կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները հաստատելու համար (նախագծի 62-րդ հոդված):

*2.18 Իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում վարույթի մասնավոր մասնակիցների միջնորդությունների կապակցությամբ:*

Վարույթի մասնավոր մասնակիցները նշված են նախագծի 6-րդ գլխում: Միջնորդություններ ներկայացնելու կարգը սահմանված է նախագծի 19-րդ գլխով: Քննիչն իր լիազորությունների սահմաններում ներկայացված միջնորդությունները քննարկում և լուծում է սահմանված կարգով և ժամկետներում: Միջնորդությունների վերաբերյալ որոշումները լինում են երկու տեսակ՝ միջնորդությունը

բավարարելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Առանձին դեպքերում կարող է որոշում կայացվել միջնորդությունը մասնակի բավարարելու մասին: Երբ միջնորդությունը բաղկացած է լինում երկու և ավելի կետերից և դրանցից միայն մեկ կամ մի քանի կետերն են բավարարվում քննիչի կողմից, այս դեպքում կայացվում է միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում: Հարկ է նկատել, որ նախագծի 155-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջնորդության լուծումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կարող է հետաձգվել մինչև միջնորդության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար էական հանգամանքների պարզումը: Այսպիսով, միջնորդության լուծման հետաձգումը նույնպես համարվում է քննարկվող կետով նախատեսված քննիչի լիազորություն: Վարույթի ընթացքում միջնորդության հարուցումը և լուծումը կարգավորված է նախագծի 155-րդ հոդվածով:

*2.19 Վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած առարկաները կամ փաստաթղթերը որպես ապացույց կցում է վարույթի նյութերին, իսկ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով որոշում է կայացնում այդ առարկաների կամ փաստաթղթերի անթույլատրելիության կամ ոչ վերաբերելիության մասին:*

Վարույթի մասնակիցներն իրավունք ունեն ներկայացնել առարկաներ կամ փաստաթղթեր՝ որպես ապացույցներ վարույթի նյութերին կցելու համար: Ապացույցների թույլատրելիությունը սահմանված է նախագծի 97-րդ հոդվածով: Ապացույցների վերաբերելիությունը գնահատողական է, և քննիչն ինքն է որոշում, թե տվյալ վարույթին վերաբերելի է տվյալ առարկան կամ փաստաթուղթը, թե՛ ոչ: Նախագծի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ՝ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ: Բոլոր դեպքերում ներկայացված առարկաները կամ փաստաթղթերը կցվում են վարույթի նյութերին և որպես ապացույց անթույլատրելի կամ ոչ վերաբերելի լինելու պարագայում շարունակում են մնալ նյութերում կամ դրան կից:



2.20 Որոշում է կայացնում ընթերակային, թարգմանչին, փորձագերին հայրնաձ բացարկի կապակցութամբ:

Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները կարգավորվում են նախագծի 8-րդ գլխով: Ընթերակային բացարկելը նախատեսված է նախագծի 70-րդ հոդվածով, իսկ փորձագետին և թարգմանչին բացարկելը նախատեսված է նախագծի 71-րդ հոդվածով:

2.21 Սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով՝ պաշտպանին, լիազոր ներկայացուցչին, օրինական ներկայացուցչին կամ վկայի փաստաբանին ազատում է վարույթին մասնակցելուց կամ հսկող դատախազի հաստատմամբ հեռացնում է վարույթից:

Պաշտպանի վարույթին մասնակցության դադարեցումը նախատեսված է նախագծի 48-րդ հոդվածով: Վարույթից հեռացնելը սահմանված է նախագծի 148-րդ հոդվածով: Փաստաբանին կամ օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու մասին քննիչի որոշումը հաստատում է հսկող դատախազը: Քննիչը պաշտպանին, լիազոր ներկայացուցչին, օրինական ներկայացուցչին կամ վկայի փաստաբանին ազատում է վարույթին մասնակցելուց, եթե առկա են վարույթին նրանց մասնակցությունը բացառող հանգամանքներ: Այս դեպքում հսկող դատախազը քննիչի որոշման հաստատում չի պահանջում:

2.22 Հսկող դատախազի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը:

Նախագծի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկող դատախազն իրավասու է վարույթի շրջանակներում քննիչին հանձնարարություն տալ՝ նրա կատարած անօրինական գործողությունը դադարեցնելու և (կամ) դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ, նրա անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ և քրեական հետապնդման հարուցման կամ դադարեցման հարցը լուծելու, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ պարզելու կապակ-

ցությամբ: Բացի այդ, հսկող դատախազը վարույթի ընթացքում, իր լիազորությունների շրջանակներում կայացնում է որոշումներ, որոնք վարութային ակտեր են:

Նշված հարցերի վերաբերյալ հսկող դատախազի հանձնարարությունը, ինչպես նաև կայացված որոշումն ստանալուց հետո քննիչը, չհամաձայնելով, իրավասու է առարկություն ներկայացնել վերադաս դատախազին: Սակայն քննիչը չպետք է կասեցնի տրված հանձնարարության կամ կայացված որոշման կատարումը, քանի դեռ վերադաս դատախազն առարկության վերաբերյալ վերջնական որոշում չի կայացրել:

*2.23 Վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, հարկադրանքի միջոց կիրառելու մասին հսկող դատախազի հանձնարարությանը, ինչպես նաև ձերբակալման ներքո չգտնվող անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատախազի որոշմանը համաձայն չլինելու դեպքում, առանց այն կատարելու, դրա վերաբերյալ առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին:*

Ի տարբերություն նախորդ կետի՝ վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, հարկադրանքի միջոց կիրառելու մասին հսկող դատախազի հանձնարարությանը, ինչպես նաև ձերբակալման ներքո չգտնվող անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատախազի որոշմանը համաձայն չլինելու դեպքում քննիչը չի կատարում տրված հանձնարարության կամ կայացված որոշման պահանջները՝ մինչև իր կողմից վերադաս դատախազին ներկայացված առարկության վերաբերյալ վերջնական որոշման կայացումը: Այդ ընթացքում քննիչը որևէ պատասխանատվություն չի կրում նշված հանձնարարությունները չկատարելու համար նույնիսկ այն դեպքերում, երբ իր ներկայացրած առարկությունը վերադաս դատախազը չի բավարարում:

*2.24 Քննչական մարմնի ղեկավարի վարութային ակտի վերաբերյալ առարկություն է ներկայացնում հսկող դատախազին՝ չկասեցնելով որոշման կատարումը:*

Քննչական մարմնի ղեկավարն իր լիազորությունների շրջանակում որոշումներ է կայացնում և հանձնարարություններ է տալիս, որոնք վարութային ակտեր են: Եթե քննիչը համաձայն չէ այդ վա-

րութային ակտերին, կարող է առարկություն ներկայացնել հսկող դատախազին: Սակայն քննիչը չի կասեցնում քննչական մարմնի ղեկավարի որոշման կատարումը՝ մինչև հսկող դատախազի որոշում կայացնելը ներկայացված առարկության վերաբերյալ: Քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին տրված հանձնարարության վերաբերյալ առարկություն ներկայացնելու քննիչի լիազորությունը սահմանված է նախագծի 36-րդ հոդվածի 6-րդ մասով, որտեղ նույնպես նշվում է, որ առարկություն ներկայացնելիս չի կասեցվում հանձնարարության կատարումը:

*2.25 Որոշում է կայացնում քրեական վարույթը կարճելու մասին՝ այն ներկայացնելով հսկող դատախազի հաստատմանը:*

Քրեական վարույթը կարճելու հիմքերը սահմանված են նախագծի 13-րդ հոդվածով, իսկ նախաքննության ավարտը քրեական վարույթը կարճելու հիմքով նախատեսված է նախագծի 209-րդ հոդվածով: Քննիչը քրեական վարույթը կարճելու մասին որոշում կայացնելիս ղեկավարվում է նշված հոդվածներով, ինչպես նաև քննարկվող հոդվածի 25-րդ կետով: Այդ որոշումը կայացնելուց հետո քննիչն այն ներկայացնում է հսկող դատախազի հաստատմանը: Նշված որոշումը հսկող դատախազի հաստատելուց հետո վերջնական իրավական ուժ է ստանում:

*2.26 Կազմում է մեղադրական եզրակացություն, մեղադրական ակտ կամ եզրափակիչ ակտ՝ այն ներկայացնելով հսկող դատախազի հաստատմանը:*

Մեղադրական եզրակացություն կազմելու կարգը սահմանված է նախագծի 27-րդ գլխով: Մեղադրական ակտ կազմվում է պարզեցված նախաքննության ընթացքում, որը կարգավորվում է նախագծի 28-րդ գլխով: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթով կազմվում է եզրափակիչ ակտ, նշված վարույթը կարգավորվում է նախագծի 52-րդ գլխով: Մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը կամ եզրափակիչ ակտը պետք է հաստատվի հսկող դատախազի կողմից, որից հետո վարույթն ուղարկվում է դատարան:

2.27 Քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ շարունակում է վարույթը դատախազի վերադարձած քրեական գործով:

Վարույթը շարունակելու համար դատախազը կարող է վերադարձնել ՀՀ քր. դատ. օրենսգրքով նախատեսված դեպքերում, երբ դատախազն իր որոշմամբ չի հաստատում մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը, եզրափակիչ ակտը կամ քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը: Այս դեպքում քննչական մարմնի ղեկավարը հանձնարարում է քննիչին շարունակել վարույթը: Ընդ որում, նշանակություն չունի, թե մինչ այդ տվյալ քննիչն է իրականացրել վարույթը, թե՛ այլ քննիչ:

2.28 Իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Քննիչի լիազորությունները չեն սահմանափակվում նախագծի 41-րդ հոդվածով: Քննիչը՝ որպես վարույթի հանրային մասնակից, օժտված է նույն օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված լիազորություններով:

3. Նախագծով նախատեսված չէ քննիչի՝ ստուգումներ, վերստուգումներ նշանակելու լիազորությունը: Դրա փոխարեն քննիչը կարող է կատարել համապատասխան ապացուցողական գործողություններ, օրինակ՝ առարկաների կամ փաստաթղթերի առգրավում, խուզարկություն, որից հետո կարող է նշանակվել փորձաքննություն և փորձագետի եզրակացությամբ ստանալ վարույթի համար էական նշանակություն ունեցող հարցերի պատասխանները: Մասնավորապես, ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հարկային հանցագործությունների վերաբերյալ քննվող գործերով դատահաշվապահական փորձաքննությունները նշանակվում են բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում իրականացնելուց հետո: Նախագծով սահմանված ընթացակարգի համաձայն՝ քննիչը, փորձագետի աջակցությամբ, առգրավում է անհրաժեշտ փաստաթղթերը, այնուհետև նշանակում է համապատասխան փորձաքննություն:

## 5. Հետաքննության մարմնի պետի և հետաքննիչի լիազորությունները

### Հոդված 42. Հետաքննության մարմնի լիազորությունները

#### 1. Հետաքննիչը՝

1) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ իրականացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.

2) սույն օրենսգրքին համապատասխան՝ կատարում է գաղղրի քննչական գործողություններ.

3) օժանդակում է սպացուցողական և այլ վարտութային գործողությունների կատարմանը.

4) օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղղրի քննչական գործողությունների արդյունքներն օրենքով նախատեսված կարգով ներկայացնում է քննիչին.

5) հետաքննության կատարման ընթացքում նոր հանցագործության հարկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնում է քննիչին.

6) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կատարում է ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին.

7) մինչև հետաքննության մարմնի վարչական շենք բերելն անհապաղ ազատ է արձակում իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով հետաքննության մարմնի պետին.

8) միջոցներ է ձեռնարկում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները և փաստաթղթերը, ինչպես նաև դեպքի վայրը պահպանելու ուղղությամբ.

9) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերով նախատեսված լիազորությունները հետաքննիչն իրականացնում է բացառապես քննիչի հանձնարարությամբ:

3. Հետաքննության մարմնի պետը՝

1) իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է հետաքննիչի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունների իրականացումը.

2) անձամբ իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները.

3) քննիչի հանձնարարության հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին.

4) հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին առարկություն է ներկայացնում քննիչի վարությանի սկզբի վերաբերյալ՝ չկասեցնելով որոշման կատարումը.

5) դատախազի գրավոր պահանջով նրա ստուգմանն է ներկայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը.

6) անհապաղ ազատ է արձակում հետաքննիչի նախաձեռնությամբ ձերբակալված և հետաքննության մարմնի վարչական շենքում գրնվող անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի փակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին.

7) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

1. Հետաքննության մարմինը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար (հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցներ են (հետաքննիչներ), ովքեր նախաքննության շրջանակներում իրավասու են կատարելու գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Հետաքննության մարմինները, բացի հետաքննության բովանդակությունը կազմող գաղտնի քննչական գործողություններից և օպերատիվ-հետախուզական միջոցառումներից, իրականացնում են նաև այլ գործողություններ, օրինակ՝ ձերբակալման, կալանավորման որոշումների կատարումը:

1.1 «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝ ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, հարկային մարմինները, մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով, քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում:

1.2 Հետաքննության մարմինը պատասխանատու է գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումներն օրենքով սահմանված կարգով, ժամանակին և արդյունավետ կատարելու համար (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 35-րդ հոդվածի 5-րդ մաս): Մեկնաբանվող հոդվածում տարանջատված են հետաքննիչի և հետաքննության մարմնի պետի լիազորությունները:

2. Հետաքննիչի լիազորություններն են.

2.1 *«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ իրականացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:* Քրեական դատավարության ոլորտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախու-

զական միջոցառում է, որի իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 6-րդ հոդվածի 40-րդ կետ): «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է օպերատիվ-հետախուզական միջոցառումների սպառիչ ցանկը: Դատարանի որոշում չպահանջվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն են՝ օպերատիվ հարցումը, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը, համեմատական հետազոտումների նմուշներ հավաքելը, հսկիչ գնումը, վերահսկելի մատակարարումը և գնումը, իրերի և փաստաթղթերի հետազոտումը, անձի նույնացումը, շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտումը, օպերատիվ ներդրումը, օպերատիվ փորձարարությունը:

*2.2 Օրենսգրքին համապատասխան՝ կատարում է գաղտնի քննչական գործողություններ:* Գաղտնի քննչական գործողություններն են՝ ներքին դիտում, արտաքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

*2.3 Օժանդակում է ապացուցողական և այլ վարույթային գործողությունների կատարմանը:* Քննչական գործողության կատարման բնականոն ընթացքն ապահովելու համար քննիչն իրավասու է դրա կատարմանը ներգրավել հետաքննության մարմնի աշխատակիցների (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 217-րդ հոդվածի 8-րդ կետ), ինչպես նաև հետաքննության մարմնից աջակցություն ստանալ ապացուցողական և այլ վարույթային գործողություններ կատարելիս (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 41-րդ հոդված 11-րդ կետ): Ապացուցողական և այլ վարույթային գործողությունների կատարմանն օժանդակելու նպատակով հետաքննիչը միջոցներ է ձեռնարկում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները և փաստաթղթերը, ինչպես նաև դեպքի վայրը պահպանելու ուղղությամբ: Հետաքննիչի կողմից ապացուցողական և այլ վարույթային գործողությունների կատարմանն օժանդակելը պետք է տարբերել փորձագետի կողմից ապացուցողական կամ այլ վարույթային գործողության կատարմանն աջակցելու միջո-



ցով վարույթին օժանդակելուց (ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 59-րդ հոդվածի 1-ին մաս): Փորձագետը վարությանին գործողությունների կատարմանն աջակցում է հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, իսկ հետաքննիչն օժանդակում է ապացուցողական և այլ վարությանին գործողությունների կատարմանն առավելապես կազմակերպաիրավական բնույթի միջոցառումների կիրառմամբ:

2.4. *Օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքներն օրենքով նախատեսված կարգով ներկայացնում է քննիչին:* Հետաքննիչն ի պաշտոնե պարտավոր է քննիչին ներկայացնել քրեական վարույթի շրջանակներում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները՝ անկախ նրանից, թե քննիչը հետաքննության մարմնից պահանջել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները, թե՛ ոչ: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օրենքով և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ստացված տեղեկատվությունը կարող է փոխանցել միայն քրեական վարույթ կամ օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմինների՝ նրանց խնդրանքով օրենքով իրենց վերապահված կոնկրետ լիազորության իրականացման համար՝ բացառությամբ օրենքով սահմանված ոչնչացման ենթակա տեղեկությունների:

2.5. *Հետաքննության կատարման ընթացքում նոր հանցագործության հարկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնում է քննիչին:* Հետաքննություն կատարելու ընթացքում նոր հանցագործության հատկանիշներ բացահայտել ասելով՝ հասկացվում է ինչպես մեղադրյալի կողմից այլ առերևույթ հանցագործության կատարման փաստի բացահայտումը,

այնպես էլ մեկ այլ անձի կողմից այլ առերևույթ հանցանք կատարելու մասին տեղեկություններ ձեռք բերելը: Եթե հետաքննիչը հետաքննության ընթացքում հայտնաբերել է մեկ այլ անձի կողմից այլ առերևույթ հանցանք կատարելու հատկանիշներ, ապա պարտավոր է ոչ միայն քննիչին այդ մասին գրավոր տեղեկացնել, այլև քննչական մարմնի ղեկավարին կամ դատախազին ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 178-րդ հոդվածի կարգով հաղորդում ներկայացնել իր լիազորությունների իրականացման ընթացքում նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու մասին, որի հիման վրա քննիչը կամ դատախազը պետք է նախաձեռնի նոր քրեական վարույթ:

*2.6. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կատարում է ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին:* Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա կատարված ձերբակալման և անձնական խուզարկության մեկնաբանությունը տրվել է ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 109-րդ, 244-րդ հոդվածների մեկնաբանության մեջ: Թեև մեկնաբանվող հոդվածում խոսվում է հետաքննիչի կողմից միայն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալելու մասին, սակայն ձերբակալման մյուս տեսակների իրավակարգավորումներից պարզ է դառնում, որ հետաքննիչը քննիչի որոշման հիման վրա կատարում է նաև՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալումը, խստիանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի ձերբակալումը, կարճաժամկետ ձերբակալումը:

*2.7. Մինչև հետաքննության մարմնի վարչական շենք բերելն անհապաղ ազատ է արձակում իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի րոակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով հետաքննության մարմնի պետին:* Հետաքննիչն իր նախաձեռնությամբ կարող է անձին ձերբակալել միայն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Ձերբակալման մյուս տեսակների դեպքում հետաքննիչը

չի օգտվում անձին ազատ արձակելու լիազորությունից, քանի որ ձերբակալումն իրականացվել է ոչ թե իր նախաձեռնությամբ, այլ քննիչի որոշման հիման վրա:

Ձերբակալված անձին ազատ արձակելու մասին տե՛ս ՀՀ քր. դատ. օր-ի 114-րդ հոդվածի մեկնաբանությունը:

3. Հետաքննության մարմնի պետի լիազորություններն են.

3.1. *իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է հետաքննիչի կողմից իր լիազորությունների իրականացումը:* Հետաքննության մարմնի պետը, մասնավորապես, պետք է կազմակերպի և ապահովի հետաքննիչի կողմից քննիչի հանձնարարությունները ժամանակին և օրենքով սահմանված կարգով իրականացնելը: Հետաքննության մարմնի պետը հետաքննիչի լիազորությունների իրականացումը կազմակերպելու և ապահովելու լիազորությունը կարող է իրականացնել հետաքննիչին կազմակերպաիրավական բնույթի հանձնարարություններ տալու եղանակով: Նկատի ունենալով, որ հետաքննության մարմնի պետի և հետաքննիչի միջև ծագում են առավելապես կազմակերպաիրավական բնույթի հարաբերություններ, ուստի վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները կանոնակարգող՝ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 36-րդ հոդվածում սահմանված չեն հետաքննության մարմնի պետի և հետաքննիչի փոխհարաբերությունները, այդ թվում՝ հետաքննության մարմնի պետի կողմից հետաքննիչի կազմակերպական բնույթի հանձնարարություններ տալու լիազորությունը, որը կարող է կարգավորվել համապատասխան հետաքննության մարմնիների իրավական կարգավիճակը սահմանող օրենքներում:

3.2 *Անձամբ իրականացնում է մեկնաբանվող հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները:* Տվյալ դեպքում հետաքննության մարմնի պետը կոնկրետ քրեական վարույթի շրջանակում հանդես է գալիս որպես հետաքննիչ՝ օգտվելով հետաքննիչի համար օրենքով նախատեսված լիազորություններից: Եթե հետաքննության մարմնի պետն անձամբ իրականացնում է հետաքննիչի լիազորությունները, ապա՝ կոնկրետ քրեական վարույթի շրջանակում չի կարող միաժամանակ իրականացնել հետաքննության մարմնի պետի լիազորությունները: Այս դեպքում հետաքննության մարմնի պետի լիազորությունները, օրինակ՝ հե-

տաքննիչի լիազորությունների իրականացման կազմակերպումը, իրականացնում է հետաքննության մարմնի պետի վերադասը:

3.3 Քննիչի հանձնարարության հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու կարգը սահմանված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով:

3.4 Հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին առարկություն է ներկայացնում քննիչի վարությանի ակտի վերաբերյալ՝ չկասեցնելով որոշման կատարումը: Նշված լիազորության նման դրույթ նախատեսված է նաև ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 36-րդ հոդվածի 8-րդ մասում՝ որի համաձայն իր իրավասության սահմաններում քննիչի տված հանձնարարությունը պարտադիր է հետաքննության մարմնի համար, սակայն հետաքննության մարմնի պետն իրավասու է դրա վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին՝ չկասեցնելով հանձնարարության կատարումը: Նշված դրույթներն համադրելուց պարզ է դառնում, որ հետաքննության մարմնի պետը մեկնաբանվող հոդվածի իմաստով կարող է առարկություն ներկայացնել քննիչի վարությանի ակտի վերաբերյալ, իսկ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 36-րդ հոդվածի 8-րդ մասի իմաստով՝ միայն քննիչի հանձնարարությունների վերաբերյալ, ուստի մեկնաբանվող լիազորությունը հետաքննության մարմնի պետին լիազորում է առարկություն ներկայացնել ոչ միայն քննիչի հանձնարարությունների, այլև հետաքննության մասով քննիչի ցանկացած վարությանի ակտի վերաբերյալ: Օրինակ՝ եթե քննիչը հետաքննության մարմնից պահանջում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներ, որոնք ենթակա չեն տրամադրման, ապա՝ հետաքննության մարմնի պետը իրավասու է քննիչի վարությանի ակտի դեմ ներկայացնել առարկություն:

3.5 Դատախազի գրավոր պահանջով նրա ստուգմանն է ներկայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատախազին տրա-

*մատրման ենթակա փաստաթղթերը: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները: Հսկողական լիազորություններն իրականացնելիս դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարները պարտավոր են նրան ներկայացնել այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Դատախազը պարտավոր է ապահովել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ իրեն ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների գաղտնիությունը: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:*

*3.6 Անհապաղ ազատ է արձակում հետաքննիչի նախաձեռնությամբ ձերբակալված և հետաքննության մարմնի վարչական շենքում գտնվող անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին: Եթե հետաքննիչը կարող է իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին ազատ արձակել մինչ վարչական շենք բերելը, ապա հետաքննության մարմնի պետը անձին ազատ արձակելու լիազորությունից օգտվում է, եթե ձերբակալված անձը գտնվում է վարչական շենքում: ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 42-րդ հոդվածում սահմանված չէ հետաքննիչի և հետաքննության մարմնի պետի՝ ձերբակալված անձին ազատ արձակելու լիազորության իրականացման դատավարական ձև, մասնավորապես՝ արդյոք պետք է ձերբակալվածին ազատ արձակելու մասին որոշում կայացվի, եթե՝ այո, ապա՝ ինչ բովանդակություն պետք է ունենա որոշումը, իսկ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 114-րդ հոդվածում ձերբակալվածին ազատ արձակելու մասին որոշում կայացնելու դատավարական ձևը վերաբերում է միայն քննիչի և դատախազի կողմից անձին ազատ արձակելու դեպքերին: Հետաքննիչի*

և հետաքննության մարմնի պետի՝ ձերբակալված անձանց ազատ արձակելու լիազորության իրականացման օրենսդրական բացի պայմաններում հետաքննության մարմնի պետը կամ հետաքննիչը, օրենքի զուգորդության կիրառման կարգով, պետք է ղեկավարվի ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 114-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և կայացնի ձերբակալվածին ազատ արձակելու մասին որոշում, որի պատճենն անհապաղ հանձնվում է ազատված անձին: Որոշման մեջ պետք է նշվեն անձին ազատելու հիմքը և ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը, րոպեն): Ձերբակալված անձին ազատ արձակելու մասին որոշման կայացման անհրաժեշտությունը պայմանավորված է ազատ արձակված անձի կողմից ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի ապահովման պահանջով:

4. Մեկնաբանվող հոդվածում հետաքննիչի և հետաքննության մարմնի պետի լիազորությունները սպառիչ չեն, նրանք իրականացնում են օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

## Գրականություն

1. *Դավթյան Ա. Ղամբարյան Ա.* Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման օրինականության ապահովման կառուցակարգերը (դատախազական և դատական քաղաքականության հիմնահարցեր): «Օրինականություն», 2010, թիվ 59:
2. *Ղամբարյան Ա.* Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում: Եր., «Օրենք և իրականություն», 2010:
3. *Վարդևանյան Ա., Ղամբարյան Ա., ՀՀ գլխավոր դատախազի և հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու լիազորության տարանջատման հիմնախնդիրը:* «Օրինականություն», 2013, թիվ 78:
4. *Азаров В.А., Ревенко Н.И., Кузембаева М.М.* Функция предварительного расследования в истории, теории и практике уголовного процесса России: монография. Омск: Изд-во ОмГУ, 2006.
5. *Александров А. С.* Вопросы взаимодействия прокурора, руководителя следственного органа и следователя в ходе досудебного производства по уголовному делу. Вестник МВД, 2009. № 1.
6. *Александров А.С.* «Обвинительность» должна быть обвинительной, а «состязательность» состязательной. Уголовный процесс России. Проблемные лекции: учебное пособие (для студентов высших юридических учебных заведений) / Науч. ред. В.Т.Томин, А.П.Попов и И.А.Зинченко. Пятигорск: Изд., « РИА-КМВ» 2014.
7. *Александров А., Марчук А.* Подследственность уголовных дел. Электронный ресурс, 2003. [http://www.juristlib.ru/book\\_2772.htm](http://www.juristlib.ru/book_2772.htm)(26.12.2014).
8. *Бабич А. В.* Процессуальная самостоятельность и независимость следователя как основа его статуса в уголов-

- вном судопроизводстве. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2012.
9. *Барабаш А. С.* Природа российского уголовного процесса, цели уголовно-процессуальной деятельности и их установление. СПб.: Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2005.
  10. *Буглаева Е. А.,* Веницкий Л.В. Участие прокурора в ходе предварительного следствия. М.: Юрлитинформ, 2013.
  11. *Вартанов А. Р.* Проблемы процессуальной самостоятельности следователя по УПК РФ. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Краснодар, 2012.
  12. *Власова Н.А.,* Шамарова В.М. Ретроспективный анализ развития следственного аппарата в России. Вестник екатерининского института № 1 (25) 2014.
  13. *Влезько Д. А.* Проблемы организационных функций начальника следственного отделения (отдела) в расследовании. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Краснодар, 2002.
  14. *Головкин Л. В.* Новый УПК Российской Федерации в контексте сравнительного уголовно-процессуального права. Государство и право. 2002. № 5.
  15. *Гуляев А. П.* Правовые основы управления следственным аппаратом органов внутренних дел. Организация работы следственного отдела. М.: 1977.
  16. *Гуськова А. П.*  
К вопросу о процессуальной функции следователя.  
Вестник Оренбургского государственного университета.  
№ 3. 2013.
  17. *Захаров Н. В.* Теория и практика определения подследственности уголовных дел. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Самара, 2009.
  18. *Калиновский К. Б.* Уголовный процесс. [http://kalinovsky-k.narod.ru/p/lecture\\_notes/](http://kalinovsky-k.narod.ru/p/lecture_notes/) (29.12.2014).
  19. *Картохина О. А.* Начало и прекращение уголовного преследования следователями органов внутренних дел. Дисс. ... канд. юрид. наук. СПб., 2003. <http://kalinovsky-k.narod.ru/b/kartoh/02.htm> (06.01.2015.).



20. *Лавдаренко Л. И.* Функция следователя в российском уголовном процессе (проблемы реализации, перспективы развития). Автореф. дисс. ... канд. юрид.наук. М.: 2001.
21. *Маджитов А.* Депонирование доказательств защиты на стадии расследования. [http://skachate.ru/pravo/107376 / index.html](http://skachate.ru/pravo/107376/index.html)(12.08.2014).
22. *Михайловская И.Б.* Настольная книга судьи по доказыванию в уголовном процессе. М.: Проспект, 2006.
23. *Нажимов В. П.* Психологические основы учения об уголовно-процессуальных функциях. Правоведение. 1983. № 5.
24. *Олисов Р. Ю.* Соотношение процессуальной самостоятельности следователя и прокурорского надзора в отечественном досудебном производстве. Автореф. дисс. ... канд. юрид.наук. Нижний Новгород, 2006.
25. *Османова Н.В.* Институт подследственности в досудебном уголовном производстве. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2013.
26. *Петрухин И.Л.* Теоретические основы реформы уголовного процесса в России. Ч. 1. М.: 2004.
27. *Попова Т. Ю.* Уголовно-процессуальный статус руководителя следственного органа. Изд. Юрлитинформ, 2013.
28. *Савицкий В. М.* Государственное обвинение в суде. М.: Наука, 1971.
29. *Селютин А. В.* Проблемы разграничения подследственности в уголовном процессе. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2000.
30. *Смирнов А. В.* О процессуальной независимости следователя, защитника и обеспечении законных интересов личности в уголовном процессе. Предварительное следствие в условиях правовой реформы: Сб. науч. тр. Ред. В.С. Шадрин. Волгоград: ВСИ МВД СССР, 1991.
31. *Строгович М. С.* Право обвиняемого на защиту и презумпция невиновности. Под ред. Савицкий В.М. М.: Наука, 1984.
32. *Томин В.Т.* Насущные проблемы современной отечественной уголовной юстиции. Уголовный процесс России. Проблемные лекции: учебное пособие (для студентов высших юридических учебных заведений) / Науч. ред. В.Т.Томин,

- А.П.Попов и И.А.Зинченко. Пятигорск: Изд., «РИА-КМВ» 2014.
33. *Францифоров Ю.В.*, Ванин Д.В. Функциональное назначение деятельности следователя и его полномочия в состязательном уголовном процессе. Изд. Юрлитинформ. М.: 2013.
  34. *Химичева Г.П.* Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности. М.: Экзамен, 2003.
  35. *Шадрин В. С.* Обеспечение прав личности и предварительное расследование в уголовном процессе. Государство и право 1994. № 4.
  36. *Шейфер С. А.* Досудебное производство в России: этапы развития следственной, судебной и прокурорской власти. М.: Изд. НОРМА, 2013.
  37. *Шейфер С. А.* Российский следователь - исследователь или преследователь. Российская юстиция. 2010. № 11. [http://www.juristlib.ru/book\\_9738.html](http://www.juristlib.ru/book_9738.html) (31.12.2014.).
  38. *Шестакова С. Д.* Генезис метода российского уголовно-процессуального права в условиях конвергенции и дивергенции в англосаксонской и континентальной правовых систем: Теоретико-правовое исследование. Автореф. дисс. ... док. юрид. наук. СПб., 2004.





**ԱՍՈՂԻԿ**

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)